3	Կենսաբանական անվտանգության մասին կարթագենյան արձանագրություն (Կարթեգենյա, 2000)	2004	2000	2004	
4	Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք, 1992)	1994	1992	1993	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1993 թ
5	Կիոտոյի արձանագրություն (Կիոտո, 1997)	2005	1997	2002	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1993 թ
6	Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին կոնվենցիա (ժնև, 1979)	1997	1979	1996	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997 թ
7	ՄԱԿ-ի ԵՏՀ «Անդրսահմանյան համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիա (Էսպո, 1991թ.)	1997	1991	1996	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997 թ



N	Կոնվենցիա կամ արձանագրություն. ընդունման օրն ու վայրը	Ուժի մեջ մտել է	Ստորագրվել է	Վավերացվել է	Մեկնաբանություն
	«Ռազմավարական Էկոլոգիական գնահատման մասին» արձանագրություն (Կիև 2003թ.)	2011	2003	2010	
8	ՄԱԿ-ի ԵՏՀ «Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցության մասին» կոնվենցիա (Յելսինկի, 1992թ.)	1997	1992	1996	Վերագրան ցվել է ՄԱԿ-ում 1997 թ
	Աղտոտիչների արտանետման և տեղափոխման ռեգիստրների մասին արձանագրություն (Կիև, 2003)		2003		
9	Անապատացման դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի կոնվենցիա (Փարիզ, 1994)	1997	1994	1997	Վերագրան ցվել է ՄԱԿ-ում 1997 թ
10	Վտանգավոր թափոնների անդրսահմանային վերահսկման և դրանց տեղափոխման նկատմամբ հսկողության սահմանման մասին կոնվենցիա (Բազել, 1989)	1999	1989	1999	Վերագրան ցվել է ՄԱԿ-ում 1999 թ
11	Օզոնային շերտի պահպանության մասին կոնվենցիա (Վիեննա, 1985)	1999	1985	1999	Վերագրան ցվել է ՄԱԿ-ում 1999 թ
	Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին Մոնրեալի արձանագրություն (Մոնրեալ, 1987)	1999	1987	1999	Վերագրան ցվել է ՄԱԿ-ում 1999 թ
12	ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրիուս 1998թ.)	2001	1998	2001	



N	Կոնվենցիա կամ արձանագրություն. ընդունման օրն ու վայրը	Ուժի մեջ մտել	Ստորագրվել է	Վավերացվել է	Մեկնաբանություն
13	Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի կիրառման մասին կոնվենցիա (Ռոտտերդամ, 1998)	2003	1998	2003	
14	ՄԱԿ-ի ԵՏՀ «Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցության մասին» կոնվենցիա (Յելսինկի, 1992թ.)	1997	1992	1996	
	Ձրի և առողջության մասին արձանագրություն (Լոնդոն, 1999)				Վավերացման գործընթացում է
15	Կայուն օրգանական աղտոտիչների մասին Ստոկհոլմի կոնվենցիա (Ստոկհոլմ, 2001)	2004	2001	2003	
16	Շրջակա միջավայրի փոխակերպման տեխնիկական միջոցների ռազմական կամ այլ կարգի թշնամական օգտագործումն արգելելու մասին կոնվենցիա (ժնև, 1976)	2002	1976	2001	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 2002 թ
17	Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենսիա, 2000)	2004	2000	2004	
18	Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին կոնվենցիա (Փարիզ, 1972)	1993	1972	1993	Որպես իրավահաջորդ անդամակցվել է ՀՀ ԱԳՆ պահանջով, 1993 թ.



N	Կոնվենցիա կամ արձանագրություն. ընդունման օրն ու վայրը	Ուժի մեջ մտել է	Ստորագրվել է	Վավերացվել է	Մեկնաբանություն
19	Էներգետիկ կանոնադրության պայմանագիր (Լիսաբոն, 1994 թ.)		1994		
	Էներգախնայողության և հարակից բնապահպանական ասպեկտների վերաբերյալ Էներգիայի կանոնադրության արձանագրություն (Լիսաբոն, 1994)		1994		
20	Բեռնի կոնվենցիա- Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին Եվրոխորհրդի կոնվենցիա (Բեռն, 1979)	2008	1979	2008	

## 2.4 ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅԱԼՁՆԵՐ

Հյուսիս-հարավ մայրուղու Տրանշ 4 Արտաշատ-Սիսիան հատվածի կառուցման համար անհրաժեշտ բնապահպանական թույլտվությունները, համաձայնագրերը, եզրակացությունները, ներառյալ դրանք տրամադրող մարմինները և թույլտվությունների ստացման մոտավոր ժամանակները ամփոփված են Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2: Բնապահպանական թույլտվություններ, համաձայնություններ, եզրակացություններ

Թույլտվությունների, համաձայնությունների, եզրակացությունների անվանումը	Տրամադրող մարմին	Ստացման ժամանակը
Բնապահպանական փորձաքննության եզրակացություն	ՀՀ ՇՄՆ-այն ներքո Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն ՊՈԱԿ	Նախագծման փուլում
Տեխնիկական փորձաքննության եզրակացություն	Լիցենզավորված կազմակերպություն	Նախագծման փուլում



Թույլտվությունների, համաձայնությունների, եզրակացությունների անվանումը	Տրամադրող մարմին	Ստացման ժամանակը
Շինարարության լիցենզիա	Քաղաքաշինության կոմիտե	Նախագծման փուլից հետո, նախքան միցույթը
Պետական ճանապարհային ոստիկանության թույլտվություն	ՀՀ ճանապարհային ոստիկանություն	Նախագծման փուլում: Երթևեկության կառավարման պլանը պետք է հաստատվի նախքան շինաշխատանքների մեկնարկը իրականացման փուլի ընթացքում յուրաքանչյուր նհատվածի համար:
Շինարարության թույլտվություն	Համապատասխան հանձնաժողովի ղեկավար	Նախքան շինարարությունը
Վարձակալության պայմանագիր կամ սեփականության փաստաթղթեր շինհրապարակի համար	Սեփականատեր	Նախքան շինհրապարակի հիմնումը
Հանքավայրի լիցենզիա *	Տնտեսական գարգացման ներդրումների նախարարություն	Շինարարության փուլում
Շինանյութերի ձեռքբերման համար փաստաթղթեր (ինչպիսին են՝ խիճը, կոպիճը, ցեմենտը, ավազը, և այլն)	Լիազոր վաճառող	Շինարարության փուլում շինանյութերի ձեռքբերման համար



Թույլտվությունների, համաձայնությունների, եզրակացությունների անվանումը	Տրամադրող մարմին	Ստացման ժամանակը
Տեխնիկական անվտանգության փորձաքննության բաժնի եզրակացություն	Արտակարգ իրավիճակների նախարարություն	Շինարարության փուլում (պահանջվում է որոշ տեսակի ծանր տեխնիկայի, տեխնոլոգիական գործընթացների համար, որոնց համար անհրաժեշտ են կոմպրեսոր կամ կոմպրեսորային կայաններ, վառելիքի պահեստավորում, և այլն)
Առավելագույն թույլատրելի արտանետման թույլտվություն	Շրջակա միջավայրի նախարարություն	Շինարարության փուլում
Շինարարական թափոնների հեռացման պայմանագիր	Համապատասխան հանձնաժողովի ղեկավար	Շինարարության փուլում, նախքան թափոնների կուտակումը
Թափոնների ու վտանգավոր նյութերի համար հեռացման պայմանագիր	Շրջակա միջավայրի նախարարություն	Շինարարության փուլում, նախքան վտանգավոր նյութերի ու թափոնների կուտակումը

\* Շինանյութերի ձեռքբերման դեպքում, քարհանքի սեփականատերը պետք է վավեր թույլտվություն ունենա ՀՀ տարածքային կառավարման եվ ենթակառուցվածքների նախարարությունից

Բոլոր նշված թույլտվությունները համապատասխանում են ծրագրի իրականացմանը, սակայն որոշները կարող են չպահանջվել՝ կախված աշխատանքի բնույթից ու դրանց կազմակերպումից (օրինակ՝ կապալառուն չպետք է հանքարդյունաբերության լիցենզիա ունենա, եթե խիճը ձեռք է բերվելու, սակայն այն արտադրող կազմակերպությունը պետք է ունենա վավեր հանքարդյունաբերության լիցենզիա):

## 2.5 ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

### Կառավարման խորհուրդ

Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Կառավարման խորհուրդը ղեկավարվում է վարչապետի կողմից: Դրա կազմում են Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության երկու ներկայացուցիչ, Տարաքային կառավարման և ենթակառուցվածքների





Նախարարության երկու ներկայացուցիչ և մեկական ներկայացուցիչ հետևյալ հաստատություններից՝ Արդարադատության նախարարություն, Ֆինանսների նախարարություն, Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե: Կառավարման խորհրդի հիմնական գործառույթները ներառում են ԲՖԳ ծրագրի իրականացման քաղաքականության և ռազմավարական ուղղվածության համակարգումը՝ վերահսկելով և գնահատելով վերջինիս կատարումը և համակարգելով այլ արտաքին աջակցող ընկերությունների հետ: Կառավարման խորհուրդը կազմակերպում է կանոնավոր կերպով հանդիպումներ նվազագույնը ամիսը մեկ անգամ:

### Գործադիր մարմին

Գործադիր մարմինը (ԳՄ) ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունն է: ՏԿԵՆ-ն գործադիր մարմին է, որը մշակում և իրականացնում է ՀՀ կառավարության տրանսպորտի և կապի ոլորտներին առնչվող քաղաքականությունը: ԳՄ-ն կիրականացնի Ծրագրի իրականացման և վարկի մարման վերահսկողություն:

### Իրականացնող մարմին

ՏԿԵՆ-ն հիմնել է ճանապարհային Դեպարտամենտ ՊՈԱԿ-ը՝ ծրագրի ամենօրյա համակարգումը, իրականացումը, մոնիտորինգը և վարչական գործառույթները կառավարելու համար: ԾԻԿ-ը ներառում է շրջակա միջավայրի վրա ազդեցության կառավարման և սոցիալական ազդեցության կառավարման ծառայություններ, որի կազմում ներգրավված են սոցիալական ազդեցության ու տարաբնակեցման հարցերի համակարգող-մասնագետ, բնապահպանության և սոցիալական հարցերի մասնագետներ, ովքեր պատասխանատու են «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ծրագրի» բնապահպանական և սոցիալական ոլորտների կառավարման համար և պետք է ապահովեն վերջինիս իրականացումը՝ համաձայն ՀՀ օերնսդրությանը և դոնոր կազմակերպությունների երաշխիքների քաղաքականությանը, ինչպես օրինակ՝ ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականությանը:

### Նախագծող ինժեներ

Ինժեների հիմնական պարտավորությունները ներառում են՝

- (i) պատրաստել Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) նախագծային տարբերակը կամ Շրջակա միջավայրի նախնական ուսումնասիրության (ՇՄՈԻ) հաշվետվությունը (եթե կիրառելի է) Բնապահպանական կառավարման և մոնիտորինգի համապատասխան պլանի հետ միասին (ԲԿՊ), ինչպես նաև այլ պահանջվող փաստաթղթեր,
- (ii) թարմացնել կամ պատրաստել Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) վերջնական տարբերակը կամ Շրջակա միջավայրի նախնական ուսումնասիրության (ՇՄՈԻ) հաշվետվությունը, եթե կիրառելի է, Բնապահպանական կառավարման և մոնիտորինգի համապատասխան պլանի հետ միասին (ԲԿՊ), ինչպես նաև այլ պահանջվող փաստաթղթեր,



- (iii) ներկայացնել ՇՄԱԳ/ՇՄՆՈՒ, ԲԿՊ (եթե կիրառելի է) նախագծային և վերջնական տարբերակները գործադիր մարմնի (ՏԿԵՆ), իրականացնող մարմնի (ՀՀԾՄՆ ԾԻԿ) և ԵԶԲ-ի դիտարկմանն ու հաստատմանը,
- (iv) դիմել ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցությունների փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ և (եթե անհրաժեշտ է) ձեռք բերել դրական եզրակացություն ՇՄԱԳ/ՇՄՆՈՒ հաշվետվության և ԲԿՊ վերաբերյալ՝ ըստ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի (ներառյալ՝ ՀՀ կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարության հետ համաձայնությունը ծրագրի/օտարման գոտու վերաբերյալ),
- (v) մշակել տեխնիկական մասնագրերը՝ հիմնվելով ԲԿՊ-ում սահմանված մեղմացնող միջոցառումների վրա և ներառել բնապահպանական դրույթները մրցութային և պայմանագրային փաստաթղթերի հատուկ պայմաններում:

**Տեխնիկական վերահսկողության ինժեներ**

Շինարարության ընթացքում տեխնիկական վերահսկողության ինժեների հիմնական առաջադրաքնները կընդգրկեն հետևյալ հիմնական գործողությունները.

- (i) Ծրագրի շինարարական աշխատանքների տեխնիկական վերահսկողություն և մոնիտորինգ՝ ներառյալ աշխատանքային տեղամասին հատուկ ԲԿՊ,
- (ii) 2. ապահովել ծրագրին առնչվող բոլոր աշխատանքների իրականացումը նախագծին և մասնագրերին լիարժեք համապատասխանությամբ և հետևելով միջազգային ինժեներիայի և որակի ստանդարտներին,
- (iii) 3. կառավարել պայմանագրի փոփոխությունները, կապալառուի պահանջները և վերանայումների շրջանակը,
- (iv) 4. մոնիտորինգի ենթարկել ծրագրի իրականացումը, օգուտները և ապահովել համապատասխանությունը սոցիալական բոլոր պահանջներին, ապահովել տարաբնակեցման ու բնապահպանական պահանջների, ճանապարհային անվտանգության և մոնիտորինգի իրականացումը՝ համաձայն համապատասխան անվտանգության փաստաթղթերի, ԱԶԲ-ի Անվտանգության քաղաքականության և ՀՀ գործող օրենսդրության,
- (v) 5. փոխգործակցել ՀՀ կառավարության և քաղաքային իշխանությունների, Ծրագրի կառավարման խորհրդատուների, ՀԿ-ների, քաղաքացիական հասարակության, ինչպես նաև ծրագրի իրականացմամբ հետաքրքրված այլ շահառուների հետ՝ պատշաճ խորհրդակցություններ/հանրային լսումներ իրականացնելու նպատակով,
- (vi) 9. ապահովել շինարարության Կապալառուի կողմից մանրամասն ՏԲԿՊ-ի պատրաստումը,
- (vii) 10. լուծումներ առաջարկել ԲԼՄ-ի շրջանակներում,
- (viii) 11. թերությունների վերացման ժամանակահատվածում կատարել երկու այց,
- (ix) 12. հաշվետվություն ներկայացնել ԾԻԿ-ին:



## Կապալառուներ

Կապալառուների հիմնական պարտավորությունները թվարկված են, սակայն սահմանափակված չեն ստորև բերվածով՝

- (i) Կապալառուն պետք է մշակի տեղամասային բնապահպանական կառավարման պլաններ (ՏԲԿՊ)՝ հիմնվելով սույն ՇՄԱԳ հաշվետվության և ԲԿՊ-ի վրա՝ որպես աշխատանքային շինարարական փաստաթուղթ և անհրաժեշտության դեպքում թարմացնի ՏԲԿՊ-ն շինարարության ընթացքում՝ ստանալով Ինժեների հաստատումը թարմացված մասի վերաբերյալ,
- (ii) վարձել բնապահպանության մեկ մասնագետ և մեկ առողջապահության և անվտանգության մասնագետ, ինչպես սահմանված է մրցութային փաստաթղթերում, ինչպես նաև վարձել հնագետի ծառայություններ,
- (iii) ՏԲԿՊ իրականացում որպես պայմանագրի հատուկ պայմանների մաս, ԲԿՊ-ի, ներառյալ՝ մոնիտորինգի տարբեր բաղադրիչների իրականացումը համակարգել Ինժեների հետ,
- (iv) արտակարգ իրավիճակների և պատահարների դեպքում անհապաղ ծանուցել Ինժեներին և համապատասխան մարմիններին,
- (v) համապատասխան մարմիններից թույլտվությունների և հաստատումների ձեռքբերում և դրանց օրինակների տրամադրում Ինժեներին,
- (vi) ԲԿՊ-ի իրականացման վերաբերյալ հաշվետվություն, ինչպես նշված է հավելված 2-ում:

## Եվրասիական զարգացման բանկ

ԵԶԲ-ն կարող է իրականացնել ծրագրի պարբերական դիտարկումներ, ստուգումներ՝ ծրագրի շրջափուլի ընթացքում՝ վերահսկելով սկզբունքների և պահանջների համապատասխանությունը, որոնք ներառված են ԱԲՓ 2009 թ.-ում: ԵԶԲ-ն կաջակցի ԾԻԿ-ին՝ սոցիալական և բնապահպանական ազդեցություններն ու ռիսկերը կառավարելիս և կնպաստի ներդրումների երկարաժամկետ կայունությանը: Այս նպատակով ԵԶԲ-ն պետք է միջոցներ ձեռնարկի, որպեսզի ծրագրի նախապատրաստման և իրականացման ընթացքում ԾԻԿ-ը հետևի ԵԶԲ-ի սոցիալական և բնապահպանական երաշխիքների պահանջներին:

ԵԶԲ-ն նաև կաջակցի ծրագրի մասին տեղեկությունների հրապարակմանը՝ կայքում տեղադրելով ՇՄԱԳ հաշվետվության և ԲԿՊ-ի անգլերեն տարբերակները:

Ստորև թվարկված են այն պարտականությունները, որոնք ԵԶԲ-ն պետք է իրականացնի ծրագրի տարբեր փուլերում:

## Նախաշինարարական փուլ.



- (i) դիտարկում է ծրագրի ստուգման արդյունքները և հաստատում ծրագրի դասակարգումը,
- (ii) դիտարկում և հաստատում է ՇՄՆՈՒ-ն՝ անառարկելիության հիմունքներով,
- (iii) ԵԶԲ-ի կայքէջում հրապարակում է ՇՄՆՈՒ/ՇՄԱԳ-ը:

**Շինարարության փուլ.**

- (iv) դիտարկում է կիսամյակային հաշվետվությունները և ԾԻԿ-ին տրամադրում անհրաժեշտ խորհրդատվություն,
- (v) իրականացնում է տարեկան բնապահպանական դիտարկման երկու առաքելություն «A» կատեգորիայի ծրագրի համար և մեկ առաքելություն՝ «B» կատեգորիայի ծրագրի համար:

**Հետշինարարական փուլ.**

- (vi) իրականացնում է հետշինարարական աուդիտ:

Տրանշ 4՝ Քաջարան – Ագարակ մոտ 45 կմ ճանապարհային հատվածի ծրագրի իրականացմանը կարող են ներագրավվել ստորև նշված պետական մարմինները՝ համապատասխան դերակատարությամբ.

**Շրջակա միջավայրի նախարարություն**

ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը (ՇՄՆ) պատասխանատու է Հայաստանի բնական ռեսուրսների պահպանության, կայուն օգտագործման, վերականգնման, ինչպես նաև ՀՀ շրջակա միջավայրի բարելավման համար: Այդ ոլորտներում ՇՄՆ լիազոր մամինները վերահսկում են ազգային քաղաքականության, շրջակա միջավայրի չափորոշիչների և ուղենիշների զարգացումը և դրանց կիրառումը: ՇՄՆ-ն այս գործառնություններն իրականացնում է իր կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով:

ՇՄԱԳ գործընթացը և ԲԸՏՄ-ի՝ ստուգման ենթարկելու իրավասությունն այն հիմնական գործիքներն են, որոնք կիրառվում են ՇՄՆ-ի կողմից՝ շրջակա միջավայրի պահպանության սկզբունքներին համապատասխանությունն ապահովելու համար: Կարևոր կանոնակարգերին համապատասխանելու և ՇՄՆ կողմից դրական գնահատման եզրակացություն ձեռք բերելու նպատակով ՇՄԱԳ-ը պետք է պատրաստվի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և փորձագետի փորձաքննության (2014թ. հունիսի 22) համաձայն, և շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ օրենսդրական դրույթները պետք է համապատասխանաբար հաշվի առնվեն:

2014 թ.-ին ընդունված ՀՀ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին Նոր օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ «չորս կամ ավելի երթևեկության գոտիներով կամ ճանապարհների կառուցում կամ վերակառուցում կամ առավելագույնը 2-4 գոտիներով ճանապարհների բարելավում» ներառող «A» կատեգորիայի ծրագրերի համար պետք է պատրաստվի



ՇՄԱԳ հաշվետվություն և ներկայացվի ՇՄՆ-ին՝ փորձաքննության համար:

ՇՄՆ-ն նաև ՀՀ տարածքում թափոնների կառավարման իրավասու պետական մարմինն է: «Թափոնների մասին» օրենքի հոդված 8-ը (24.11.2004 թ.) սահմանում է բնապահպանական սեկտորի պատասխանատու մարմիններին: ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը՝ որպես թափոնների կառավարման իրավասու պետական մարմին, բնապահպանության ոլորտում լիազորված է իրականացնել հետևյալ առաջադրանքներն ու պարտականությունները.

- (i) ոլորտի համար մշակել պետական քաղաքականություն և ապահովել դրա իրականացումը,
- (ii) համակարգել պետական իրավասու մարմինների գործունեությունը թափոնների կառավարման ոլորտում,
- (iii) ապահովել սակավաթափոն տեխնոլոգիաների, թափոնների հավաքման և վերամշակման տնտեսական խթանների համակարգ,
- (iv) հաստատել թափոնների տեղավորման չափաքանակներ՝ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար,
- (v) հաստատել տարածքներ թափոնների կառավարման օբյեկտների տեղակայման համար,
- (vi) ապահովել թափոնների հաշվառման, գոյացման, հեռացման (վերացում, վարակազերծում, տեղավորում) և վերամշակման ընթացակարգ,
- (vii) ապահովել վտանգավոր թափոնների վերամշակման, վարակազերծման, պահեստավորման, տեղափոխման և տեղավորման գործողությունների իրականացման արտոնագրի տրամադրման ընթացակարգ, ինչպես նաև այդ գործողությունների իրականացման իրավունք տալ,
- (viii) կազմել վգտանգավոր և արգելված թափոնների ցանկ,
- (ix) ապահովել թափոնների անդրսահմանային փոխադրումների և հեռացման ընթացակարգ,
- (x) ապահովել կառույցներ՝ վարակազերծված և ոչ վերամշակելի թափոնների համար,
- (xi) իրականացնել միջազգային համագործակցություն թափոնների կառավարման ոլորտում,
- (xii) իրականացնել օերնքով նախատեսված այլ լիազորություններ:

**Տարածքային կառավարման եվ ենթակառուցվածքների նախարարություն**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը գործադիր իշխանության կենտրոնական մարմին է, որը մշակում և իրականացնում է ՀՀ կառավարության քաղաքականությունը տարածքային կառավարման և ենթակառուցվածքների կառավարման ոլորտում: Նախարարությունն ապահովում է Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի իրականացումը:

Մարզպետարանները (մարզային կառավարման մարմինները) պատասխանատու են տարածաշրջանային իրավասության տակ գտնվող հանրային ենթակառուցվածքների կառավարման համար: Տեղական ինքնակառավարման մարմինները (համայնքները) պատասխանատու են համայնքների սեփականություն գրանցված տեղական նշանակության հասարակական





ենթակառուցվածքների կառավարման համար:

ՀՀ կառավարության ներսում կառուցվածքային փոփոխություններից հետո Էներգետիկայի և բնական պաշարների նախկին նախարարությունը միացվել է տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, ուստի Էներգետիկայի ոլորտում ՀՀ կառավարության քաղաքականության մշակման և իրականացման պատասխանատվությունն այժմ կրում է նաև տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից: Նախարարությունը նաև պատասխանատու է բնական ռեսուրսների պաշտպանության, կայուն օգտագործման և վերականգնման համար և իր գործառույթներն իրականացնում է իր համապատասխան գերատեսչությունների միջոցով:

«Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ը նախարարության հիմնական կառույցն է, որն ապահովում է ՀՀ տրանսպորտային ոլորտի ծրագրերի, այդ թվում տրանսպորտի ոլորտի զարգացման ծրագրերի արդյունավետ իրականացումը, հաստատված Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և ՀՀ կառավարության կողմից, ինչպես նաև այն ծրագրերի իրականացումը, որոնք մշակվել են պետությունների և միջազգային վարկային կազմակերպությունների կողմից: Հայաստանի Հանրապետությանը տրամադրված միջոցների հաշվին, ներառյալ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացումը:

**Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմին**

Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմինը ստեղծվել է «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի հիման վրա` ՀՀ շրջակա միջավայրի նախարարության տեսչության և ՀՀ լեռնահանքային տեսչության վերակազմավորման արդյունքում: Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը (այսուհետ` տեսչական մարմին) Կառավարությանը ենթակա` վերահսկողություն և օրենքով սահմանված այլ գործառույթներ իրականացնող պետական մարմին է, որն օրենքով սահմանված կարգով կիրառում է պատասխանատվության միջոցներ բնապահպանության և ընդերքի բնագավառներում հանդես գալով Հայաստանի Հանրապետության անունից:

**Կրթության, գիտության, մշակույթի եվ սպորտի նախարարություն**

ՀՀ կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարությունը (ԿԳՍՍ) գործադիր իշխանության կենտրոնական մարմին է, որը մշակում և իրականացնում է ՀՀ կառավարության քաղաքականությունը կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ոլորտներում: ԿԳՍՍ-ն իրավասություն ունի հնագիտական, պատմական և մշակութային վայրերի նկատմամբ: ԿԳՍՍ-ին առընթեր պատմամշակութային հուշարձանների պահպանության վարչությունը պատասխանատու է հնագիտական / մշակութային արժեքներ ունեցող հուշարձանների պահպանության, ինչպես նաև հուշարձանների պատմամշակութային անշարժ խմբերի, հուշարձանների համալիրների, բնական և պատմական միջավայրերի, պատմական -մշակութային հողերը և հարակից լանդշաֆտները, որոնք





համարվում են պետական սեփականություն:

**Առողջապահության նախարարություն**

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է առողջապահության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը: ՀՀ առողջապահության նախարարության Կառավարությանը ենթակա առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը պատասխանատու է հետևյալ գործողությունների համար՝ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, բժշկական օգնության և սպասարկման, դեղերի շրջանառության, աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտներում ռիսկերի կառավարում և Հայաստանի Հանրապետության օրենքների ու այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումների իրականացումը բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, բժշկական օգնության և սպասարկման, դեղերի շրջանառության, աշխատողների անվտանգության ապահովման, առողջության պահպանման և աշխատանքային հարաբերությունների կարգավորման ոլորտներում:

**Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե**

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն գործադիր իշխանության մարմին է, որը մշակում և իրականացնում է անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:

**3. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ/ՏԵԽՆԻԿԱԿԱՆ Ժ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ**

**3.1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման այս զեկույցը պատրաստվել է Քաջարան-Ագարակ ճանապարհահատվածի համար՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի՝ Տրանշ 4-ի շրջանակներում: Նախքան շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատում սկսելը, իրականացվել է իրագործելիության ուսումնասիրություն և լրացվել է շրջակա միջավայրի արագ գնահատման ստուգաթերթիկը՝ բացահայտելու համար շրջակա միջավայրի և սոցիալական խնդիրները, որոնք պետք է հաշվի առնվեն նախագծերը պատրաստելիս և շրջակա միջավայրի ու սոցիալական ազդեցությունների վերլուծության ժամանակ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նախագծի պատրաստումը համաձայն ԱԶԲ անվտանգության քաղաքականության հայտարարության (2009 թ. Հունիս), ԱԶԲ և ԵԶԲ այլ





համապատասխան ձեռնարկների / ուղեցույցների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենսդրության և ուղեցույցների (ներառյալ շրջակա միջավայրի կառավարման ծրագրի նախագիծը) հիմնված է նախնական նախագծի վրա:

Ծրագրի տարածքի բնապահպանական և սոցիալական ելակետային պայմանները փաստագրվել են նախագծի հետ կապված փաստաթղթերի, այդ թվում՝ նախագծող թիմի կողմից տրամադրված տեղեկատվության, ինչպես նաև քննարկումների, այցելությունների, գրականության ակնարկների և տվյալների հետազոտության միջոցով: Ծրագրի թիմը ներառում է բնապահպանական և սոցիալական ոլորտի խորհրդատուներ՝ նախագծման թիմի հետ աշխատելու, բնապահպանական և սոցիալական տվյալներ հավաքելու և վերանայելու, բնապահպանական և սոցիալական բնագավառում գործընթաց իրականացնելու, բնապահպանական և սոցիալական վերլուծություններ իրականացնելու համար, և շրջակա միջավայրի կառավարման ծրագրի նախագծով մշակելու շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նախագիծ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման այս զեկույցի նախագիծը, որը նկարագրում է ծրագրում առաջարկվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները և Հայաստանում Քաջարան-Ագարակ ճանապարհահատվածի մեղմացման միջոցառումները, պատրաստվել է «Այ.Ար.Դի. Էնջինիըրինգ» Ս.ր.լ. – «ԳՓ Էնջինիըրինգ» Ս.ր.լ. ընկերությունների կողմից:

### 3.2 ԾՐԱԳՐԻ ՏԵՂԱԼՔԸ


**Տրանշ 4-ի Քաջարան-Ագարակ ճանապարհահատվածը (M2 ճանապարհի Քաջարան-Ագարակ հատված՝ 328+600 կմ-ից 384+000 կմ) ամենահարավային հատվածն է, որը Քաջարանից ձգվում է դեպի Իրանի սահման:**

Ծրագիրը բաղկացած է երկու մասից (Մաս/Լոտ 1 և Մաս/Լոտ 2)՝ ընդհանուր մոտ 45 կմ երկարությամբ.

- Մաս 1, որը ներառում է մոտ 21 կմ (5կմ+16կմ) երկարությամբ ճանապարհ Ագարակից Վարդանիձոր և 11 կմ երկարությամբ ճանապարհ Վարդանիձորից դեպի թունելի ելք:
- Մաս 2, որը ներառում է մոտ 7 կմ ճանապարհ թունելի մուտքից դեպի Քաջարան, և մոտ 6 կմ երկարությամբ թունել և իջատեղերի ճանապարհներ:

Քաջարան-Ագարակ ճանապարհահատվածը հիմնականում տեղակայված է կիրճում (ինչպես ցուցադրված է ստորև (Պատկեր՝ 3).





Պատկեր 2: Քաջարան-Ագարակ ճանապարհատվածի ստորաբաժանում



Պատկեր 3: Ճանապարհի ծրագիծ

### 3.3 ՏՐԱՆՇ 4-Ի ՔԱՋԱՐԱՆ-ԱԳԱՐԱԿ ԾԱՆԱԴԱՐՅԱՐԱՏՎԱԾԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Առաջարկվող նախագիծը ներառում է M2 ճանապարհի Ագարակ-Քաջարան (328+600 կմ-ից 384+000 կմ) հատվածի մանրամասն նախագծային փաթեթի կազմում:



Գոյություն ունեցող ճանապարհը Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ամենահարավային հատվածում է և տեղակայված լեռնային տեղանքում կտրուկ/զառիթափ թեքություններով (12-20°):

Ծրագրի ընդհանուր երկարությունը մոտ 45 կմ է.

- մոտ 21 կմ Ագարակից Վարդանիձոր,
- մոտ 11 կմ Վարդանիձորից թունելի ելք (Մաս 1),
- մոտ 7 կմ թունելի մուտքից Քաջարան,
- մոտ 6 կմ թունել և իջատեղերի ճանապարհներ (Մաս 2):

Ճանապարհը նախատեսվում է կառուցել ասֆալտբետոնե ծածկով (առաջարկված նախագծի համաձայն), 100 կմ/ժ հաշվարկային արագությամբ, որը բաղկացած կլինի գոյություն ունեցող երկու երթևեկելի գոտիով ճանապարհի (379+000կմ – 384+000 կմ, մոտ 5կմ) բարեկարգված և լայնացված հատվածից և երկու երթևեկելի գոտիով, կամուրջներով և թունելով նոր ճանապարհահատվածից:

Բացի այդ աշխատանքները ներառում են նոր ճանապարհը գոյություն ունեցող M2 ճանապարհին, համայնքներին և ըստ անհրաժեշտության, տեղի բիզնեսներին միացնող հատումների (խաչմերուկների) նախագծում:

45 կմ երկարությամբ այս ճանապարհահատվածը Սիսիան-Քաջարան 60 կմ ճանապարհահատվածի շարունակությունն է:

Ծինարարական աշխատանքները կիրականացվեն 32 կմ ճանապարհահատվածին՝ Ագարակից Վարդանիձոր մոտ 21 կմ (5 կմ գոյություն ունեցող ճանապարհի լայնացում+16 կմ նոր ճանապարհ) և մոտ 11 կմ Վարդանիձորից թունելի ելք:

Աշխատանքները նաև ներառում են ճանապարհին հանդիպակաց գոյություն ունեցող ենթակառուցվածքների հետազոտություններ և ուսումնասիրությունները, որոնք կարող են խոչընդոտել շինարարական աշխատանքները կամ հետագայում նոր ճանապարհի շահագործումը:

Հաշվի առնելով երթևեկությունը՝ Քաջարան-Ագարակ ճանապարհային հանգույցը կարելի է դասել որպես երկրորդ կարգի ճանապարհ: Այնուամենայնիվ, Հյուսիս-հարավ միջանցքը նույնպես Ասիական մայրուղիների ցանցի մաս է (AH 82), որտեղ առաջիկայում երթևեկության ինտենսիվությունը կավելանա:

Ճանապարհի հատվածի նոր ծրագիծը կմշակվի և կկառուցվի ըստ ստանդարտների, որոնք կհանգեցնեն բարելավված ճանապարհի գծանշումների, ցուցանակների, թունելների, կամուրջների, ջրահեռացման, ջրատարների, գետնանցումների և խաչմերուկների բարելավմանը:

Ըստ նախնական նախագծի ընդհանուր առմամբ կլինեն.

- 14 կամուրջներ: 1 (կմ1+300, 150մ); 2 (կմ 2+600, 40 մ); 3 (կմ 3+500, 200 մ), 4 (կմ 13+300, 50 մ); 5 (կմ 16+900, 200 մ); 6 (կմ 17+600, 100 մ); 7 (կմ 20+200, 175 մ); 8 (կմ 20+700, 125 մ); 9 (կմ 21+200, 190 մ); 10 (կմ 22+100, 150 մ); 11 (կմ 23+700, 300 մ); 12 (կմ 35+400, 175 մ); 13 (կմ 35+900, 450 մ); 14 (կմ 37+200,



325 մ).

- 3 թունելներ: 1 (սկսած 3+700 կմ մինչև 10+600 կմ, 6975 մ); 2 (սկսած 16+300 կմ մինչև 16+700 կմ, 400 մ); 3 (սկսած 34+900 կմ մինչև 35+300 կմ, 420 մ).
- 27 ջրատարներ: 1 (կմ 1+000); 2 (կմ 13+200); 3 (կմ 13+600); 4 (կմ 13+900); 5 (կմ 14+600); 6 (կմ 14+900); 7 (կմ 15+300); 8 (կմ 15+600); 9 (կմ 15+900); 10 (կմ 16+200); 11 (կմ 17+200); 12 (կմ 17+900); 13 (կմ 18+500); 14 (կմ 18+600); 15 (կմ 18+800); 16 (կմ 19+000); 17 (կմ 19+300); 18 (կմ 19+500); 19 (կմ 20+500); 20 (կմ 21+800); 21 (կմ 22+200); 22 (կմ 23+200); 23 (կմ 32+400); 24 (կմ 32+800); 25 (կմ 33+600); 26 (կմ 33+800); 27 (կմ 34+100).

Նախնական նախագծի համաձայն իրականացվելիք աշխատանքների հիմնական քանակները ներառում են.

Փորում: 12 806 112 մ<sup>3</sup>,


Արգելապատ: 4 798 338 մ<sup>3</sup>,

Տաք ասֆալտային լիցք: 457 608 բմ


ժայռոտ տեղանքի պատճառով հողերի խտտածածկում չի նախատեսվում

Տիպային լայնակի կտրվածք 2 և 3 երթուղիների շերտերով (թունելի մուտք/ելք և ծրագրի վերջնական հատված) ցույց են տրված Պատկեր 4, 5 և 6-ում ստորև.

Typical Cross Section 2 Lanes - Տիպային լայնակի կտրվածք 2 երթուղիների շերտերով  
Քկ/Պկ 0+000 - Քկ/Պկ 1+450




Պատկեր 4: Տիպային լայնակի կտրվածք, 2 երթուղիների շերտերով



Պատկեր 5: Տիպային լայնակի կտրվածք, 3 երթևեկելի շերտ, թունելի ելք/մուտք

Typical Cross Section 3 Lanes - Տիպային լայնակի կտրվածք 3 երթևեկելի շերտ  
Pk 37+750/Պկ 37+750 - End of the project / ԾՎ



Պատկեր 6: Տիպային լայնակի կտրվածք, 3 երթևեկելի շերտ, ԾՎ

Ճանապարհի նախագիծը պատրաստվել է Կամուրջի նախագծման շենքային ծածկագիր ՌԱԻԳ 2.05.03.84-ի, Հայաստանի Հանրապետության շինարարության նորմ IV11.05.02-99-ի, Պետական նշանակության ավտոմայրուղիների և տրանսպորտի պատասխանատուների ամերիկյան ասոցիացիայի ու Եվրոպական ստանդարտների հետ համաձայնեցված. Ծրագրի կառուցվածքային տարրերը մշակվել են՝ հաշվի առնելով սեյսմիկ ակտիվության և ջրհեղեղի բարձր ռիսկը:

Կոմունալ ծառայությունների տեղափոխումները ներառում են՝

- Խմելու ջրի խողովակաշարեր
- Ռոռգման ջրանցքներ / խողովակաշարեր
- Գազատարներ
- Էլեկտրական հոսանքի գծեր



Ակնկալվում է, որ շինարարությունը կիրականացվի 5 տարվա ընթացքում:

#### 4. ԱՅԼԸՆՏՐՎԱԼՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԱԶԲ անվտանգության փաստաթուղթը (2009թ.) և հայաստանյան օրենսդրությունը պահանջում են հաշվի առնել ծրագրի իրագործելի այլընտրանքները՝ ծրագրի տեղակայվածության և նախագծի առումով՝ թույլ տալով առաջարկվող միջոցներով խուսափել կամ կանխել հավանական բնապահպանական ազդեցությունները:

«Առանց ծրագիր» այլընտրանքային տարբերակը կենսունակ չի համարվում, քանի որ ուղևորության տևողությունը երկար է և արժեքն ավելի թանկ, քան այլընտրանքային տարբերակների դեպքում, փոխադրամիջոցների արտանետումների բացասական ազդեցությունը քաղաքների (որտեղով անցնում է մայրուղին) օդի որակի վրա բարձր է և առկա են ավելի շատ անվտանգության խնդիրներ ինչպես ճանապարհից օգտվողների, այնպես էլ շարժողական խնդիրներ ունեցող անձանց համար, քան այլընտրանքային տարբերակների դեպքում: Սա հակասում է մեծ համայնքների, ինչպիսիք են Քաջարանը և Մեղրին, զարգացման ծրագրերին:

Թեև տեղի բնակիչները ազդեցության կենթարկվեն հողի օտարման և տարաբնակեցման հետևանքով, երկարաժամկետ կտրվածքում կբարելավվի շուկաների, առողջապահական հաստատությունների, վարչարարական ծառայությունների հասանելիությունը:


Ուսումնասիրության գործընթացի ժամանակ ուսումնասիրվել է 6 այլընտրանքային տարբերակ (թվագրված՝ 1-ից մինչև 6), իսկ արժեքի օպտիմալացման արդյունքում ընտրվել է միայն 2 տարբերակ՝ տեխնիկատնտեսական ուսումնասիրության այս փուլում առավել մանրամասն մշակելու համար՝ A1 և A2:




Նախնական նախագծման փուլում առաջարկվել են 2 նոր տարբերակներ՝ բացի ՏՈՒ մասում առաջարկվող տարբերակից: Պատրաստվել են նոր տարբերակներ՝ հիմնվելով ՏՈՒ արդյունքների վրա:

1. Նոր նախագիծ՝ BLUE80. Մարտ 2020
2. Նոր նախագիծ՝ CYAN100. Մարտ 2020
3. Տեխնիկատնտեսական ուսումնասիրության նախագիծ. Ապրիլ 2014

Ճանապարհի ծրագիծը և տեղանքի գտնվելու վայրը ներկայացված են Պատկեր 7-ում:





Պատկեր 7: ճանապարհի ծրագծերը ՏՈՒ-ի, BLUE 80-ի և CYAN 100-ի համար.  ՏՈՒ համար ;  BLUE 80-ի համար,  CYAN100-ի համար,  գոյություն ունեցող M2 ճանապարհի համար



Բացի առաջարկվող այլընտրանքներից, անհրաժեշտ է նաև դիտարկել «առանց ծրագիր» տարբերակը: Դա ենթադրում է ելակետային վիճակի պահպանում, ինչը կունենա հետևյալ դրական և բացասական հետևանքները.

Դրական հետևանքներ`

- Բացակայում են շինարարական երթևեկությունը և գործողությունները, որոնք կարող են բացասականորեն ազդել օդի որակի վրա
- Գործող ճանապարհի երկայնքով առկա տեղական բուսատեսակների վրա ազդեցության բացակայում
- Անջրանցիկ ճանապարհի մակերեսի կառուցման համար ջրահեռացման անհրաժեշտությունն չկա
- Ճանապարհից դեպի մակերևութային և ստորգետնյա ջրերը արտահոսքի չափավոր ռիսկի գործոն
- Մշակութային ժառանգության ոչ մի ռեսուրս ազդեցության չի ենթարկվում
- Գյուղատնտեսական նշանակության հողերի ձեռքբերում և մասնավոր գույքի օտարում / քանդում տեղի չի ունենա
- Բնապահպանական կառավարման պլանի անհրաժեշտությունն չի լինի

Բացասական հետևանքներ`

- Քաջարան-Ազարակ գոյություն ունեցող ճանապարհահատվածի և հարակից ենթակառուցվածքի հետագա վատթարացում
- Ճանապարհային ենթակառուցվածքների շահագործման և պահպանման ծախսերի ավելացում
- Սալահատակի վատթարացող վիճակի, անվտանգության տարրերի բացակայության, սողանքավտանգ գոտիների և այլնի պատճառով վթարների ավելի մեծ ռիսկ
- Տրանսպորտային միջոցների պահպանման ծախսերի բարձրացում ինչպես քաղաքացիների, այնպես էլ բեռնափոխադրողների համար, հետևաբար բեռնափոխադրման գների աճ
- Գյուղական բնակչության եկամուտների կրճատում
- Գյուղական շրջաններից միգրացիայի ավելացում
- Այլ բացասական հետևանքներ ոչ միայն Քաջարան և Մեղրի համայնքների, այլև ընդհանուր առմամբ Հայաստանի Հանրապետության համար

Ճանապարհի ծրագծի առաջարկվող 3 տարբերակների (տարբերակ 1` Տեխնիկատնտեսական ուսումնասիրություն, Տարբերակ 2` Blue 80, և Տարբերակ 3` Cyan 100) հնարավոր բնապահպանական/ սոցիալական ազդեցությունը համեմատելու նպատակով իրականացվել է ծրագրի նախնական բնապահպանական ստուգում և դասակարգում` ծրագրի տարածքի վերաբերյալ ելակետային տվյալների նախնական ուսումնասիրության միջոցով:

Այլընտրանքների համեմատական վերլուծությունը կենտրոնանում է նաև բնապահպանական (ներառյալ հնագիտական) խնդիրների և մտահոգությունների, սոցիալական խնդիրների վրա:

Առաջարկվող բոլոր 3 տարբերակները ցուցադրվում են համապատասխան` Հայաստանի օրենսդրական պահանջների («Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և



փորձաքննության մասին» ՀՀ օրենք, 2014 թ.) և Ա ԱԶԲ-ի անվտանգության քաղաքականության բանաձևի (ԱԲԲ 2009): Արդյունքները ամփոփված են Աղյուսակ 3-ում և 4-ում:

Աղյուսակ 3: ՀՀ նախնական գնահատման պահանջներ

Տարբերակ	Շրջակա միջավայրի կատեգորիա ՀՀ	Ազդեցության գնահատման հաշվետվության պահանջ	Բնապահպանական փորձաքննություն եվ ՀՀ ՇՄՆ հաստատում	Հանրային խորհրդատվություններ
Տարբերակ 1- ՏՈՒ	Ա	ՇՄԱԳ/ ԲԿՊ	Այո	4
Տարբերակ 2- BLUE80	Ա	ՇՄԱԳ/ ԲԿՊ	Այո	4
Տարբերակ 3- CYAN100	Ա	ՇՄԱԳ/ ԲԿՊ	Այո	4

Աղյուսակ 4: Այլընտրանքային տարբերակների համեմատություններ

Այլընտրանք	Կողմ	Դեմ
Առանց ծրագրի (Մ2 Երևան-Արարատ-Եղեգնաձոր-Գորիս-Կապան-Քաջարան-Մեղրի գործող ճանապարհի Քաջարան-Ագարակ հատված	<ul style="list-style-type: none"> <li>• Ոչ հավելյալ առաջացած երթևեկություն բարելավված ենթակառուցվածքի շնորհիվ</li> <li>• Բացակայում են շինարարական երթևեկությունը և գործողությունները, որոնք կարող են բացասականորեն ազդել օդի որակի վրա</li> <li>• Գործող ճանապարհի երկայնքով առկա տեղական բուսատեսակների վրա ազդեցության բացակայում</li> <li>• Անջրանցիկ ճանապարհի մակերեսի կառուցման համար ջրահեռացման անհրաժեշտություն չկա</li> <li>• Ճանապարհից դեպի մակերևութային և ստորգետնյա ջրերը արտահոսքի չափավոր ռիսկի գործոն</li> <li>• Մշակութային ժառանգության ոչ մի ռեսուրս ազդեցության չի</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Բացասական ազդեցություն այն բնակավայրերի օդի որակի վրա, որտեղով անցնում է ճանապարհը</li> <li>• Հանրային և մասնավոր տրանսպորտի ենթակառուցվածքում բարելավումներ չկա</li> <li>• Քաղաքի ծանրաբեռնված կենտրոնը չի բեռնաթափվում շրջանցիկ ճանապարհների միջոցով, ինչի արդյունքում կնվազեր ուղևորության տևողությունը, ծախսերը և փոխադրամիջոցների արտանետումները</li> <li>• Անվտանգության խնդիրներ՝ մեկ երթևեկելի մասով ճանապարհի հատվածներից օգտվողների, ինչպես նաև շարժողական խնդիրներ</li> </ul>





	<p>ենթարկվում</p> <ul style="list-style-type: none"> <li>• Ոչ մի գյուղատնտեսական նշանակության հողատարածք կամ մանավոր սեփականություն չի օտարվում/քանդվում,</li> <li>• Շինարարության ընթացքում բնապահպանական կառավարման համակարգ հարկավոր չէ</li> </ul>	<p>ունեցող անձանց համար</p> <ul style="list-style-type: none"> <li>• Պատահական գտածոների ռիսկի չափավոր մակարդակ, որը կպահանջի հնագիտական պեղումներ</li> </ul>
<p>Այլընտրանք 1 /BLUE 80/</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Ճանապարհի բարենպաստ երկրաչափական դիրքը (մեծ շառավղով կորեր, ավելի հաստատուն արագություն) բնակելի հատվածներում կնվազեցնի օդի որակի վրա ազդեցությունը</li> <li>• Բույսերի տեղական տեսակներ տնկելու հնարավորություն ճանապարհի լիցքերի տարածքներում</li> <li>• Քիչ հավանական է, որ մշակութային ժառանգության ռեսուրսները ենթարկվեն նշանակալի ազդեցության</li> <li>• Բարելավումներ հանրային տրանսպորտի ենթակառուցվածքում</li> <li>• Գյուղատնտեսական նշանակության հողերի օտարումը խիստ չափավոր է, քանի որ միջանցքը երկար թունելով անցնում է զառիթափ լանջերով և լեռնային շրջաններով</li> <li>• Ապահովել ճանապարհային անվտանգությունը պատշաճ նշաններով, արգելափակոցներով, անվտանգության պատնեշներով, ճանապարհային գծանշումներով</li> <li>• Շինարարական և շահագործման/պահպանման աշխատանքների</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Շինարարական երթևեկությունը և աշխատանքները ժամանակավոր բացասական ազդեցություն կունենան օդի որակի վրա</li> <li>• Ճանապարհն անցնում է անտառով և պահպանվող տարածքով</li> <li>• Ճանապարհից դեպի մակերևութային և ստորգետնյա ջրերը արտահոսքի չափավոր ռիսկի գործոն</li> <li>• Ճանապարհների պատնեշների, հատումների, լցնումների և տեղամասերի փոխառությունների կողմից լանդշաֆտի այլանդակման ռիսկի չափավոր (այլ տարբերակներից ցածր) մակարդակ</li> <li>• Պատահական գտածոների ռիսկի չափավոր մակարդակ, որը կպահանջի հնագիտական պեղումներ</li> </ul>



	<p>հնարավորություն տեղական աշխատուժի համար</p> <ul style="list-style-type: none"> <li>• Բարձրացնել տուրիստական վալետային կայքերի հասանելիությունը</li> <li>• Քաղաքի ծանրաբեռնված կենտրոնը բեռնաթափվում է շրջանցիկ ճանապարհի միջոցով, ինչի արդյունքում կնվազի ուղևորության տևողությունը, ծախսերը և փոխադրամիջոցների արտանետումները</li> </ul>	
<p>Այլընտրանք 2 /CYAN 100/</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Ճանապարհի բարենպաստ երկրաչափական դիրքը (մեծ շառավղով կորեր, ավելի հաստատուն արագություն) բնակելի հատվածներում կնվազեցնի օդի որակի վրա ազդեցությունը</li> <li>• Բույսերի տեղական տեսակներ տնկելու հնարավորություն ճանապարհի լիցքերի տարածքներում</li> <li>• Քիչ հավանական է, որ մշակութային ժառանգության ռեսուրսները ենթարկվեն նշանակալի ազդեցության</li> <li>• Բարելավումներ հանրային տրանսպորտի ենթակառուցվածքում</li> <li>• Գյուղատնտեսական նշանակության հողերի օտարումը խիստ չափավոր է, քանի որ միջանցքը երկար թունելով անցնում է զառիթափ լանջերով և լեռնային շրջաններով</li> <li>• Ապահովել ճանապարհային անվտանգությունը պատշաճ նշաններով, արգելափակոցներով, անվտանգության պատնեշներով,</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Շինարարական երթևեկությունը և աշխատանքները ժամանակավոր բացասական ազդեցություն կունենան օդի որակի վրա</li> <li>• Ճանապարհն անցնում է անտառով և պահպանվող տարածքով</li> <li>• Ճանապարհից դեպի մակերևութային և ստորգետնյա ջրերը արտահոսքի չափավոր ռիսկի գործոն</li> <li>• Ճանապարհների պատնեշների, հատումների, լցնումների և տեղամասերի փոխառությունների կողմից լանդշաֆտի այլանդակման ռիսկի չափավոր (այլ տարբերակներից ցածր) մակարդակ</li> <li>• Պատահական գտածոների ռիսկի չափավոր մակարդակ, որը կպահանջի հնագիտական պեղումներ</li> </ul>



	<p>ճանապարհային գծանշումներով</p> <ul style="list-style-type: none"> <li>• Շինարարական և շահագործման/պահպանման աշխատանքների հնարավորություն տեղական աշխատուժի համար</li> <li>• Բարձրացնել տուրիստական վալենտային կայքերի հասանելիությունը</li> <li>• Քաղաքի ծանրաբեռնված կենտրոնը բեռնաթափվում է շրջանցիկ ճանապարհի միջոցով, ինչի արդյունքում կնվազի ուղևորության տևողությունը, ծախսերը և փոխադրամիջոցների արտանետումները</li> </ul>	
<p>Այլընտարևք 3 /Տեխնիկական ուսումնասիրության նախագիծ/</p>	<ul style="list-style-type: none"> <li>• ճանապարհի բարենպաստ երկրաչափական դիրքը (մեծ շառավղով կորեր, ավելի հաստատուն արագություն) բնակելի հատվածներում կնվազեցնի օդի որակի վրա ազդեցությունը</li> <li>• Բույսերի տեղական տեսակներ տնկելու հնարավորություն ճանապարհի լիցքերի տարածքներում</li> <li>• Քիչ հավանական է, որ մշակութային ժառանգության ռեսուրսները ենթարկվեն նշանակալի ազդեցության</li> <li>• Բարելավումներ հանրային տրանսպորտի ենթակառուցվածքում</li> <li>• Գյուղատնտեսական նշանակության հողերի օտարումը խիստ չափավոր է, քանի որ միջանցքը երկար թունելով անցնում է զառիթափ լանջերով և լեռնային շրջաններով</li> <li>• Ապահովել ճանապարհային</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Շինարարական երթևեկությունը և աշխատանքները ժամանակավոր բացասական ազդեցություն կունենան օդի որակի վրա</li> <li>• ճանապարհն անցնում է անտառով և պահպանվող տարածքով</li> <li>• ճանապարհից դեպի մակերևութային և ստորգետնյա ջրերը արտահոսքի չափավոր ռիսկի գործոն</li> <li>• ճանապարհների պատնեշների, հատումների, լցնումների և տեղամասերի փոխառությունների կողմից լանդշաֆտի այլանդակման ռիսկի չափավոր (այլ տարբերակներից ցածր) մակարդակ</li> <li>• Պատահական գտածոների ռիսկի չափավոր մակարդակ, որը կպահանջի հնագիտական պեղումներ</li> </ul>



	<p>անվտանգությունը պատշաճ նշաններով, արգելափակոցներով, անվտանգության պատնեշներով, ճանապարհային գծանշումներով</p> <ul style="list-style-type: none"> <li>• Շինարարական և շահագործման/պահպանման աշխատանքների հնարավորություն տեղական աշխատուժի համար</li> <li>• Բարձրացնել տուրիստական վալենտային կայքերի հասանելիությունը</li> <li>• Քաղաքի ծանրաբեռնված կենտրոնը բեռնաթափվում է շրջանցիկ ճանապարհի միջոցով, ինչի արդյունքում կնվազի ուղևորության տևողությունը, ծախսերը և փոխադրամիջոցների արտանետումները</li> </ul>	
--	---	--

**Արվել են հետևյալ եզրակացությունները.**

1. ՀՀ օրենսդրության համաձայն ճանապարհի բոլոր 3 ծրագծերը դասակարգվում են Ա կատեգորիայի, որի դեպքում անհրաժեշտ է շրջակա միջավայրի վրա ազդեցության համալիր գնահատական, 2 ՇՄԱԳ/ԲԿՊ հաշվետվություն, 2-րդ կարգի բնապահպանական փորձաքննության ընթացակարգ, 4 հանրային քննարկում և շրջակա միջավայրի նախարարության հաստատումը:
2. Ըստ ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթուղթի (2009 թ.) ճանապարհի բոլոր 3 ծրագծերը դասակարգվել են շրջակա միջավայրի A կատեգորիայի, ուստի անհրաժեշտ է շրջակա միջավայրի վրա ազդեցության համալիր գնահատական, ՇՄԱԳ / ԲԿՊ հաշվետվություն, առնվազն 2 հանրային քննարկում և ԵԶԲ հաստատում: Արագ բնապահպանական գնահատման (ԱԲԳ) ստուգաթերթիկը չի բացահայտել որևէ ազդեցություն, որը ըստ ԱԶԲ քաղաքականության կհանգեցնի սահմանափակումների կամ կբացառի ծրագրի գործնականությունը՝ տարբերակներից որևէ մեկի դեպքում:
3. Ծրագրի բոլոր 3 տարբերակները հատում են Բնության հատուկ պահպանվող տարածք՝ Չանգեզուրի արգելավայրի տարածքը:
4. Ծրագրի բոլոր 3 տարբերակների դեպքում հատուկ պահպանվող պատմամշակութային տարածքների, հնագիտական տեսանկյունից զգայուն հնվայրերի հանդեպ ոտնձգությունն անխուսափելի է: Բայց Տարբերակ 2-ի՝ Blue 80, և Տարբերակ 3-ի՝ Cyan 100, դեպքում հնարավոր կլինի ազդեցությունը նվազագույնի հասցնել, քանի որ.



- ✓ Տարբերակ 1-ի դեպքում ծրագծի ուղղակի ազդեցությանը ենթակա օբյեկտների/ վայրերի քանակը զգալիորեն մեծ է, և անհրաժեշտ կլինի իրականացնել հնագիտական պեղումներ և ստանալ ԿԳՍՄ նախարարության հաստատումը:
  - ✓ Տարբերակ 1-ի դեպքում նաև ավելի մեծ է հատուկ պահպանվող հնագիտական տարածքներում առկա այն օբյեկտների/վայրերի քանակը, որտեղ անհրաժեշտ կլինի հողի կատեգորիայի փոփոխություն:
  - ✓ Տարբերակներից ոչ մեկը իրականացումը չի հանգեցնում կարևոր պատմամշակութային / հնագիտական տարածքների վրա ազդեցության: Բոլոր հուշարձանները կարող են պահպանվել հնագիտական պեղումների միջոցով: Բայց հնագիտական պեղումներ պահանջող պատահական գտածոների հավանականությունը ավելի մեծ է Տարբերակ 1-ի դեպքում:
5. Բոլոր տարբերակները հանգեցնում են լանդշաֆտի աղավաղման՝ լրաթմբերի, կտրվածքների, լիցքերի և բացահանքերի հետևանքով: Սակայն այս ազդեցությունը նվազագույնին է հասցվել BLUE 80 տարբերակի դեպքում, քանի որ միայն այս տարբերակն է առաջարկում գ/ու M2 ճանապարհի մոտ 10 կ հատվածի վերակառուցում:
  6. Ծառահատումները անխուսափելի են բոլոր տարբերակների համար, բայց նվազագույնին է հասցված BLUE80 տարբերակի դեպքում, քանի որ առաջարկվում է վերակառուցել M2 այրուղու 10 կմ երկարությամբ ճանապարհահատված:
  7. 3 տարբերակներից ոչ մեկը չի ազդում մակերևութային ջրային գանգվածների հիդրոլոգիայի վրա՝ գետերի ջրային հոսքերի ուղիների և/կամ ջրի որակի փոփոխության տեսանկյունից: Գետերի վրա ազդեցությունը կսահմանափակվի ժամանակավոր կամրջի կառուցմամբ, որի ազդեցությունները կարելի է մեղմացնել ԲԿՊ-ի միջոցով:
  8. Բոլոր 3 տարբերակները նախագծվել են բնակավայրերի տարածքներից հնարավորինս խուսափելու սկզբունքով: Սակայն կրկին BLUE 80 տարբերակն առավելություն ունի, քանի որ խուսափում է տեղի ճանապարհային գանգի վրա անդառնայի ազդեցությունից, մինչդեռ SS տարբերակով նախատեսվում է քանդել տեղի ճանապարհները՝ առանց ՀՀԾՄԾ հետ հատման համար լուծում առաջարկելու:
  9. BLUE80 և CYAN100 տարբերակներով առաջարկվող ծրագծերի դեպքում թունելի (7 կմ) երկարությամբ պայմանավորված ավելի շատ քանակությամբ լրանյութ/գրունտ կառաջանա, ի տարբերություն Տարբերակ 1-ի (4.5 կմ), որը կնվազեցնի լրանյութերի տեղաասերի խնդիրը: SS տարբերակ 1-ի դեպքում հավանականությունը մեծ է, որ լիցքի համար անհրաժեշտ կլինի նյութի աղբյուրներ գտնել:
  10. Հողերի օտարումը և մարդկանց տարաբնակեցումը անխուսափելի է բոլոր 3 տարբերակների համար. SS տարբերակը նախընտրելի է հողակտորների օտարման տեսանկյունից, սակայն ավելի բացասական է օտարման գոտում բնակվող մարդկանց հարկադիր վերաբնակեցման առումով: CYAN100 տարբերակն ամենանախընտրելին է մարդկանց տարաբնակեցման առումով, իսկ BLUE 80 տարբերակի դեպքում ծրագծի տարածքում բնակվող մարդկանց վրա ազդեցությունը միջին մակարդակի է:



11. Պատմամշակութային ժառանգություն հանդիսացող տարածքների վրա ազդեցությունը բոլոր 3 տարբերակների դեպքում հավասարազոր է (ոստ պաշտոնական գրանցամատյանների և տվյալների համապատասխան ուսումնասիրության ծրագրի տարածքում ոչ մի կարևոր կամ նշանակալի պատմամշակութային ժառանգություն չի հայտնաբերվել):
12. «Առանց ծրագիր» տարբերակը բացառելու է շրջակա միջավայրի բոլոր սպասվող բացասական ազդեցությունները նոր ճանապարհի կառուցումից և շահագործումից բխող, որոնք հիմնականում կլինեն ժամանակավոր, և միևնույն ժամանակ, բոլոր դրական սոցիալական և տնտեսական թե՛ տեղական և թե՛ ազգային նշանակության հետևանքները, որոնք տեղի կունենան նոր ճանապարհի շահագործումից հետո:

**Վերը ներկայացվածից կարելի է եզրակացնել, որ 2 BLUE80 տարբերակն ամենանախընտրելի տարբերակն է՝ հաշվի առնելով բնապահպանական/ սոցիալական/ մշակութային ազդեցությունները, ուստի առաջարկվում է կիրառել 2 BLUE 80 ծրագիծը:**

## 5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ (ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ)

Սույն հատվածը նկարագրում է ուսումնասիրվող տարածքի համապատասխան ֆիզիկական, էկոլոգիական, սոցիալ-մշակութային և տնտեսական պայմանները: Այն նաև ներկայացնում է առկա և առաջարկվող զարգացման գործունեություններն ազդեցության ենթակա ծրագրային տարածքում ներառյալ այն տարածքները, որոնք Ծրագրի հետ ուղղակիորեն կապված չեն:

Նախատեսվող աշխատանքների տեղանքը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում: Շրջանին բնորոշ է մասնատված, կառուցվածքային էրոզիոն-տեղատարումային ռելիեֆի տիպը՝ չափավոր զառիթափ, մեղմաթեթ, մասամբ ժայռոտ լանջերով, թույլ ալիքավոր ջրբաժանով, ներժայթուկային և հարթխանստվածքային ապարների ծալքաբեկորավոր կառույցներով, աստիճանակերպ կատարներով:

### 5.1 ԲՆԱԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ


#### Կլիմա

Սյունիքի կլիմայի վրա ազդում են Կասպից ծովից և չոր իրանյան բարձրավանդակից արևելյան մթնոլորտային զանգվածները: Կլիման մայրցամաքային բնույթագիր ունի: Խոնավ օդի զանգվածները ներթափանցելիս Չանգեզուրի լեռնաշղթայի տարածքում մեծապես փոխվում են և ավելի չոր դառնում: Ինչևէ, ռելիեֆի ծայրահեղ տարբերությունը հանգեցնում է կլիմայի մեծ բազմազանության: Ուղղահայաց գոտիավորումն ակնհայտ է, ջեմաստիճանը սովորաբար նվազում է բարձրության հետ զուգընթաց, մինչդեռ շատանում են անձրևները. 1) 500-1000 մ բարձրության վրա ոչ ցրտաշունչ օրերի տևողությունը տարեկան 270-300 է: Տարեկան տեղումները կազմում են 250-350 մմ, իսկ միջին տարեկան հարաբերական խոնավությունը՝ 60%: 2) 1000-2300 մ բարձրության վրա կլիման կիսաչոր է: Ոչ սառնամանիքային օրերի տևողությունը կազմում է տարեկան 120-160 օր: Տարեկան տեղումների քանակը 500-650 մմ է, իսկ օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը 50-60 %: 3) Մինչև 2300



մ բարձրությունը միջին տարեկան տեղումների քանակը 550-750 մմ է, իսկ օդի հարաբերական խոնավությունը՝ 60-70%: 4) 2300-2500 մ բարձրության վրա բնորոշ է չափավոր ցուրտ կլիման: Տարեկան տեղումների քանակը 55-750 մմ է, օդի միջին հարաբերական խոնավությունը՝ 70-80%: Ոչ սառնամանիքային օրերի տևողությունը կազմում է տարեկան 160-280 օր: Օդի միջին ջերմաստիճանը հունվարին (-2)-(-4)° է, հուլիսին՝ 16-18°: 5) Ցուրտ, խոնավ լեռնային կլիման բնորոշ է 2300-3300 մ բարձրության վրա: Տեղումների քանակն ավելի շատ է (700-800 մմ (որոշ մասերում - 900 մմ) և 250-300 մմ՝ համապատասխանաբար), քան գոլորշացումը: Չափազանց շատ խոնավությունը առաջացնում է մակերեսային հոսքեր, որն իր հերթին առաջացնում է տարածական և գծային երոզիա: Հունվարին օդի միջին ջերմաստիճանը -10°C է, իսկ հուլիսին 10-12 °C: Ոչ սառնամանիքային օրերի տևողությունը տարեկան 50-80 է: Գերակշռում է սառնամանիքային եղանակը: 6) 3200-3500 մ բարձրության վրա, չնայած արևի ճառագայթման ինտենսիվությանը և երկարատև արևափայլին, արևային ճառագայթման հաշվեկշիռը հիմնականում բացասական է տարվա ընթացքում: Կլիման խիստ է և ցուրտ՝ վեց ամիս և ավելի ձգվող ձմեռներով: Տարեկան անձրևների քանակը մոտ 800-900 մմ է: Սա բարենպաստ պայմաններ է ապահովում խոնավության կուտակման համար (ձյան կամ սառույցի տեսքով): Ձյան միջին ծածկույթի խորությունը երկու մետր է, և տարեկան ձյունածածկ օրերի թիվը 270 է: Ձյունածածկույթը պահպանվում է ամբողջ տարվա ընթացքում (ձյան կամ սառույցի տեսքով) նախաբարձունքային կամ գագաթային հատվածներում: Կարճատև և ցուրտ ամառները բուսական ծածկույթի աճի համար բավարար ջերմաստիճան չեն ապահովում:

Ձյան մշտական ծածկույթը սկսվում է ծովի մակարդակից 1200 մ բարձրությունից և պահպանվում է 35-165 օր: Ձյան խորությունը 15-180 սմ է: Այն պահպանվում է 1-1.5 ամիս մինչև 1500 մ բարձրության վրա, 6.5-7 ամիս՝ 3000 և ավելի բարձրության վրա: Ձյան ծածկույթը 15-20 սմ է 1300-1500 մ բարձրության վրա, իսկ 3000 մ և ավելի բարձրության վրա՝ 120-180 սմ (քամու պատճառով գոգավոր մակերևույթների վրա տեղ-տեղ 2-3 մ հաստությամբ ձյան շերտ է ձևավորվում):



Պատկեր 8: Ծրագրի տարածքի կլիմայական գոտիներ



Աղյուսակ 5: Օդի ջերմաստիճան

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրություն ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների °C												Տարեկան միջին, °C	Նվազագույն °C	Առավելագույն °C
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
Մեղրի	627	1,5	3,5	8,2	14,1	18,8	23,2	26,3	25,9	21,5	15,3	9,3	4,0	14,3	-18	43
Քաջարան	1843	-3.2	-3.0	0.3	6.1	10.0	14.2	17.0	16.7	13.5	8.2	3.2	-1.3	6.9	-22	34

Աղյուսակ 6: Օդի հարաբերական խոնավություն

Օդի հարաբերական խոնավությունը,%		
	ամիսներով	Միջին ամսական, 15:00-ին



Բնակավայրի, Կայանի անվանումը	Հունիս	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Միջին տարեկան	Ամենացուրտ ամիսը	Ամենատաք ամիսը
Մեղրի	65	61	62	62	55	50	52	60	67	68	66	61	56		38
Քաջարան	66	69	71	68	72	68	63	65	69	71	68	67	68	67	52

Աղյուսակ 7: Տեղումներ

Տեղամբ	Տեղումներ, մմ												Տարի
	Ամսական միջին/տարեկան առավելագույն												
	Ըստ ամիսների												
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
Քաջարան	42	51	69	80	86	48	22	18	27	52	48	42	585
Մեղրի	18	18	32	41	52	30	10	7	13	23	24	15	283

(Աղբյուր՝ «Հայաստանի հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ, ՀՀ ԱԻՆ)

**Աղմուկ եվ թրթռում**

Բնապահպանական գնահատման նախնական ուսումնասիրության այս նախագիծը չունի բազային տվյալներ աղմուկի և թրթռումների վերաբերյալ: Գոյություն ունեցող երթևեկության մակարդակները քաղաքային կենտրոններում աղմուկի մտահոգություն են առաջացնում նույնիսկ գիշերը: Նոր ճանապարհը, շրջանցելով, պետք է նվազեցնի երթևեկությունը քաղաքային կենտրոններում, հետևաբար նվազեցնելով աղմուկը այս վայրում, բայց այնուամենայնիվ, շինարարության արդյունքում աղմուկի աճ կլինի, և կանխատեսվում է, որ նոր ճանապարհից օգտվելու են մեծ թվով մեքենաներ:

Սույն միջանցքում աղմուկի գերիշխող աղբյուրը կապված է արդյունաբերության հետ:

Զգայուն ընկալիչները նախագծի միջանցքին մոտ գտնվող բնակավայրերում ապրող բնակիչներ են: Զգայուն ընկալիչները որոշվում են ուսումնասիրական միջանցքում՝ 300 մետր լայնությամբ, կենտրոնացած Ծրագրի դասավորվածության վրա:

Աղմուկի և թրթռումների չափումները պետք է կատարվեն և համեմատվեն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերջնական ուսումնասիրության ընթացքում Հայաստանի օրենսդրական պահանջների հետ: Ծինարարության ընթացքում աղմուկի և թրթռման մակարդակը ժամանակավորապես կբարձրանա: Կախված երթևեկի կանխատեսման և ընկալիչների զգայուն գտնվելու վայրի միջև եղած հավասարակշռությունից, Ծրագրի ազդեցությունը աղմուկի և թրթռումների վրա պետք է մոդելավորվի, և արդյունքները ներկայացվեն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերջնական զեկույցում:

Աղմուկի մակարդակի բազային տվյալների հավաքագրումը կիրականացվի վերջնական ՇՄԱԳի նախապատրաստման ընթացքում:

**Մակերեվութային եվ ստորերկյա ջրեր**

*Ջրային ռեսուրսները*



Հյուսիս-հարավ մայրուղու Քաջարան-Ագարակ հատվածի հիմնական ջրային ռեսուրսները մատակարարվում են Մեղրի գետով՝ միջին և ստորին հոսանքներում: Ավտոմայրուղին իր ազդեցությունն է թողնում Մեղրիի և Արաքս գետերի տարածքում գտնվող մի քանի գետերի վրա: Նշված ազդեցության մանրամասները չեն արտացոլվել սույն փաստաթղթում. այն կքննարկվի ՇՄԱԳ-ի վերջնական փաստաթղթում:

**Ողջի գետը** սկիզբ է առնում Չանգեզուրի լեռնաշղթայի Կապուտջուղ լեռան լանջերի փոքր լճերից ու աղբյուրներից, 3650 մ ծ. մ. բարձրության վրա և թափվում է Արաքս գետ 740 մ ծ. մ. բարձրության վրա: Հայաստանի Հանրապետության տարածքում Ողջի գետի ջրհավաք ավազանի մակերեսը 643 կմ<sup>2</sup> է: Գետի ընդհանուր երկարությունը 82 կմ է, ջրհավաք ավազանի ընդհանուր մակերեսը՝ 2337 կմ<sup>2</sup>: Ամենախոշոր վտակներն են Գեղին, Նորաշենիկը, Գեղանուշը, Վաչագանը և այլն: Ողջի գետի ջրհավաք ավազանի ռելիեֆը, մանավանդ նրա վերին և միջին հոսանքներում, իրենից ներկայացնում է միջին և բարձր լեռների ու խոր ձորակների ցանց: Ողջին տիպիկ լեռնային գետ է: Ողջի գետը ունի մեծ անկում, որը գետի վերին հոսանքում մեկ կիլոմետրի վրա հասնում է 60 մետրի: Ողջի գետի ջրհավաք ավազանի մեծ մասն անտառապատ է: Նրա ջրերով են աշխատում Կապանի և Ջրախորի ՀԷԿ-երը: Ջրերն օգտագործվում են նաև որոգման համար: Մնումը խառն է, հորդացումը՝ ապրիլ-հուլիս ամիսներին: Հորդացումների ժամանակ հաճախ լինում են սելավներ: Ողջիի ափերին են գտնվում Քաջարան, Կապան և Կովսական քաղաքները և բազմաթիվ գյուղական բնակավայրեր:

**Մեղրի գետը** գետը /այսուհետև՝ Մեղրի գետ/ սկիզբ է առնում Չանգեզուրի լեռնաշղթայի արևելյան լանջերի փոքր լճերից ու աղբյուրներից /3300 մ ծ.մ./ և Մեղրի քաղաքից ներքև /500 մ ծ.մ./ թափվում է Արաքս գետ: Գետի երկարությունը 36 կմ է, ջրհավաք ավազանի մակերեսը՝ 336,3 կմ<sup>2</sup>: Խոշոր վտակն է Այրիջուրը: Վերին հոսանքում գետահովիտը V-աձև է, ստորինում՝ լայն: Մնումը հիմնականում ձևաանձրևային (68%) է, վարարումը՝ գարնանը, որի ընթացքում ձևավորվում է տարեկան հոսքի 71%-ը: Տարեկան միջին ծախսը 3,31 մ<sup>3</sup>/վ է, առավելագույնը՝ 87,5 մ<sup>3</sup>/վ (Հարավային ջրային ավազանի կառավարման պլան, Երեւան 2016), հոսքը՝ 104,5 միլիոն մ<sup>3</sup>: Ջրերն օգտագործվում են որոգման նպատակով: Սելավաբեր է: Մեղրի գետի գետավազանի Արաքս թափվող գետերն են Կարճանը, Կարավգետը, Մալը, Աստղածորը, Շավիղը և Նռնածորը:


ՀՀ կառավարության 27 01 2011 թ. N 75-Ն որոշմամբ սահմանվել է ՀՀ մակերևույթային ջրերի՝ ջրօգտագործման նպատակային նշանակության կամ որակի կարգերի փոխադարձ կապերի համակարգը, մակերևույթային ջրերի Էկոլոգիական նորմերը և մակերևույթային ջրերի որակի նորմերը ՀՀ տարածքի 14 խոշոր գետային ավազանների ջրերի համար: Սահմանվել է մակերևույթային ջրերի որակի 5 կարգ /դաս/. կարգ I /գերազանց /, կարգ II /լավ/, կարգ III /միջակ/, կարգ IV /անբավարար/, կարգ V /վատ/:

Ըստ այդ նորմերի Ողջի և Մեղրի գետերի վերին հոսանքներում ջրի որակը համապատասխանում է «լավ» /II/ որակի, իսկ ներքին հոսանքներում «միջին» /III/ որակի դասին: Ողջիի գետի ջրերը հոսքով դեպի ներքև աղտոտվում են., Քաջարանից ցած դառնալով «անբավարար» /IV/ կամ «վատ» /V/ դասի, սովորաբար՝ ըստ մոլիբդենի, միջին հոսանքներում դառնալով «միջին» /III/ կամ «անբավարար» /IV/



դասի, իսկ ստորին հոսանքներում «վատ» /V/ դասի: Մեղրի գետի գետավազանում Մեղրի գետի ջրի որակը «լավ» /II/ դասի է, բացառությամբ գետի՝ Թխկուտ գյուղից մինչև Վարդանիձոր գյուղն ընկած հատվածը, որտեղ ամռան և գարնան ամիսներին դիտվել է ջրի «վատ» /V/ դաս: Գետավազանի Կարճևան գետի ջուրը համապատասխանում է «վատ» /V/ դասին:

Մեղրի գետի բարձրադիր հատվածում, մոտ 3200 մետր բարձրության վրա, գտնվում է երկու փոքր բնական լիճ: Դրանցից մեկի՝ Ծակբարի, մակերեսը կազմում է մոտ 5 հեկտար:



Պատկեր 9: Հարավային ջրավազանային կառավարման տարածքի Ողջի և Մեղր գետերի հատվածը խորությունը՝ 8 մետր, իսկ Կապույտ լճի մակերեսը 3 հեկտար է, խորությունը՝ 6 մետր: Այդ տարածաշրջանում որևէ խոշոր արհեստական ջրամբար չկա:

Ողջի գետը նույնպես սկիզբ է առնում բարձրադիր ոչ մեծ լճերից:

Աղյուսակ 8: Մեղրի գետի ջրագրական տվյալները



Գետի անունը	Միջին տարեկան հոսքը, մ <sup>3</sup> /վ	Տարեկան հոսքը, մլն մ <sup>3</sup>	Հոսքի մոդուլը, վ/վ կմ <sup>2</sup>	Հոսքի շերտի բարձրությունը, մ	Հոսքի գործակիցը
Մեղրի	3,23	102	11,8	372	0,57

Աղյուսակ 9: Մեղրի գետի հոսքը

Գետի անունը	Միջին տարեկան հոսքը, մ <sup>3</sup> /վ	Առավելագույն հոսքը, մ <sup>3</sup> /վ	Նվազագույն հոսքը, մ <sup>3</sup> /վ
Մեղրի	3,23	87,5	0,94

Աղյուսակում ներկայացվում է Մեղրի գետի ջրի ջերմաստիճանը Մեղրի քաղաքի սահմաններում: Այն կախված է օդի ջերմաստիճանի տատանումներից, հասնում է իր առավելագույնին հուլիս-օգոստոս ամիսներին: Նվազագույնը դիտվում է հունվար-փետրվար ամիսներին: Ձմռանը գետի չի սառում:

Աղյուսակ 10: Ջրի միջին ամսական ջերմաստիճանը, °C

Գետի հատվածը	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Մեղրի-Մեղրի	1.3	1.7	4.7	8.9	12.0	13.5	19.1	17.0	15.8	11.4	6.4	2.8

Հայաստանի ջրաբանական ատլասի համաձայն, գետի պոտորությունը, ըստ Մեղրի քաղաքի դիտակետի տվյալների, հասնում է 400 գ/մ<sup>3</sup>, իսկ Վարդանիձոր հատվածում՝ 250 գ/մ<sup>3</sup>:

Մեղրի գետի ջրահավաք ավազանի գետեր են հաշվվում Արաքս գետի Մեղրի քաղաքից դեպի արևելք գտնվող փոքր վտակները /Շեմեգլուխ, Կարավգետ, Մալև, Աստազուրգետ, Շավգիր, Սուրիգետ, Նյուվադի-Կարիսբաջուր և Տոնոյիրգետ/ հիմնականում ցամաքող վտակներ են: Այդ վտակները փոքր են և շատ սակավաջուր: Այս վտակների հոսքերը փորձագիտական գնահատմամբ կազմում են մոտ 25,4 մլն.մ<sup>3</sup>: Նրանց հովիտներում գտնվում են Ալվանք, Շվանիձոր և Նոնաձոր գյուղերը: Այդ գյուղերում գյուղատնտեսության համար օգտագործվում հիմնականում Արաքս գետից պոմպերով մղվող ջուրը:

Կարճևանը փոքր գետ է, որը գտնվում է Մեղրի քաղաքից դեպի արևմուտք: Այս գետի վրա էապես ազդում են Ագարակի պղինձ-մոլիբդենային հանքավայրը, հանքաքարի վերամշակման խոշոր գործարանը, Ագարակ քաղաքը և ստորին հատվածներում իրականացվող լայնածավալ գյուղատնտեսական աշխատանքները: Կարճևան գետի մեջ ջուր է լցվում Բուղաբար վտակից:

#### Բնական և մարդածին ազդեցությունները Ռոջի և Մեղրի գետերի վրա

##### 1. Բնական ազդեցությունները՝

Հիմնական բնական ազդեցությունը կլիմայի փոփոխության ազդեցությունն է, որի հետևանքով սպասվում է օդի միջին ջերմաստիճանի աճ, տարեկան տեղումների քանակի նվազում, օդի



հարաբերական խոնավության, գետերի բնական հոսքի, ինչպես նաև գետերի ջրի որակի թթվածնային և հանքայնացման ռեժիմների բնական փոփոխություններ: Երկարաժամկետ հեռանկարում Մեղրի գետի գետավազանում կլիմայի փոփոխությունն էական ազդեցություն կարող է ունենալ ջրային ռեսուրսների մատչելիության վրա:

Մեղրի գետի գետավազանում արդեն դիտվել են չորային, ջրասակավ տարիներ, ինչի արդյունքում աճել է ոռոգման նպատակով ջրօգտագործման պահանջարկը: Միևնույն ժամանակ, ջրառատ տարիներին առաջացող առավելագույն ելքերը, սելավները և վարարումների ընթացքում տարածքների ջրածածկումներն առաջ են բերել արտակարգ իրավիճակներ:

## 2. Մարդածին ազդեցությունները`

Ողջի և Մեղրի գետերի ջրահավաք ավազանի բնական միջավայրի, ներառյալ` ջրային ռեսուրսների քանակի և որակի վրա ազդեցություն ունեցող մարդածին ազդեցությունները հետևյալն են.

ա/ խմելու-կենցաղային նպատակով ջրառը Հարավային ջրավազանի կառավարման տարածքի ընդհանուր ջրառաջարկի մոտ 3-5%-ն է և չի համարվում էական ազդեցություն: Սակայն չպետք է մոռանալ, որ խմելու ջրի որակին ներկայացվում են բարձր պահանջներ, իսկ այդպիսի պահանջներին համապատասխանող ջրերի քանակը սահմանափակ է:

բ/ ոռոգման նպատակով ջրառը էական ազդեցություն ունի ջրային ռեսուրսների քանակի վրա Մեղրի գետում:

գ/ արդյունաբերական նպատակով ջրառը էական ազդեցություն ունի Ողջի գետավազանի ջրային ռեսուրսների քանակի վրա:

դ/ չմաքրված կենցաղային կեղտաջրերի հեռացումը էական ազդեցություն ունի Ողջի և Մեղրի գետերի ջրային ռեսուրսների ջրի որակի վրա, Քաջարան քաղաքից մինչև Ողջիի պոչամբար, Մեղրի քաղաքից մինչև Արաքս գետ, և Ագարակ քաղաքից մինչև գետաբերան ընկած հատվածներում:

ե/ սևնդի և ոչ սևնդի արդյունաբերությունից ջրահեռացումը էական ազդեցություն չունի Ողջի և Մեղրի գետերի վրա:

զ/ հանքարդյունաբերությունից ջրահեռացումը էական ազդեցություն ունի Ողջի և Մեղրի գետերի ջրային ռեսուրսների որակի վրա: Հանքարդյունաբերական գործունեությունից առաջացած կեղտաջրերի հեռացման կենտրոնացված համակարգերի պարբերաբար առաջացող վթարների արդյունքում առաջանում են արտահոսքեր, որոնց հետևանքով կեղտաջրերը ներթափանցում են գետեր` աղտոտելով գետերի հետևյալ հատվածները. Ողջի գետի` Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատից մինչև ՀՀ սահման, Կարճևան գետը` Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատից մինչև Արաքս գետ, Մեղրի գետի` Թխկուտից մինչև Վարդանիձոր գյուղն ընկած հատվածներում:

է/ հանքավայրերը էական ազդեցություն ունեն Ողջի և Մեղրի գետերի ջրերի որակի վրա: Գարնանային և ամառային վարարումների, ձնհալքի և հորդառատ անձրևների հետևանքով հանքավայրերից ձևավորված մակերևութային հոսքաջրերը, հագեցած ծանր մետաղների բարձր խտությամբ, աղտոտում են գետերի հետևյալ հատվածները. Ողջի գետը` Քաջարան քաղաքից մինչև Ողջիի ռեկուլտիվացված պոչամբար, Մեղրի գետը` Թխկուտ բնակավայրի մոտ, Կարճևան գետը` Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի հանքավայրից մինչև Արաքս գետ, Մեղրի գետը` Թխկուտ գյուղից մինչև Վարդանիձոր գյուղը:

ը/ հիդրոէլեկտրակայանները, չպահպանելով էկոլոգիական հոսքը, ազդեցություն ունեն Մեղրի գետի վրա հետևյալ հատվածներում` Մեղրի գետը` Լիճք բնակավայրից մինչև Գոգգոգ վտակի միախառնումը և Վարդանիձոր բնակավայրից մինչև Մեղրի քաղաքը: /Ողջի գետի վրա Քաջարանի հատվածում չկա ՓՅԷԿ/:



թ/ ձկնաբուծությունն էական ազդեցություն չունի Ողջի և Մեղրի գետերի ջրերի քանակի և որակի վրա:

ժ/գյուղատնտեսությունը և պարարտանյութերի օգտագործումը էական ազդեցություն չունեն Ողջի և Մեղրի գետերի վրա: Գերարածեցումը և անասնապահությունից արտանետումների քանակները էական ազդեցություն չունեն Ողջի և Մեղրի գետերի ջրերի որակի վրա:

ի/ անտառառնումները, ավտոտրանսպորտը, պինդ թափոնները /բացառությամբ հանքարդյունաբերության թափոնների/ Ողջի և Մեղրի գետերի ջրերի որակի վրա էական ազդեցություն չունեն, թեև բնակավայրերին հարող հատվածներում նկատելի է գետերի հունի աղտոտումը կենցաղային կոշտ թափոններով:

լ/պոչամբարները և հանքարդյունաբերության լցակույտերը էական ազդեցություն ունեն Ողջի և Մեղրի գետերի ջրի որակի վրա: Գարնային և ամառային վարարումների ժամանակաշրջանում, ձնհալի և հորդառատ անձրևների հետևանքով, հանքավայրերի լցակույտերից մեծ քանակությամբ վնասակար նյութեր վազվում և լցվում են գետեր՝ ազդեցություն ունենալով ջրերի որակի վրա հետևյալ հատվածներում. Ողջի գետը՝ Չանգեգուրի պղնձամոլիբդենային կոմբինատի թափոնակույտից մինչև Գեղի գետի միախառնումը, և այլն, Ագարակ գետը՝ Խաչիծոր (Դարազամի) թափոնակույտից մինչև Մեղրի գետի միախառնումը: /Գետավազանում առկա է 6 գործող և 4 ռեկուլտիվացված պոչամբարներ/:

*Ստորերկրյա ջրերի բնութագիրը*

Լեռնային գոտիներում ստորերկրյա ջրերն ունեն լոկալ տարածում, իսկ գետահովիտներում և միջլեռնային գոգավորություններում տարածված են ջրատար հորիզոնները: Առանձնացվում են հետևյալ ստորերկրյա ջրային հորիզոնները և ջրակալած տեղամասերը՝

ա) Մեղրի գետի ավազանի ժամանակակից ( $Q_4$ ) այրվիալ-պրոյուվիալ նստվածքների ջրատար հորիզոններ


բ) արտածին (Էկզոգեն) ճեղքավորվածության, տարակազմ ինտրուզիվ ապարներում մակենույթային ջրահոսքի ինֆիլտացիայի հետևանքով ջրակալած հորիզոններ, տեկտոնական խախտումների ճեղքային և ճեղքաերակային ջրեր ( $P_2-N$ ):

ժամանակակից ( $Q_4$ ) այրվիալ-պրոյուվիալ նստվածքների ջրատար հորիզոնի նստվածքները ավազատիղմային լցանյութով, գլաբարային և խճաբարային առաջացումներով, տարածված են Մեղրի գետի նեղ /100-300մ/ հովտում: Այս ջրատար հորիզոնի ջրերի մակարդակը տատանվում է 0.1-10.0մ սահմաններում և ամբողջովին կախված է գետի ջրի մակարդակից:





Պատկեր 10: Հարավային ջրվազանային կառավարման տարածքում մակերևութային ջրային մարմինների տարանջատման քարտեզ Ողջ և Մեղրի գետերի հատվածում



Էյուվիալ-դեյուվիալ առաջացումների հետ կապված ստորգետնյա ջրերը ունեն ոչ մեծ տարածում: Դրանց սնուցումը կատարվում է մթնոլորտային տեղումների հաշվին, իսկ բեռնաթափումը՝ աղբյուրների տեսքով:


Ապարների ճեղքերը, որոնք լցված են հողմահարման նյութերով, օժանդակում են հողմահարման ճեղքերում ստորգետնյա ջրերի կուտակմանը: ճեղքային և ճեղքաերակային ջրերը ստորգետնյա լեռնային փորվածքներում գրանցված են խոնավության, խիստ խոնավության, հազվադեպ կաթոցի և հաճախակի կաթոցի տեսքով: Ստորերկրյա ջրերի սակավությանը նպաստում այն հանգամանքը, որ տարածքի մեծ մասն ունի մասնատված ռելիեֆ և հովտային ցանց, ամենուրեք մեծ թեքության լանջեր, ինչը ստեղծում է բնական դրենաժային համակարգ, որը սահմանափակում է մակերևութային ջրերի ներթափանցումը խորը հորիզոններ:

Էկզոգեն ճեղքավորվածության, հողմահարման կեղևի ջրակալած գոտիների, տեկ-տոնական խախտումների և հանքային մարմինների ճեղքային և ճեղքաերակային ջրերը (N2-Q) հարում են արմատական ապարներին, որոնք ներկայացված են պորֆիրիտներով, գրանոդիորիտային և սիենիտային ապարներով:



Ողջի և Մեղրի գետի գետավազանների ստորերկրյա ջրերի շահագործական պաշարները չեն հաստատվել պաշարների պետական կամ տարածքային հանձնաժողովներում: Ողջի գետավազանում ստորերկրյա ջրերի բնական ռեսուրսները, ըստ բազմամյա միջին տարեկան նշանակության, կազմում են 185,1 մլն. մ<sup>3</sup>/տարի, իսկ Մեղրի գետի գետավազանում՝ 59,21 մլն. մ<sup>3</sup>/տարի:

Շատ փոքր մակերեսային ջրատար հորիզոններ առկա են տվյալ տարածաշրջանի բազմաթիվ վտակների նեղ հովիտների այլուվիալ նստվածքներում: Այդ փոքր ջրատար հորիզոնները ծառայում են որպես խմելու ջրի կարևոր աղբյուրներ Շվանիձոր և Նյուվաղի գյուղերի համար, որոնք օգտագործում են մակերեսային այլուվիալ ստորգետնյա ջրերը՝ հնագույն հորիզոնական ջրհորներով (ներթափանցող իջանցքներ):



Պատկեր 11: Ողջի և Մեղրի գետերի ջրավաթ ավազանի ստորերկրյա ջրերի քարտեզը

Արաբս գետի ողողադաշտը որոշ հատվածներում ունի այլուվիալ ջրատար հորիզոններ: Ագարակի մոտ գտնվող ողողադաշտի ջրատար հորիզոնը շահագործվում է մի քանի տեղական և արդյունաբերական ջրհորներով: N 2- 5 հորատանցքերի ստորգետնյա ջրերն օգտագործվում են որպես խմելու ջուր:



Տաշտուն-Լիճք հատվածի ինքնաբուխ աղբյուրներն ամբողջովին օգտագործվում են: Կալեր-Վանք հատվածում կան չօգտագործված աղբյուրներ:

Տարածաշրջանում մինչև 20 լ/վրկ հոսքով աղբյուր կա Մեղրի գետի վերին հոսանքներում, իսկ հանքային աղբյուրներ կան Մեղրի գետի միջին և ստորին հոսանքներում/գրանցման համարը 104/Լիճք/ և 105 /Մեղրի/, 106-108/:

*Խմելու ջրի ջրամատակարարման և ջրահեռացման խնդիրները, ոռոգման ջրի մատակարարումը*

Մեղրի գետի ջավազանում գտնվող քաղաքային բնակավայրերում գործում են ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ: Խմելու ջրամատակարարման համակարգերի մեծ մասն մաշված, դրանք մեծ կորստով ինքնահոս համակարգեր են: Մեղրու տարածաշրջանում խմելու ջրի ջրամատակարարման ընդհանուր ծավալի ավելի քան 60%-ն ապահովում են երկու ինքնահոս համակարգեր, Չվար ինքնահոս համակարգը, որը ջուր է մատակարարում Մեղրի քաղաքին և հարակից համայնքներին, և Բողաքար ինքնահոս համակարգը, որն ապահովում է ջրով Ագարակը և հարակից համայնքները: Գործում է Ագարակում գտնվող խորքային ջրհորների համակարգը, որը ջուր է հանում Արաքս գետի ողողադաշտի ջրատար հորիզոնից:

Գյուղական բնակավայրերի բնակչությունը նույնպես գրեթե 100%-ն ապահովված է խմելու ջրով շնորհիվ 13 փոքր մակերեսային և ստորգետնյա ջրամատակարարման համակարգերի: *Գյուղական համայնքները կոյուղացված չեն, իսկ քաղաքային համակարգերը՝ Քաջարանը, Մեղրին և Ագարակը թեև կոյուղացված են, սակայն չունեն գործուն կենցաղաջրերի մաքրման համակարգ:*

Մեղրի գետի ջրավազանում գործում են տեղական նշանակության ոռոգման ջրանցքներ, որոնք հին են, ունեն մեծ կորուստներ և վերանորոգման կարիք, բայց հիմնականում բավարարում են գյուղատնտեսության ոռոգման ջրի կարիքները: Այդ համակարգերը ինքնահոս են և սնվում են Մեղրի գետից և նրա վտակներից: Նոնաձոր, Շվանիձոր, Ավանք և Արաքսաշեն բնակավայրերի ոռոգման ջուրը մատակարարվում է պամպակայանների միջոցով Արաքս գետից:

**Տեղագրություն, երկրաբանություն, հողեր, սեյսմոլոգիա**

ՀՀ տարածքը զբաղեցնում է հայկական բարձրավանդակի հյուսիս-արևելյան մասը, որը կազմված է երիտասարդ ծալքավոր լեռնաշղթաներից՝ ձևավորված ալպյան լեռնակազմավորման գործընթացների արդյունքում և կոչվում է Փոքր Կովկաս, ինչպես նաև Հայկական հրաբխային բարձրավանդակի հյուսիս-արևելյան մասի հրաբխային ծագման լեռնազանգվածներից (Արագած, Արա, Հատիս, Գեղամա և այլն): Քաջարան-Ագարակ շուրջ 45 կմ ճանապարհահատվածի տեղանքն ամբողջությամբ տեղակայված է Սյունիքի մարզում և բնութագրվում է խիստ բարդ և բազմազան տեղագրությամբ: Այն միավորում է ծալքավոր, կոլիսաձև և գծային ձգված լեռնաշղթաները, հրաբխային զանգվածները, բարձրադիր սարահարթերը, միջլեռնային գագաթները և գետահովիտները: Լեռնալանջերը ինտենսիվորեն եղանակային են (բայթայված):

Ծրագրի տարածքում դիտվել են որոշ հրաբխային տեղանքներ, հատկապես գոյություն ունեցող ճանապարհի 352.7 կմ և 357.5 կմ հատվածների միջև (Լիճք գյուղի շրջակայքում): Գոյություն ունեցող ճանապարհի կտրվածքներում նկատվել են տարբեր երեմներ. Պիրոկլաստիկներ (ներառյալ մոխիրներ), լավային հոսքեր, հրաբխային նստվածքներ (ցեխահոսքեր, տուֆեր), ինչպես նաև մի քանի քարքարոտ գոյացում՝ դացիտ կամ անդեզիտ:





Այս տարածքը բնութագրվում է երևույթների մեծ փոփոխականությամբ և տարասեռությամբ՝ կարճ տարածությունների վրա տեղանքների բնույթի մի քանի փոփոխություններով: Այնուամենայնիվ, այս տեղանքները ներկայումս ունեն հողի վարքագիծ և բնութագրվում են լանդշաֆտի ավելի մեղմ լանջերով: Որոշ սողանքներ են նկատվել գոյություն ունեցող ճանապարհի ներքևում՝ 353.5 կմ մոտ:

Բացի այդ, տեղանքների որոշ այլ տեսակներ՝ այլուվիալ տեռասներ և գրանիտոիդ պլուտոններ, առկա են նաև այն վայրում, որտեղ հանդիպում են հրաբխային տեղանքները, ինչը հանգեցնում է բարդ երկրաբանության:

Ծրագիրը խուսափում է հիմնական տարածքից, որտեղ հրաբխային տեղանքները դիտվել են առկա ճանապարհի երկայնքով, քանի որ հավասարեցումը գտնվում է Մեղրի գետի հովտի հակառակ կողմում: Այնուամենայնիվ, չի կարելի բացառել, որ նույն տիպի տեղանքները գոյություն ունենան հավասարեցման հատվածի մի քանի տարածքներում (հատկապես այնտեղ, որտեղ հավասարեցումը գտնվում է գոյություն ունեցող ճանապարհից հեռու և որտեղ հնարավոր չէ այցելել կայք): Մասնավորապես, լանջի վերին մասում նախագծի 20 կմ-ի մոտակայքում որոշ կարմիր ելքեր են նկատվել, և դա կարող է լինել հրաբխային տեղանք: Այս ոլորտում լանջի իջեցումը հնարավոր է, առանց ընդհանուր քանակության վրա լուրջ հետևանքների:

Ռելիեֆի գենետիկ տեսակներ.

1. Լավայով ծածկված եզրային սարահարթեր (1100-2200 մ)՝ փոքր թեթևությամբ ծալքավոր կազմավորումների վրա (Մեղրիի Մ-2 մայրուղուց դեպի Որոտան գետի կիրճը)
2. Ուղղաձիգ լանջերով (մինչև 25-35°), թեթևակի ալիքավոր ջրբաժաններով, Չանգեզուրի լեռնաշղթայի արևելյան թևի (դեպի Քաջարանի հյուսիս) հյուսիսային, արևելյան և հարավային լեռնալանջեր:

Տարածված են ռելիեֆի հետևալ տեսակները.

1. Լավայի հոսքեր (դասական տեսակ)
2. Մասնակի փլուզումներ նախագծվող մայրուղու հարակից տարածքում՝





Պատկեր 12: Սյունիքի մարզի գեոմորֆոլոգիա (ՀՀ ազգային ատլաս, հատոր 1-ին, Երևան, 2007 թ.)

### Երկրաբանություն


Տարածաշրջանն ունի ուղղաձիգ ռելիեֆ, ընդ որում ամենացածր կետը՝ 375 մ, գտնվում է Արաքս գետի հովտում, իսկ ամենաբարձրը 3904 մ է (Կապուտջուղ լեռան գագաթը) (ամենաբարձր կետերն են Կապուտջուղը, Սիսակատարը և Գազանալեռը): Տարածաշրջանը հիմնականում կազմված է Երրորդային (կալսոգոյան) ժամանակաշրջանի գրանիտե և այլ ինտրուզիվ ապարներից, սակայն հյուսիսային կողմում գտնվող փոքր տարածքին բնորոշ է նստվածքային երկրաբանական կառուցվածք:



Տարածքի երկրաբանական կառուցվածքը ներկայացված է Էնգենի և Չորրորդական ժամանակաշրջանի ֆորմացիաներով: Տարածաշրջանի ամենահին ապարներն են գաբրո-դիորիտները և միջին Էնգենի գաբրո-սիենիտային ապարները, որոնք լայնորեն տարածված են Մեղրի գետի ձախափնյա լանջում և գետահունի սահմաններում:

Էնգենի ժամանակաշրջանի այս ինտրուզիվ ապարները ծածկված են Չորրորդական ժամանակաշրջանի նստվածքային հողերով, որոնք ներկայացված են մեծ ու փոքր ժայռաբեկորներով, կոպճաքարերով և ընդհանուր 6.0-10.0 մ հաստություն ունեցող այլուվիալ /գետաբերուկային/ ու դիյուվիալ (ջրհեղեղի արդյունքում առաջացած) ավազակավով (երբեմն 18-20 մ դարավանդում-գետաբերուկային/այլուվիալ խոշոր կոպճավազ):

Պատկեր 13: Տարածքի երկրաբանական կառուցվածքը Ուսումնասիրվող միջանցք



Legend:

1. Ուղղաձիգ և թեք լանջերով, Ս- ձև հովիտներով և ձորերով ուժգին կտրտված բարձր լեռնային զանգվածներ (2500 մ-ից բարձր)
2. Ուղղաձիգ լանջերով և ալիքաձև կատարներով, Վ- ձև հովիտներով և ձորերով ուժգին կտրտված միջին բարձրության լեռներ (1500-2500 մ)
3. Ուղղաձիգ լանջերով և աստիճանաձև կատարներով Վ- ձև հովիտներով և ձորերով կտրտված միջին բարձրության լեռներ
4. Քուեստանման լանջերով, լայն հովիտներով և փոքր ձորակներով կտրտված ցածր

Տարածքի երկրաբանությունում գերիշխող դեր ունի Մեղրիի պլուտոնը, որը տարածվում է Ողջ գետից (Քաջարան) մինչև Իրանի սահմանը (Մեղրի-Ագարակ): Այս երկրաբանական ֆորմացիան կազմված է գրանիտոիդային ապարներից, այդ թվում՝ մոնցոնիտներից, սիենիտներից, սիենիտոդիորիտներից և գաբրո-դիորիտներից: Սակայն գետտեխնիկական նախագծի համար կարևոր կլինեն ոչ այնքան ապարների տեսակները, որքան ապարների ճեղքավորվածության և հողմահարման բնութագրերը: Ինչպես իսկապես նկատվում է ներկա ճանապարհի երկայնով, կան խտության և ճեղքավորվածության տեսակի, ինչպես նաև հողմահարման բազմաթիվ տատանումներ: Այնուամենայնիվ, տեղանքները հիմնականում կազմված են ժայռային ապարներից (պինդից շատ պինդ ապար), վերևի ոչ մեծ հաստության հողի շերտով: Որոշ տարածքներում հողմահարման պրոցեսը ավելի շատ է զարգացած, հատկապես տեկտոնական բնույթի ճեղքավորվածության երկայնքով (իզվածքներ), ինչը հանգեցրել է հողմահարված ապարների և անգամ հողային գրունտների ներկայության: Գրունտների




հաստությունը մակերևույթին մոտ գտնվող մասում (գրանիտոիդների արենիզացիա (վերածումավազի), որն առաջացնում է ավազային տեղանքներ) ընդհանուր առմամբ փոքր է մնում (1 կամ 2 մ), սակայն նրա կարևորությունը կարող է մեծանալ ավելի մեղմաթեթ լանջերի դեպքում: Ամփոփելով, կարելի է նշել, որ գերակայող ֆացիան ներկայացված է խիտ, ճեղքավոր ապարով:

Որոտան գետի հունն ու ողողատը, ինչպես նաև դարավանդները կազմված են վերին պլիոցեն-պլիոցենյան ժամանակաշրջանի (3,3 -0,01 բացարձակ տարիք՝ 1 մլն տարվա ընթացքում) լճային, ֆյուլվիալ, պրոյուվիալ նստվածքներից:

Քաջարանի մուտքի հատվածում հանդիպում են նաև վերին էոցեն հասակի (42-38 մլն տարեկան) գաբրո, գրանոդիորիտ, կվարցի դիորիտ, մոնցիտ, նեֆելինե սիենիտ, լեյկոգրանիտ:

Պատկեր 14: Սյունիքի մարզի երկրաբանական քարտեզ (ՀՀ ազգային ատլաս, հատոր Ա, Երևան,







### Հողեր. Հողերի բնութագիրը

Հողերը ձևավորվում են մի շարք գործոնների փոխազդեցությամբ: Դրանք են. հողագոյացնող ապարները, բուսական և կենդանական օրգանիզմները, կլիման, ռելիեֆը, ժամանակը, ջուրը և մարդու տնտեսական գործունեությունը: Բնական և աշխարհագրական այս գործոնների ազդեցությամբ ձևավորված հողային տիպերը և ենթատիպերը լեռնային երկրներում, ինչպիսին է Հայաստանը, որոշակիորեն կապված են վերընթաց լանդշաֆտային գոտիների հետ և առաջացնում են *հողային տիպերի վերընթաց գոտիականություն*: Հողային տիպերի գոտիական բաշխվածությունը ցայտուն նկատելի է նաև Հյուսիս հարավ ավտոմայրուղու Քաջարան-Ագարակ հատվածի ծրագծի ամբողջ երկարությամբ: Տաշտունի լեռնանցքից դեպի Քաջարան և դեպի Արաքսի հովիտը հողային հիմնական տիպերը վերից - վար հերթափոխվում են հետևյալ հաջորդականությամբ. *Մարգագետնատափաստանային հողեր*, *Դարչնագույն հողեր*, իսկ Մեղրի գետի միջին հոսանքից մինչև արաքսի հովիտ՝ *գետահովտադարավանդային հողեր*:

Ավտոմայրուղու Քաջարան – Ագարակ հատվածի համար համար հայցվող տարածքում, Տաշտուն գյուղի սահմանից մինչև թունելի ելքը Մեղրի գետի հովիտ /1920 մ ծ. մ./ և ավելի վեր գերիշխում են *մարգագետնատափաստանային հողերը*:

*Մարգագետնատափաստանային հողերը* զբաղեցնում են Հայկական հրաբխային բարձրավանդակի 2100- 2600 մ բարձրությունները: Առաջանում են չափավոր խոնավ, զովամառ, ցուրտ ձմեռ և խոր ձնածածկ ունեցող կլիմայի ու մարգագետնատափաստանային բուսածածկույթի պայմաններում: *Հողատիպի լիթոլոգիական կազմում* հիմնականում հիմնային ապարներն են: Այս հողային տիպում առանձնացնում են սևահողանման, (օգտագործվում են որպես խոտհարք) և տիպիկ սևահողային ենթատիպերը (օգտագործվում են որպես արոտավայր): Հումուսի պարունակությունը 10-13% է, ունեն թույլ թթվային ռեակցիա, կատիոնային փոխանակության ունակությունը՝ մինչև 57 մգ/էկվ: : Ավտոմայրուղու համար հայցվող տարածքի այս բարձրություններում գերակշռում է *մարգագետնատափաստանային տիպիկ մնացորդային չհագեցած* հողային ենթատիպը:

Թունելի մոտքից մինչև Լեռնաձորի ցածրադիր սահմանը և Տաշտունից մինչև Լեհվազ բարձրություններում գերիշխում է հողի *Դարչնագույն տիպը* հետևյալ ենթատիպերով. Մինչև թունելի մոտքը՝ *անտառային դարչնագույն կրազերծված տափաստանային*, Տաշտուն –Վարդանիձոր հատվածում՝ *անտառային դարչնագույն տիպիկ տափաստանային*, Վարդանիձոր –Լեհվազ հատվածում՝ *անտառային դարչնագույն կարբոնատային տափաստանացված*:

*Անտառային դարչնագույն հողային տիպը* ձևավորվել է չափավոր տաք կլիմայի պայմաններում, հիմնականում կաղնու, բոխու և թխկու անտառածածկոցի տակ, պորֆիրիտների, գրանոդիորիտների, կրաքարերի, ավազաքարերի հողմահարված նյութերի, ինչպես նաև ողողաբերուկային կավավազային և կավային կուտակումների վրա:

Այս տիպի հողերը տարածված են լեռնաշղթաների արևելյան լանջերի 900-2400 մ բարձրություններին, հանդիպում են նաև տարբեր մասնատվածությամբ լեռնալանջերում և փոքրաթեք սարավանդներում, տարբերվում են կավայնացմամբ, զգալի քարքարոտությամբ, կավավազային մեխանիկական կազմով: Հողային այս տիպի մեջ հումուսի պարունակությունը 4-6 % է, ունեն *հողի ջրային մզվածքի* չեզոք կամ թույլ հիմնային (pH=7-8,2) ռեակցիա, միջին և միջինից բարձր *կատիոնային փոխանակային ունակություն* (30- 44 մգ/Ա/վ), կարբոնատների զգալի պարունակություն, բարենպաստ ջրաֆիզիկական հատկություններ: Այս հողերի զգալի մասը տարբեր աստիճանի տափաստանացված են, /որքան ցածրադիր, այնքան ավելի տափաստանացված/ և հիմնականում օգտագործվում են որպես վարելահողեր, խոտհարքներ և արոտավայրեր: *Անտառային դարչնագույն հողերի* ձևավորման բիոկլիմայական առանձնահատկությունները նպաստում են անտառային բույսերի համակցությունների լավ աճին և մեծ քանակությամբ բուսական կենսազանգվածի և ճմի առաջացմանը:





Ավտոմայրուղու Լեհվազ- Մեղրի-Ագարակ հատվածում գերակշռում է *Տափաստանային հողային տիպի գետահովտադարավանդային հողային ենթատիպը*:

*Գետահովտադարավանդային հողերը* գոյացել են խոշոր գետերի հովիտներում: *Գետահովտադարավանդային հողերում* ծագումնաբանական հորիզոնները թույլ են արտահայտված: Ունեն պարզ շերտավոր կառուցվածք, մեծ հզորություն և թեթև մեխանիկական կազմ (ավազային, կավավազային) և հատիկակնձկային ստրուկտուրա: *Գետահովտադարավանդային հողերը* ունեն բարելավված տեխնոլոգիական հատկանիծներ, նրանց կաշունությունը, կապակցականությունը և տեսակարար դիմադրողականությունը մեծ չէ: Հումուսի պարունակությունը 1,5-2-ից մինչև 4-6% /բարձրադիր հողերի հումուսի պարունակությունը ավելի բարձր է/, զգալի է կլանված մագնեզիումի պարունակությունը, ջրային մզվածքի թթվությունը  $pH=6,9-8,1$ , նատրիումի կլանման ծավալը՝ 14-35 մգ/էկվ:

Ավտոմայրուղու Լեհվազ- Մեղրի-Ագարակ հատվածում գերակշռող *գետահովտադարավանդային հողային ենթատիպի մարգագետնացված կոպճային տարբերակն է*:

*Բերրի հողաշերտի* հզորությունը ավտոմայրուղու տարբեր տեղամասերում խիստ տարբերվում է: Այն կախված է լանջի թեթևության աստիճանից, դիրքադրությունից, արմատական ապարների բնույթից, ծ. մ. բարձրությունից: Այսպես օրինակ, հարավային դիրքադրության լանջերին բերրի հողաշերտի հզորությունը գազաթամերձ տարածքներում աննշան է /ընդհամենը 1-2 սմ/, իսկ հովիտների եզրերին, ձորերում կարող է հասնել 10-13 սմ-ի և ավելին: Հյուսիսահայաց լանջերը պակաս հողմահարված են. գազաթամերձ տարածքներում բերրի հողաշերտի հզորությունը կարող է հասնել մինչև 10 սմ-ի, իսկ հովիտների եզրին՝ 15-20 սմ- ի: *Բերրի հողաշերտի* հզորությունը և բուսականության առատությունը փոխկապակցված են: Ավելի ցածրադիր վայրերում իրավիճակը կրկնվում է, սակայն բերրի հողաշերտի հզորությունը այստեղ զգալիորեն գերազանցում է բարձրլեռնային տեղամասերի նույն ցուցանիշը՝ հյուսիսահայաց լանջերին կազմելով 15- 25 սմ-ի:

*Հողառաջացնող ապարների նստվածքների ծագումնաբանությունը և հողառաջացնող ապարների լիթոլոգիական կազմը*

Ողջի գետի և Մեղրի գետի միջին և ստորին հոսանքի գետահովիտները ծածկված են ժամանակակից հունային, դարավանդային և արտաբերման կոների պրոյուվիալ /հեղեղաբերուկային/ և այլուվիալ /գետաբերուկային/-պրոյուվիալ նստվածքներով, որոնց հող առաջացնող ապարների լիթոլոգիական կազմը ավազներ, կավավազներ, կոպիճ, խճավազ և գլաբարեր են տղմակավավազային երևակումներով: Մեղրի գետի վերին հոսանքի հողերը ունեն նստվածքների դեյուվիալ /լանջակուտակային/ և դեյուվիալ –պրոյուվիալ գենետիկական տիպ: Իսկ նրանց հող առաջացնող ապարների լիթոլոգիական կազմը ավազակավեր և կավավազային խճաբարեր են խճավազով և գլաբարերով: Կան նաև սողանքային և սոլիֆյուկացիոն տեղամասեր:


**Հողերի էրոզացվածության աստիճանը**

Հյուսիս հարավ ավտոմայրուղու Քաջարան – Ագարակ հատվածի համար հայցվող տարածքում հողերի էրոզացվածության աստիճանը բարձր է /III-IV, 25-45%/ աստիճանի: Պատճառը այն է, որ Մեղրի գետի հովտով է անցնում M2 միջպետական ավտոմայրուղին, այստեղ են գտնվում մի քանի բնակավայրեր, տարածաշրջանում զարգացած է հանքարդյունաբերությունը: Բացի այդ ցածրադիր տեղամասերում, Երևան –Մեղրի ավտոմայրուղու շրջակայքում, հողը գտնվում է ինտենսիվ գյուղատնտեսական շրջանառության մեջ՝ հիմնականում որպես վարելահողեր և առավել հասանելի





գյուղամերձ արոտավայրեր: Հողերի էռոզացվածությունը II աստիճանի է խոտհարքերում /1-10%/, և բարձրադիր լեռնային արոտավայրերում:




Պատկեր 15: Քաջարան – Մեղրի տարածաշրջանի հողային ծածկույթի քարտեզը: Թվերով նշված են հողային հետևյալ ենթատիպերը. 18 – Անտառային դարչնագույն կրագերծված տափաստանացված, 9-Մարգագետնատափաստանային տիպիկ մնացորդային չհագեցած, 10-մարգագետնատափաստանային տիպիկ խճաքարային, 22-Անտառային դարչնագույն տիպիկ տափաստանային, 24 –Անտառային դարչնագույն կարբոնատային տափաստանային, 56- Գետադարավանդահունային մարգագետնացված կոպճային



Պատկեր 16: Հողային պրոֆիլ Մեղրի գետի գետահովտում



**Հողագոյացնող ապարների տարածման  
սխեմատիկ քարտեզ**



- 1 Ժամանակակից այրովիալ առաջացումներ
- 2 Անդեզիտաբազալտների, դոլերիտային բազալտների, բազալտների տեղակուտակային - ողողաբերուկային առաջացումներ
- 3 Ֆոնոլիտների, տրախիանդեզիտների, տրախիտների, անդեզիտադագիտների և անդեզիտների տեղակուտակային - ողողաբերուկային առաջացումներ
- 4 Կարբոնատային ապարների տեղակուտակային - ողողաբերուկային առաջացումներ
- 5 Հրաբխային փշրաքարերի, տուֆափշրաքարերի, գրաուվակների, կոնգլոմերատների և այլ հրաբխածին նստվածքային ապարների տեղակուտակային - ողողաբերուկային առաջացումներ
- 6 Քվարցիտների, կավային թերթաքարերի, ամֆիբոլիտների, ֆիլիտների տեղակուտակային - ողողաբերուկային առաջացումներ
- 7 Գրանիտների, գրանիտազնյսերի, գրանիտոիդների և գրանոդիորիտների տեղակուտակային - ողողաբերուկային առաջացումներ


Պատկեր 17: Հողագոյացնող ապարների տարածման սխեմատիկ քարտեզ






**Սեյսմոտեկտոնիկա.** Տեկտոնական տեսակետից տվյալ տարածաշրջանը ներառված է Ծաղկունյաց-Չանգեզուրի (Մեդրիի) անտիկլինորիումային զոնայում, որը բնորոշվում է բայկալյան-ասիանյան հիմքի բարձրացված դիրքով: Չոնան հյուսիս-արևելքից սահմանափակվում է Ծիրակ-Չանգեզուրի, իսկ հարավ-արևմուտքից՝ Անի-Օրդուբադի տեկտոնական խորքային բեկվածքներով: Այս զոնայի հիմնական լեռնակազմական գործընթացները արձանագրվել են պիրենեյան ծալքավորության շրջանում (Էոցեն-միոցեն), իսկ Էոզոգիոն մակերևույթը ձևավորվել է միջին-վերին պլիոցենում, մասամբ՝ չորրորդական ժամանակաշրջանում:

Նկարագրվող տարածաշրջանում երկրաշարժերի հնարավոր ուժգնությունը կազմում է 6-8 բալ, առավելագույն հորիզոնական արագացումները 0,3-0,5g (Սեյսմիկ Պաշտպանության Ազգային Ծառայության տվյալների):




Պատկեր 18: Սյուիթի մարզի սեյսմիկ գոտիավորման քարտեզ, ՀՀ ազգային ատլաս, հատոր Ա, Երևան, 2007թ.



Պատկեր 19: Սյունիքի մարզի սեյսմոտեկտոնիկ քարտեզ, ՀՀ ազգային ատլաս, հատոր Ա, Երևան, 2007թ.

**Սողանքներ.** սողանքները հիմնականում բևորոշ են Սիսիան, Ողջի և Գեղի գետերի վերին և միջին հոսանքների ավազանին: Սողանքի վտանգ առկա է Սյունիքի մարզի հարավային հատվածում: 1994թ. հայտնաբերվել է մոտ 11 սողանքավտանգ վայր Մեղրիից դեպի Քաջարան տանող մայրուղու վրա, Մեղրիգետի ավազանի երկայնքով: Ցեխաջրերը նույնպես այս տարածքին հատուկ վտանգների թվին են դասվում և հայտնաբերվել են Սյունիքի մարզի հարավային հատվածի մի քանի տեղանքներում:



Պատկեր 20: Սողանքների տարածվածության քարտեզ (Սյունիքի մարզ), ՀՀ ազգային ատլաս, հատոր Ա, Երևան, 2007թ.


Վնասակար ցեխաջրերի հոսքեր են եղել խորհրդային ժամանակներում, Մեղրիում, Ագարակում, Լեհվազում, Կարճևանում, Կարդանիծորում և այլ վայրերում: Սակայն 1970թ.-ից ի վեր ձեռնարկված պաշտպանիչ միջոցների շնորհիվ հաջողվել է նվազեցնել տարածքների խոցելիությունը:

Ամենաբարձր վարարումը արձանագրվել է 1956թ. Մեղրիգետի վրա (61 տարի շարունակ վարվող գրառումների տվյալներով) և եղել է 87.5 մ<sup>3</sup>/վ Մեղրի ջրաչափական կայանում (274 կմ<sup>2</sup>): Դա հավասար է 0,32 մ<sup>3</sup>/վ/կմ<sup>2</sup> հոսքի մոդուլին, ինչը, մոտավորապես, համարժեք է 2% հավանականությանը:






Սողանքներ Մեղրի գետ գետի ջրավազաններում եվ Արաքս գետի մերձակա փոքր վտակներում



Պատկեր 21: Սողանքներ Մեղրի գետ գետի ջրավազաններում և Արաքս գետի մերձակա փոքր վտակներում

**Սելավներ.** Նախագծված ճանապարհահատվածն ամբողջությամբ գտնվում է միջին ակտիվության սելավային ավազանում (ցեխային սելավները տեղի են ունենում 3-10 տարին մեկ):





Պատկեր 22: Սյունիքի մարզի սելավների բարտեզ, ՀՀ ազգային ատլաս, հատոր Ա, Երևան, 2007թ.

**Էրոզիա.** Էրոզիան հիմնականում պայմանավորված է մարդածին ազդեցությամբ: Հյուսիս հարավ ավտոմայրուղու Քաջարան – Ագարակ հատվածի համար հայցվող տարածքում հողերի էրոզացվածության աստիճանը բարձր է / III-IV, 25-45%/ աստիճանի: Պատճառը այն է, որ Մեղրի գետի հովտով է անցնում M2 միջպետական ավտոմայրուղին, այստեղ են գտնվում մի քանի բնակավայրեր, տարածաշրջանում զարգացած է հանքարդյունաբերությունը: Բացի այդ ցածրադիր տեղամասերում, Երևան –Մեղրի ավտոմայրուղու շրջակայքում, հողը գտնվում է ինտենսիվ գյուղատնտեսական շրջանառության մեջ՝ հիմնականում որպես վարելահողեր և առավել հասանելի գյուղամերձ արոտավայրեր: Հողերի էրոզացվածությունը II աստիճանի է խոտհարքերում /1-10%/, և բարձրադիր լեռնային արոտավայրերում:



## 5.2 ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ

### 5.2.1 Ֆլորա

Հյուսիս-հարավ ավտոմայրուղու ծրագրով նախատեսված Քաջարան – Ագարակ հատվածի (Ծրագրի) համար հայցվող տարածքը գտնվում է Սյունիքի մարզում, Չանգեզուրի և Մեղրու ֆլորիսիկ շրջաններում:

Հայցվող տարածքում բուսական համակեցությունների հիմնական տիպերն են կիսանապատային, տափաստանային, քսերոֆիլ հետանտառային՝ շիբլյակ, նոսրանտառային և անտառային: Հանդիպում են նաև բուսականության ինտրոզոնալ տիպեր՝ (գետահովտային) հունամերձ, ջրա-ճահճային, ինչպես նաև պետրոֆիլ՝ ժայռային, փլվածքների, քարաթափուկների:

- **Լայնատերեզ անտառներ**

Հայցվող տարածքում անտառները հիմնականում տեղաբաշխված են բարձր թեթևություններ ունեցող լանջերի (30% և ավելի) վրա և ունեն պաշտպանական նշանակություն: Դիտարկվող տարածաշրջանի անտառածածկում կա կաղնու գերակշռությամբ երկու անտառային Էկոհամակարգ՝ Լեռնածոր գյուղի շրջանցման հատվածը՝ կաղնու և բոխու գերակշռությամբ սաղարթավոր անտառ (A), և թունելի Մեղրի գետի հովիտ ելքի ճանապարհային հանգույցում սաղարթախիտ խառը անտառ կաղնու գերակշռությամբ (C): Հայաստանում կաղնուտները ունեն հետևյալ կազմը. 750-ից 1200 մ բարձրություններում տարածված են արաքսյան կաղնու (*Quercus araxina*), 1200-ից 1500 մ վրա վրացական կաղնու (*Quercus iberica*), 1400-2500 մ վրա արևելյան կաղնու համակեցությունները:

- **Քսերոֆիլ նոսրանտառներ**

Տարածքում հանդիպում են ինչպես լայնատերև նոսրանտառներ, այնպես է խառը՝ գիհու տեսակների մասնակցությամբ:

- **Տափաստանային բուսականություն**

Քանի որ ծրագրի համար նախատեսվող տարածքը լեռնային է, տափաստանները այստեղ մեծ մակերեսներ չեն զբաղեցնում, կան լեռնային տափաստանների ընդհատվող հատվածներ, որոնք ունեն հարուստ բուսակազմ:

- **Հետանտառային չոր բուսականություն (շիբլյակ)**
- **Կիսանապատային բուսականություն**
- **Գետահովտային (հունամերձ) ինտրոզոնալ բուսականություն**

Ծրագրով նախատեսված ավտոմայրուղու ծրագիծը համարյա ամբողջությամբ (բացառությամբ թունելի հատվածի) անցնում է սկզբում Ողջի, ապա Մեղրի գետ գետերի հովտով՝ բազմաթիվ անգամ կատարելով գետանցումներ:

- **Պետրոֆիլ ինտրոզոնալ բուսականություն**





Ասպիրակ (*Spiraea crenata*)



Գիհի (*Juniperus L.*)



Ցաքի (*Paliurus spina-christi*)



Խնկենի (*Anacardiaceae*)



Դժնիկ (*Rhamnus Spathulitolia*)



Փետրախոտ (*Stachys, Lamioideae*)



Տարածքի բուսականությունը ներկայացված է՝

- ա) Տափաստանային վեգետացիայով՝ հացահատիկային բույսեր և թփեր
- բ) Անտառային վեգետացիայով՝ ներկայացված արևելյան տեսակի չոր կաղնու փայտով
- գ) Ալպյան վեգետացիայով՝ ցածրադիր ալպյան մարգագետիններով
- դ) Ալպյան վեգետացիա՝ համալիր ալպյան մարգագետինների խոտածածկույթով, շիբլյակի խմբակցություններով և սաղարթավոր նոսր անտառներով
- ե) Անտառային վեգետացիայով՝ կաղնու և բոխու անտառներով (կաղնու արևելյան տեսակ)

Ֆլորայի կազմում գերակշռում են երկշաքիլավորները (Dicotyledones)՝ 299 տեսակ, 194 ցեղ, 63 ընտանիք: Միաշաքիլավորները (Monocotyledones) ներկայացված են 51 տեսակով, 37 ցեղով, 15 ընտանիքով: Մերկասերմերը (Gymnospermae), պտերանմանները (Pteridales), ձիաձետանմանները (Equisetales), կանաչ մամուռները (Mosses) միասին կազմում են բացահայտված տեսակների 3.6%-ը (13 տեսակ):

Չանգեզուրի շրջանում գերակշռում են անտառային և ալպյան բուսատեսակները: Արաքս գետի հովտում՝ մինչև 600մ բարձրություններում լեռնա-չորասեր տրագականտների և տոմիլյարների խմբակցություններն են, ավելի վեր՝ սաղարթավոր նոսր անտառներ: Տարածքում առկա են կաղնու անտառներ, կան նաև բոխու, թխկու, հացենու, գիհու զանգվածներ: Անտառների համար շատ բնորոշ են վայրի պտղատու ծառերը: Տեղ-տեղ հանդիպում է նաև տափաստանային բուսածածկույթը:

Մի շարք բուսատեսակներ համարվում են վտանգված և գրանցվել են Հայաստանի Կարմիր Գրքում: Դրանց մի մասը Հարավային Կովկասի հազվագյուտ բուսատեսակներն են (Տե՛ս Հավելված 5):

### 5.2.2 Ֆաունա

Հայաստանի հարավային մարզերի կենդանական աշխարհը մեծապես կրում է փոքրասիական կենդանաաշխարհագրական մարզի / ընդգրկում է Կուր-Արաքսյան դաշտավայրերին կից Նախալեռները/ ազդեցությունը, ինչի շնորհիվ կան կենդանատեսակներ, որոնք հանդիպում են միայն այս տարածաշրջանում: Սակայն քիչ չեն նաև այնպիսիք, որոնք ընդհանուր են Հայաստանի մյուս շրջանների համար: Բացի դրանից, Հյուսիս-հարավ ավտոմայրուղու ծրագծի համար հայցվող տարածքի տարածաշրջանի կենդանական աշխարհի հարստությանը մեծապես նպաստում է բնության տարրերի բազմազանությունը և ծրագծի բարձրունքային մեծ տարբերությունը: Ընդ որում Արաքսի հովիտը, շնորհիվ մերձարևադարձային կլիմայի, ուղղահայաց միգրացիա կատարող բազմաթիվ թռչունների համար կարող է լինել կենսամիջավայր ցուրտ ամիսների ընթացքում, և միջանկյալ հանգստատեղ չլող թռչունների համար:

Այս ամենի արդյունքում ավտոմայրուղու ծրագծում առկա է կենդանատեսակների մեծ բազմազանություն:





Բեզոարյան այծ (*Capra aegagrus*)



Կովկասյան ընձառյուծ (*Panthera pardus*)



Հնդկական մացառախոզը (*Hystrix indica*)



Հայկական իծ (*Montivipera raddei*)

**Անողնաշարավորներ.** Սյունիքի մարզը հարուստ է ֆաունայի էնդեմիկ տեսակներով: Ընդհանուր առմամբ Սյունիքի մարզում հայտնի են անողնաշարավորների 70 կարգերի ներկայացուցիչներ: Ամենամեծ թվաքանակը կազմում են միջատները, որոնք հետազոտված տարածքում ներկայացված են 29 կարգով: Հայաստանի կենդանական աշխարհի կարգաբանական խմբերի վերաբերյալ տարբեր հրապարակումների վերլուծությունը թույլ տվեց հայտնաբերել Սյունիքի մարզից 1735 տեսակ, որոնք պատկանում են միջատների դասին և փափկամարմինների տիպին: Հայաստանի Կարմիր գրքում գրանցված հազվադեպ և անհետացող 153 անողնաշարավոր կենդանատեսակներից Սյունիքի մարզում ներկայացված են 55-ը (5 փափկամարմին և 50 միջատ):

**Երկկենցաղներ եվ սողուններ.** Երկկենցաղներից ամենուրեք լայն տարածում ունեն Լճագորտը /*Rana ridibunda*/, Կանաչ (կամ Փոփոխական/ դողոշը (*Bufo viridis*): Բարձրադիր գոտիներում, Մեղրի գետի վերին հոսանքներում հևարավոր է Անդրկովկասյան գորտի (*Rana macrocnemis*), անտառային գոտում Շելկովնիկովի ծառագորտի (*Hyla arborea shelkovnikovi*) ներկայությունը:

Սողունները հիմնականում զբաղեցնում են ավտոմայրուղու ծրագծի ցածրադիր, քսերոֆիլ նոսրանտառային բնական բուսածածկի տարածքները և ժայռոտ տեղամասերը, որտեղ նրանց համար կա սնունդ և բնադրավայրեր: Մողեսներից այգիներում, անտառային բացատներում հաճախակի հանդիպում են դեղնափորիկը (*Pseudopus apodus*), քարքարոտ վայրերում, քարե ցանկապատերում ու հին պատերում Ռադդեի ժայռային մողեսը (*Darevskia raddei*), միջին մողեսը (*Lacerta media*): Օձերից տարածված է Գյուրզան (*Macrovipera lebetina*): Ստորև աղյուսակի տեսքով ներկայացվում է



երկկենդանիների ու սողունների ցանկը և նրանց հանդիպելու հնարավորությունը (տարածման արեալը) ավտամայրուղու ծրագծում:

**Թռչուններ.** Հայաստանում գրանցված թռչունների 345 տեսակներից, ջրամերձ թռչուններից բացի, համարյա մնացածին կարելի է հանդիպել ավտոմայրուղու համար հայցվող տարածքում: Ստորև աղյուսակի տեսքով ներկայացվում է թռչունների ցանկը, որոնց մեծ հավանականությամբ կարելի է հանդիպել ավտոմայրուղու համար հայցվող տարածքի տարածաշրջանում և նրանց բնակության բիոտոպերը: Աղյուսակի վերջին հինգ թռչնատեսակը լուսանկարել են տեղում և տեղադրել inaturalist.com կայքում բնասերներ հետազոտողները:

Բնական կենսապայմանների կրճատման և վերափոխման հետևանքով շատ տեսակներ (ագռավ, կաչաղակ, կեռնեխ, տատրակ, շամփրուկ և այլն) հարմարվել են մարդու հարևանությամբ ապրելուն: Արաբդի հովիտը, հաշվի առնելով տեղի մեղմ կլիման, կարող է լինել միգրացիոն ուղի և ժամանակավոր ապաստան հանդիսանալ որոշ ջրլող թռչունների համար վաղ գարնանային ամիսներին:

**Կաթնասուններ.** Կաթնասուններին դիտարկելը դժվար է, որքանով նրանց մեծ մասը ապրում են թաքնված կյանքով: Նրանց ներկայության մասին հաճախ կարելի է դատողություն անել հայտնաբերելով նրանց կենսագործունեության արդյունքները (բներ, արտաթորանք, բնական միջավայրի վրա կենսագործունեության հետքեր և այլն):

Ավտոմայրուղու ծրագծին հարակից բարձրադիր անտառներում կաթնասուններից ապրում են լուսանը (*Felis lynx*), անտառային կատուն (*Felis silvestris caucasica*), այծյամը (*Capreolus capreolus*), վայրի խոզը (*Sus scrofa*), գայլը (*Canis lupus*), գորշուկը (*Meles meles*) և այլն: Եվրոպական նապաստակը (*Lepus europaeus*) և աղվեսը (*Vulpes vulpes*) գերադասում են ավելի ցածրադիր տեղանք, չոր լանջեր, թփուտներ, ընդ որում աղվեսը աստիճանաբար սովորել է մարդու ներկայությանը:

Հետազոտվող տարածաշրջանում կրծողներից հավանական է հանդիպել դաշտամուկը (*Arvicolinae*), ճագարամուկը (*Dipodidae*), կույր մուկը (*Mus caecus*), համստերը (*Cricetinae*):

Դաշտային աշխատանքների ընթացքում հայտնաբերվել են Անտառային կզաքսի (*Martes martes*) մնացորդներ: Քարակույտերում հավանական է հանդիպել քարակզաքսի (*Martes foina*) և աքիս (*Mustela nivalis*), այգիներում՝ սովորական ոգնի (*Erinaceus europaeus*), եղեգնուտներում՝ շնագայլեր (*Canis aureus*) և այլն բավականին բազմազան է չղջիկների տեսակային կազմը: Թռչող միջատների առատությունը և ժայռերի ճեղքեր առկայությունը որպես բնադրավայր նպաստում են նրանց տեսակային բազմազանությանը և թվաքանակին (*Տե ս Հավելված 5*):

### 5.2.3 Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Սյունիքի մարզը ունի բնության հատուկ պահպանվող տարածքների բավականաչափ զարգացած և խիտ ցանց: Ծրագրի հետ կապված ԲՀՊՏ-ների համառոտ նկարագրերը ներկայացված են ստորև.

#### «Արեվիկ» ազգային պարկ

- Ազգային պարկի ստեղծման տարեթիվը՝ ՀՀ կառավարության 15.10.2009թ. N 1209-Ն որոշում:
- ՀՀ կառավարության 02.07.2015 թիվ 731-Ն որոշմամբ հաստատվել են ազգային պարկի սահմանները և որոշվել տարածքի մակերեսը՝ 31211.19 հա:



- Գտնվելու վայրը՝ Սյունիքի մարզ, Չանգեզուրի լեռնաշղթայի Մեղրի լեռնաբազուկի հարավային լանջերի ծ.մ. 800- 3000մ:
- Ստեղծման նպատակը՝ Մեղրի, Շվանիձոր և Նյուվադի գետերի ջրհավաք ավազանների տարածքներում բնական Էկոհամակարգերի, դրանց կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության, բնական պաշարների, բնության եզակի հուշարձանների, Էնդեմիկ և հազվագյուտ կենդանիների միջսահմանային բնակության միջավայրերի պահպանությունը, բնականոն զարգացումը, վերարտադրությունն ու կայուն օգտագործումն ապահովելու համար:
- Գերատեսչական ենթակայությունը՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն, <<Չանգեզուր>> կենսոլորտային համալիր>> ՊՈԱԿ:  
**<<Չանգեզուր>> պետական արգելավայր**
- Արգելավայրի ստեղծման տարեթիվը՝ ՀՀ կառավարության 15. 10.2009թ. N 1187-Ն որոշում
- ՀՀ կառավարության 02.07.2015 թիվ 731-Ն որոշմամբ սահմանվել է արգելավայրի տարածքը՝ 25711.6 հա:
- Գտնվելու վայրը՝ Սյունիքի մարզ, Բարգուշատի լեռնաշղթայի հարավային և Չանգեզուրի լեռնաշղթայի արևելյան լանջերի ծ.մ. 2100-3500 մ:
- Ստեղծման նպատակը՝ մերձալպյան մարգագետնային և մարգագետնատափաստանային բնական Էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության եզակի հուշարձանների, բնական պաշարների բնականոն զարգացումը, պահպանությունը, պաշտպանությունը, վերականգնումը, վերարտադրությունն ինչպես նաև բնական և ռեկրեացիոն ռեսուրսների կայուն օգտագործումը:
- Գերատեսչական ենթակայությունը՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն, <<Չանգեզուր>> կենսոլորտային համալիր>> ՊՈԱԿ:  
**<<Բողաքարի>> պետական արգելավայր**
- Արգելավայրի ստեղծման տարեթիվը՝ ՀՍՍՀ ՍՍ 10.08.1989թ. N 400 որոշում:
- Տարածքը՝ 2728 հա:
- Գտնվելու վայրը՝ Սյունիքի մարզ, Մեղրու տարածաշրջան, Հարավային Չանգեզուրի լեռնաշղթայի լանջերին, Մեղրի անտառտնտեսություն, 1400-2100մ:
- Ստեղծման նպատակը՝ հայկական ֆլորայի ու ֆանայի տարածաշրջանի տիպիկ ներկայացուցիչները:
- Գերատեսչական ենթակայությունը՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն, <<Չանգեզուր>> կենսոլորտային համալիր>> ՊՈԱԿ:

**Չանգեզուրի կենսոլորտային համալիր**

«Չանգեզուր» կենսոլորտային համալիր ՊՈԱԿ-ը հիմնադրվել է 2013 թվականի դեկտեմբերի 19-ին; այն կազմում է 79660.5 հա տարածք: Նպատակն է պահպանել, պաշտպանել և վերարտադրել նրա կենդանական և բուսական աշխարհը, բնական Էկոհամակարգերը, լանդշաֆտային բազմազանությունը, բնության եզակի հուշարձանները, բնական պաշարների կայուն զարգացումը:





«Չանգեզուր» կենսոլորտային համալիր »ՊՈԱԿ-ը բաղկացած է ՀՀ Սյունիքի մարզի հատուկ պահպանվող տարածքներից. արգելավայրեր, արգելոց և ազգային պարկ: Համաձայն ՀՀ կառավարության «Չանգեզուր» կենսոլորտային համալիր »ՊՈԱԿ-ի N929- Ն հրամանագրի (08.09.2016 թ.) ՊՈԱԿ-ը պահպանության աշխատանքներ է իրականացնում աղյուսակ 13-ում և պատկեր 26-ում ներկայացված հատուկ պահպանվող տարածքներում:


Աղյուսակ 11: Թիրախավորված պահպանվող տարածքները

ՊՏ անունը	Հիմնադրման տարին	Չափ, հա
«Արևիկ» ազգային պարկ	2009	31,211.13
Բողաքարի պետական արգելավայր	1958	2,728.00
Չանգեզուրի պետական արգելավայր	2009	25,711.60






Zangezur Biosphere Complex and Boundaries of Communities



Պատկեր 23: «Չանգեզուր» կենսոլորտային համալիրի քարտեզ

Նոր ճանապարհի որոշ հատվածներ շոշափում են «Չանգեզուր» կենսոլորտային համալիրի տարածքը («Արևիկ» ազգային պարկ): Նախնական ՇՄԱԳ-նախագծի նախապատրաստման ընթացքում տեղի են ունեցել բանակցություններ «Չանգեզուր» կենսոլորտային համալիրի ՊՈԱԿ-ի պաշտոնական ներկայացուցիչների հետ: Նրանք տեղեկացրեցին «Հարավային Կովկասի տարածաշրջանում Էկոռեգիոնալ պահպանության ծրագրի, պահպանվող տարածքների աջակցության ծրագրի» ընթացիկ ծրագրի մասին, որով «Չանգեզուր» կենսոլորտային համալիրի տակ գտնվող հատուկ պահպանվող տարածքների սահմանները կճշտվեն և արդյունքում պաշտոնապես կհաստատվեն ՀՀ կառավարության կողմից: Համագործակցելով վերոհիշյալ ծրագրի ներկայացուցիչների հետ, պատրաստվել է քարտեզի նախագիծ, որը ցույց է տալիս Քաջարան-Ազարակ հատվածի և դրա հարակից պահպանվող տարածքների նոր ճանապարհի ծրագիծը, որը ներկայացված է ստորև պատկեր 27-ում:



Պատկեր 24: Ծանապարհի ծրագծի հատում Զանգեզուրի կենսոլորտային համալիրի հետ

Զանգեզուրի կենսոլորտային համալիրի հետ հատումը հստակ կպարզվի մանրամասն վերլուծության և վերջնական ՇՄԱԳ-ի պատրաստման ընթացքում: Վերոհիշյալ առաջադրանքի իրականացման համար կկատարվեն դաշտային այցելություններ՝ համալիրի ներկայացուցիչների հետ, ինչպես նաև քննարկումներ ՇՄՆ հետ, իսկ արդյունքները կարձանագրվեն:

### 5.2.4 Բնական հուշարձաններ

Սյունիքի մարզում շատ բնական հուշարձաններ կան: Կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967 որոշմամբ ընդունվել է ՀՀ բնական հուշարձանների ցանկը: Հիմք ընդունելով բնական հուշարձանների նշված Կառավարության որոշման ցուցակը՝ պատրաստվել և ստորև ներկայացված է Աղյուսակ 14-ը, որը ցույց է տալիս Քաջարան-Ազարակ ճանապարհին հարող տարածքներում տեղակայված բնական հուշարձանները: Ծագրի նախապատրաստման ընթացքում հնարավոր ազդեցություն կրող բնական հուշարձանները մանրամասնորեն կուսումնասիրվեն և կներկայացվեն վերջնական ՇՄԱԳ տարբերակում, իսկ ուղղակի ազդեցության դեպքում կմշակվեն և կներկայացվեն համապատասխան երաշխիքներ դրանց պահպանության վերաբերյալ:



Աղյուսակ 12: Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկ

NN ը/կ	Անվանումը (նկարագիրը)	Տեղադիրքը
Երկրաբանական հուշարձաններ		
1.	«Անանուն» ռելիեֆի փոքր ձևեր	Սյունիքի մարզ, Քաջարանի հանքային ջրի աղբյուրից հս-արլ, Ողջի գետի ձախ ափին
2.	«Շիշբար» (Բաղաբար) դայկա	Սյունիքի մարզ, Բաղաբար գետի աջ և ձախ կողմերում (պետք է հստակեցնել որ մասում, գետի երկարությունը 14 կմ է, սկիզբ է առնում Չանգեզուրի լեռներից և խառնվում է Մեղրի գետին)
3.	«Ագարակի» բրածո ֆլորա	Սյունիքի մարզ, Ագարակ քաղաք
Ջրաերկրաբանական հուշարձաններ		
Ծրագիծը մոտ չի նացնում որևէ ջրաերկրաբանական հուշարձանի:		
Ջրագրական հուշարձաններ		
1.	«Ծաղկարի» լիճ	Սյունիքի մարզ, Չանգեզուրի լեռնաշղթայի կատարային հատվածում, Ծաղկարի գետի վերնամասում, Քաջարան քաղաքից մոտ 10 կմ հվ-արմ, ծ.մ-ից 3271,5 մ բարձրության վրա (հեռավորությունը ծրագծից մոտ 7 կմ է)
2.	«Կապուտան» (Գոգի) լիճ	Սյունիքի մարզ, Քաջարան գետի ակունքներում, Քաջարան քաղաքից մոտ 5-6 կմ հվ-արմ, ծ.մ-ից 3202 մ բարձրության վրա
3.	«Գազանա» լիճ	Սյունիքի մարզ, Գեղի գյուղի ակունքներում, Գեղի գյուղից մոտ 9 կմ հս-արլ, ծ.մ-ից 3111,8 մ բարձրության վրա
4.	«Կապույտ» լիճ	Սյունիքի մարզ, Մեղրի գետի ակունքներում, Լիճք գյուղից մոտ 8 կմ հս-արմ (հեռավորությունը ծրագծից մոտ 7 կմ է)



5.	«Կապուտջուղ» ջրվեժներ	Սյունիքի մարզ, Քաջարան քաղաքից 3.0 կմ արմ, Կապուտջուղ գետակի վրա
6.	«Վարդանիձոր» ջրվեժ	Սյունիքի մարզ, Վարդանիձոր գյուղից 2.5 կմ հս-արմ, Բերդաբար գետի Վարդանիձոր վտակի վրա
7.	«Պառավաձոր» ջրվեժ	Սյունիքի մարզ, Բերդաբար գետի ծախակողմյան վտակի վրա, Վարդանիձոր գյուղից 3 կմ հս-արմ
Բնապատմական հուշարձաններ		
Ծրագրի ծրագրի մոտ չի նացնում որևէ բնապահպանական հուշարձանի:		
Կենսաբանական հուշարձաններ		
1.	«Մեղրիի սոսի»	Սյունիքի մարզ, քաղ. Մեղրի

### 5.3 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹՅԱՆԻ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ծրագրի առաջարկվող տարածքը գտնվում է երկրի հարավային մասում՝ Սյունիքի մարզում:

**Սյունիքի մարզ**

**Տարածքը՝** 4506 կմ<sup>2</sup>;

**Համայնքներ, 2019թ. տարեսկզբի դրությամբ՝** 8

**Քաղաքները՝** Կապան (մարզկենտրոն), Գորիս, Սիսիան, Քաջարան, Մեղրի, Ագարակ, Դաստակերտ;

**Գյուղեր՝** 131;

**Բնակչության թվաքանակը 2019թ. տարեսկզբի դրությամբ՝** 137.6 հազ. մարդ.

**Այդ թվում՝ քաղաքային –** 93.4 հազ. մարդ; **գյուղական –** 44.2 հազ. մարդ:



Պատկեր 25: Սյունիք մարզի քարտեզ

Սյունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հարավում: Մարզը հյուսիսից սահմանակից է Վայոց ձորի մարզին, հարավից՝ պետական սահմանով սահմանակից է Իրանին (սահմանի երկարությունը 42 կմ է), արևմուտքից՝ Նախիջևանին և արևելքից՝ Արցախին:

Սյունիքի մարզը զբաղեցնում է Չանգեզուր բնաշխարհի տարածքը, որը ներառում է Որոտան, Ողջի գետերի վերին ու միջին հոսանքների ավազանը և Չանգեզուրի՝ Մեծ Կովկասից հետո Հարավային Կովկասում ամենաբարձր լեռնաշղթայի, արևելյան լանջերը: Մարզի ամենաբարձր լեռնագագաթը Կապուտջուղն է (3906 մ), իսկ ամենացածր վայրը՝ Մեղրու կիրճը (Արաքսի հովիտ 380մ):

Սյունիքի մարզը, գրավելով ռազմավարական և աշխարհաբաղադարական նշանակության կարևոր դիրք, ունենալով բնահումքային հարուստ պաշարներ, արտադրական մեծ ներուժ և հանդիսանալով հանրապետության ամենախոշոր վարչական ու տնտեսական մարզերից մեկը, միաժամանակ մնում է





համեմատաբար քիչ բնակեցված և տնտեսապես թույլ յուրացված, ինչը մասամբ պայմանավորված է մայրաքաղաքից ունեցած մեծ հեռավորությամբ և տրանսպորտային հաղորդակցության այլընտրանքային միջոցների բացակայությամբ:

Օգտակար հանածոներով ամենահարուստ մարզն է: Դրանցից կարևորագույններն են՝ գունավոր (պղինձ, մոլիբդեն, ցինկ և այլ գունավոր) և թանկարժեք (ոսկի, արծաթ) մետաղների հանքաքարերը, ինչպես նաև ոչ մետաղային օգտակար հանածոների մի ամբողջ շարք (շինարարական և երեսապատման քարեր, բազալտային հումք, կրաքարի և այրվող թերթաքարերի, մարմարի, գրանիտի, պերլիտի և դիատոմիտների պաշարներ):

Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռող արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներն են:

2018թ.-ին մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները Հայաստանի Հանրապետության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 16.7 %,
- գյուղատնտեսություն՝ 7.1 %,
- շինարարություն՝ 5.1 %,
- մանրածախ առևտուր՝ 1.6 %,
- ծառայություններ՝ 2.5 %:

Մարզի արդյունաբերության հիմնական ճյուղը հանքարդյունաբերությունն է, սննդամթերքի և էլեկտրաէներգիայի արտադրությունը: Մարզում արտադրվող էլեկտրաէներգիայի գերակշիռ մասը բաժին է ընկնում Որոտանի ՀԷԿ-ի կասկադին:

Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է բուսաբուծության (մասնավորապես՝ հացահատիկային մշակաբույսերի և կարտոֆիլի արտադրություն) և անասնաբուծության (մասնավորապես՝ խոշոր և մանր եղջերավոր կենդանիների բուծում) մեջ:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի):

Մարզի տարածքով է անցնում Հայաստանի Իրանի Իսլամական Հանրապետության հետ կապող ավտոմայրուղին, որն Էսկան դեր ունի մարզի տնտեսության զարգացման գործում: 2008թ. շահագործման է հանձնվել «Կապան-Ծավ-Մեղրի» ռազմավարական նշանակություն ունեցող ավտոմայրուղին, որը, որպես այլընտրանք «Կապան-Քաջարան-Մեղրի» միջպետական ճանապարհին՝ տեխնիկական ցուցանիշներով գերազանցում է վերջինիս: Մարզով են անցնում Արցախը Հայաստանին կապող կարևոր ավտոմայրուղին և Իրանի Իսլամական Հանրապետությունը ցամաքային անմիջական կապով Հայաստանին կապող միակ ճանապարհը:

Մարզկենտրոնը՝ Կապան քաղաքը (2019թ. տարեսկզբին՝ 42.3 հազ. մարդ) գտնվում է հուստուկի լեռան ստորոտում (3 201 մ), Երևանից 301 կմ հեռավորության վրա: Տնտեսության առաջատար ոլորտն արդյունաբերությունն է, ընդհանուր ծավալում գերակշռող հանքարդյունաբերությունն է, որից կարևորագույններն են գունավոր և ազնիվ մետաղների արդյունահանումը: Որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև մշակող արդյունաբերությունը (սննդամթերքի, մանածագործական արտադրատեսակների ոչ մետաղական հանքային արտադրատեսակների, այլումինե և մետաղապլաստիկ իրերի, բնափայտի



մշակման ու փայտե արտադրատեսակների, կահույքի և էլեկտրական արտադրության) և էլեկտրաէներգիայի արտադրությունը:

Տվյալ ծրագրով նախատեսված ճանապարհահատվածը անցնելու է 2 բազմաբնակավայր համայնքների (Քաջարան և Մեղրի) տարածքով, որոնցում հիմնական ազդակիր են հանդիսանալու հետևյալ գյուղերն ու քաղաքները (Աղյուսակ 15).

Աղյուսակ 13: Ազդակիր համայնքներ

Համայնքներ	Գյուղեր / Քաղաքներ
Քաջարան	Լեռնաձոր գյուղ
	Քաջարան քաղաք
Մեղրի	Տաշտուն գյուղ
	Լիճք գյուղ
	Վարդանիձոր գյուղ
	Վահրավար գյուղ
	Գուղեմնիս գյուղ
	Լեիվազ գյուղ
	Կուրիս գյուղ
	Կարճևան գյուղ
	Մեղրի քաղաք
	Ագարակ քաղաք

**Համայնք՝ Քաջարան**

**Բարձրությունը ծովի մակարդակից** - առավելագույնը՝ 3904մ (Կապուտջուղ լ.), նվազագույնը՝ 1200 մ

**Տարածքի մակերեսը՝** 58,210.2 հա

**Բնակչություն՝** 8233

**Քաջարան** խոշորացված համայնքը կազմավորվել է 2017թ.՝ Քաջարան քաղաքային և Քաջարանց, Լեռնաձոր, Գեղի, Նոր Աստղաբերդ գյուղական համայնքների միավորմամբ: Համայնքի կենտրոնը Քաջարան քաղաքն է: Համայնքը ընդգրկում է 21 բնակավայր. Քաջարան քաղաքային բնակավայրը և Քաջարանց, Լեռնաձոր, Փուխրուտ, Կաթնառատ, Ձագիկավան, Բաբիկավան, Անդոկավան, Հովշուտ, Գեղավանք, Գեղի, Գետիշեն, Նոր Աստղաբերդ, Ոչեթի, Աջեբաջ, Կարդ, Ներքին Գիրաթաղ, Վերին Գիրաթաղ, Կիցք գյուղական բնակավայրերը: Անհիշելի ժամանակներից Քաջարանի բնակավայր լինելու մասին են վկայում Գանձասար լեռան վրա մինչև 1950-ական թվականները պահպանված հեթանոսական մատուռը, քաղաքի տարածքում հայտնաբերված հանքախորշերը, ձուլարանների հետքերը, հանքանյութի թափվածքներ: Դրանք վկայում են, որ Քաջարանի տարածքում պղինձ են ձուլել դեռևս բրոնզի դարում: Քաղաքի տարածքը մաս է կազմել պատմական Սյունիք նահանգի Չորք գավառին:

Քաջարան բազմաբնակավայր համայնքը կազմավորվել է «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ



և լրացումներ կատարելու մասին» ՀՀ 2017 թվականի հունիսի 9-ի ՀՕ-93-Ն օրենքի համաձայն, Կապանի տարածաշրջանի 5 համայնքների միավորման արդյունքում:

Ընդգրկում է 21 բնակավայր, որից մեկը Քաջարան քաղաքն է: Մյուս բոլոր բնակավայրերը գյուղական բնակավայրեր են:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 102-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց լիազորությունները ստանձնել են 2017 թվականի նոյեմբերի 13-ից:

### **Գյուղ` Լեռնաձոր**

Բնակչություն` 344

Հեռավորությունը մարզկենտրոնից` 21 կմ,

Բարձրությունը ծովի մակերևույթից` 1600 մ,

Կարգավիճակը` սահմանամերձ, լեռնային,

Մակերես` 102,87 կմ<sup>2</sup>

Նախնիների մի մասը ներգաղթել է Պարսկահայաստանի Ղարադաղի շրջանի գյուղերից:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)` 15808 հա այդ թվում`

Գյուղատնտեսական նշանակության հողեր` 9184 հա, որից` վարելահող` 66 հա, խոտհարք` 294 հա, արոտ` 3294 հա, այլ հողատեսք` 5530 հա;

Բնակավայրերի հողեր` 208 հա;

Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր` 139 հա;

Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր` 42 հա;

Հատուկ պահպանվող տարածքների հողեր` 498 հա;

Անտառային հողեր` 5578 հա, որից անտառածածկ` 4042 հա;

Ջրային հողեր` 160 հա:

### **Քաղաք` Քաջարան**

Բնակչություն` 6916

#### **Աշխարհագրական դիրքը, բնակլիմայական պայմանները**

Քաջարան քաղաքը հիմնադրվել է 1958թ` օգոստոսի 21-ին, այն գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում, Ողջի գետի ափին, Չանգեզուրի լեռնաշղթայի արևելյան ճյուղավորումների վրա, մարզկենտրոնից 25 կմ հարավ-արևմուտք, Երևանից` 345 կմ, Իրանի Իսլամական Հանրապետությունից` 50 կմ հեռավորության վրա: Բարձրությունը ծովի մակարդակից 1750-1800 մ: Քաղաքի տարածքը սահմանակից է արևմուտքում Քաջարանց, իսկ արևելքում` Լեռնաձոր գյուղին: Ռելիեֆը բարդ լեռնային է, խիստ կտրտված Ողջի գետի բազմաթիվ վտակներով: Ռելիեֆ գոյացնող հիմնական գործոնները` Էրոզիա, հողմահարություն, տեղատարում /սողանքներ/ և մարդու տնտեսական գործունեություն: Օդի ջերմաստիճանը` տարեկան միջին + 6, օդի հարաբերական խոնավությունը 65- 85 %, տեղումները 450-500 մմ, քամու տարվա միջին արագությունը հասնում է 4.5- 5.5 մ/վրկ, իսկ հազվադեպ հասնում է մինչև 20մ/վրկ-ի: Հիմնական ուղղությունները` հյուսիս - արևմտյան և արևմտյան:







### Տնտեսություն

Տնտեսության հիմնական ճյուղը հանքարդյունաբերությունն է; Քաղաքում գործում է Հայաստանի խոշորագույն արդյունաբերական ձեռնարկություններից մեկը՝ „Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ,, ՓԲԸ-ն: Գործում են նաև այլ ձեռնարկություններ՝ „Քաջարանի կոմունալ տնտեսություն,, ԲԲԸ, որը իրականացնում է քաղաքի կենցաղային աղբահանությունը, „Քաջարան համայնքի կոմունալ տնտեսություն,, ՓԲԸ՝ քաղաքի ջրի սանմաքրման աշխատանքները և „Հայաստանի Էլ ցանցեր,, ՓԲԸ Քաջարանի մասնաճյուղը; Քաղաքում իրականացվում է նաև գազամատակարարումը, որի արդյունքում քաղաքը հիմնովին գազիֆիկացված է; Քաղաքն ունի նաև բշկական հաստատություններ՝ „Քաջարանի բժշկական կենտրոն,, և Քաջարանի պոլիկլինիկա:

### Կրթություն, մշակույթ, սպորտ

Համայնքի տարածքում գործում են 2 միջնակարգ դպրոցներ, որոնք հիմնովին վերանորոգվել և ապահովված են տեղական ջեռուցման համակարգով, 2 նախադպրոցական հաստատություն, որից մեկը գտնվում է համայնքի ենթակայության տակ, իսկ մյուսը՝ „ՉՊՄԿ,, ՓԲԸ-ի; Քաղաքում գործում են նաև „Քաջարանի արհեստագործական ուսումնարան,, ՊՈԱԿ, „Քաջարանի արվեստի մանկական դպրոց,, ՊՈԱԿ, ինչպես նաև „Քաջարանի ՄՊՄՄ,,: Քաղաքի մշակութային ծրագրերը իրականացվում է Քաջարան համայնքի մշակույթի բնագավառի կողմից և անց է կացվում Քաջարանի մշակույթի պալատում; Քաղաքում գործում են Էկոլոգիական „ Կենի,, կազմակերպությունը ,որը իրականացնում է շրջակա միջավայրին առընչվող ծրագրեր, և որի շրջանակներում մշտապես աջակցում է Քաջարանի բժշկական կենտրոնի վերագինման և բուժսպասարկման բարելավմանը, „Քաջարան,, հիմնադրամը, որի ֆինանսական միջոցները գոյանում են բնակիչների կամավոր հատկացումներից, իրագործում է քաղաքի բարեկարգման , սոցիալական և դպրոցների օժանդակության ծրագրեր;

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 1996 հա, այդ թվում՝

Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 970 հա, որից՝ - խոտհարք՝ 9 հա, արոտ՝ 588 հա, այլ հողատեսք՝ 351 հա;

Բնակավայրերի հողեր՝ 105 հա;

Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլարտադրական նշանակության հողեր՝ 779 հա; Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 2 հա;

Հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 7 հա;

Անտառային հողեր՝ 124 հա, որից անտառածածկ՝ 122 հա;

Ջրային հողեր՝ 8 հա:

### Համայնք՝ Մեղրի

Բնակչություն՝ 11724

Մեղրի բազմաբնակավայր համայնքը կազմավորվել է 2016 թվականի սեպտեմբերին՝ ՀՀ Սյունիքի մարզի Մեղրու տարածաշրջանի բոլոր 13 համայնքների խոշորացման արդյունքում՝ "Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին" 2016 թվականի հունիսի 17-ի ՀՀ ՀՕ-100-Ն օրենքով:



Այն ընդգրկում է Մեղրի և Ագարակ քաղաքային, ինչպես նաև, Ալվանք, Այգեձոր, Գուղեմնիս, Թխկուտ, Լեհվազ, Լիճք, Կարճևան, Կուրիս, Նոնաձոր, Շվանիձոր, Վահրավար, Վարդանիձոր և Տաշտուն գյուղական բնակավայրերը: Հաշվառված բնակչությունն ըստ բնակավայրերի. Մեղրի՝ 4601, Ագարակ՝ 4729, Կարճևան՝ 270, Շվանիձոր՝ 339, Վահրավար՝ 35, Գուղեմնիս՝ 36, Լիճք՝ 147, Տաշտուն՝ 116, Լեհվազ՝ 627, Ալվանք՝ 289, Վարդանիձոր՝ 152, Նոնաձոր՝ 151, Թխկուտ՝ 67, Կուրիս՝ 53, Այգեձոր՝ 2:

Մեղրիի շրջանը գտնվում է Չանգեզուրի հարավում, 390 մ-ից՝ (Մեղրու կիրճ) մինչև 3904 մ (Կապուտջուղ) բարձրությունների վրա: Ունի լեռնային կտրտված մակերևույթ: Հյուսիսում և հյուսիս-արևելքում Մեղրու լեռնաշղթան է, արևմուտքում՝ Չանգեզուրի լեռնաշղթան: Տարածքի զգալի մասը զբաղեցնում է Մեղրու կիրճը: Կան ոսկու, բազմամետաղային, պղնձի, մոլիբդենի, նեֆելինային սիենիտի, երկաթի, կրաքարի հանքավայրեր: Տիրապետում են անտառային ու ալպյան մարգագետնային լանդշաֆտները:

Կլիման չոր մերձարևադարձային է, բարձրադիր մասերում՝ ցուրտ լեռնային: Հունվարի միջին ջերմաստիճանը 1 °C-ից մինչև -12 °C է, հուլիսինը՝ 8-26 °C, տարեկան տեղումները՝ 250-700 մմ, վեգետացիայի շրջանը՝ 40- 230 օր: Խոշոր գետը պետական սահմանով հոսող Արաքսն է: Տարածքով են հոսում Մեղրի, Տաշտուն, Կարճևան, Մալև և այլ գետեր: Գործում է Կարճևանի ջրանցքը:

**Գյուղ՝ Տաշտուն**

- Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 60 կմ,
- Հեռավորությունը Մեղրի քաղաքից՝ 26 կմ,
- Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1950 մ,
- Կարգավիճակը՝ սահմանամերձ, բարձր լեռնային,
- Մակերես՝ 21,60 կմ<sup>2</sup>
- Խտություն՝ 6,2 մարդ/կմ<sup>2</sup>

- Հողային և այլ բնական ռեսուրսներ
- Հողեր (ընդամենը)՝ 5026 հա այդ թվում՝

Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1373 հա, որից՝ վարելահող՝ 78 հա, բազմամյա տնկարկ՝ 4 հա, խոտհարք՝ 52 հա, արոտ՝ 502 հա, այլ հողատեսք՝ 737 հա;  
 Բնակավայրերի հողեր՝ 29 հա;  
 Արդյունաբերության, ընդերթօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 1 հա;  
 Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 27 հա;

- Հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 3485 հա;
- Անտառային հողեր՝ 97 հա, որից անտառածածկ՝ 3 հա;
- Ջրային հողեր՝ 12 հա:

**Գյուղ՝ Լիճք**

- Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 59 կմ,
- Հեռավորությունը Մեղրի քաղաքից՝ 24 կմ,
- Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1780 մ,
- Կարգավիճակը՝ սահմանամերձ, լեռնային
- Մակերես՝ 34,92 կմ<sup>2</sup>





Խտություն՝ 4,5 մարդ/կմ<sup>2</sup>

Կոչվել է նաև Լեշկին, Լեճկին, Լիճ, Լիճք, Շեշկերտ: Գյուղից վեր կան մի քանի լճեր, որի համար էլ ըստ տեղացիների, գյուղը անվանվել է Լիճք: Գյուղը կառուցվել է 1781թ.-ին: Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝ անասնապահությունը, դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 8411 հա, այդ թվում՝

Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 2404 հա, որից՝ վարելահող՝ 266 հա, խոտհարք՝ 19 հա, արոտ՝ 1004 հա, այլ հողատեսք՝ 1116 հա;

Բնակավայրերի հողեր՝ 74 հա;

Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 7 հա;

Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 26 հա;

Հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 5563 հա;

Հատուկ նշանակության հողեր՝ 1 հա;

Անտառային հողեր՝ 309 հա, որից անտառածածկ՝ 78 հա;

Ջրային հողեր՝ 28 հա:

#### Գյուղ՝ Վարդանիձոր

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 67 կմ,

Հեռավորությունը Մեղրի քաղաքից՝ 11 կմ,

Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1050 մ,

Կարգավիճակը՝ սահմանամերձ,

Մակերես՝ 23,02 կմ<sup>2</sup>

Խտություն՝ 13 մարդ/կմ<sup>2</sup>

Գտնվում է Մեղրի գետի ձախ ափին: Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝ անասնապահությունը, դաշտավարությունը: Գյուղատնտեսությամբ զբաղվում է 103 գյուղացիական տնտեսություն:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 9312 հա, այդ թվում՝

Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 5176 հա, որից՝ վարելահող՝ 125 հա, բազմամյա տնկարկ՝ 4 հա, խոտհարք՝ 12 հա, արոտ՝ 1468 հա, այլ հողատեսք՝ 3567 հա;

Բնակավայրերի հողեր՝ 54 հա;

Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 20 հա;

Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 16 հա;

Հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 4002 հա;

Անտառային հողեր՝ 36 հա, որից անտառածածկ՝ 1 հա;

Ջրային հողեր՝ 7 հա:



### Գյուղ Վահրավար

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 78 կմ,  
Հեռավորությունը Մեղրի քաղաքից՝ 11.5 կմ,  
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1380 մ,  
Կարգավիճակը՝ սահմանամերձ,  
Մակերես՝ 8,02 կմ<sup>2</sup>  
Խտություն՝ 5,9 մարդ/կմ<sup>2</sup>

Վահրավարը Հայաստանի հին բնակավայրերից է: Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝ անասնապահությունը, դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 3249 հա, այդ թվում՝

Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 626 հա, որից՝ վարելահող՝ 26 հա, բազմամյա տնկարկ՝ 13 հա, արոտ՝ 169 հա, այլ հողատեսք՝ 418 հա;

Բնակավայրերի հողեր՝ 16 հա;

Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 16 հա;

Հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 2590 հա;

Ջրային հողեր՝ 1 հա:

### Գյուղ Գուղեմնիս

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 82 կմ,  
Հեռավորությունը Մեղրի քաղաքից՝ 16 կմ,  
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1400 մ,  
Կարգավիճակը՝ սահմանամերձ,  
Մակերես՝ 15,58 կմ<sup>2</sup>  
Խտություն՝ 2,5 մարդ/կմ<sup>2</sup>

Նախկին անվանումներն են Գիղեմնաս, Գիտեմնաս, Գտանիս, Կաղեմնիս, Ուճանապար, Ուջանաբաս, Ուջանապար: Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝ անասնապահությունը, դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 1407 հա, այդ թվում՝

Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 578 հա, որից՝ վարելահող՝ 43 հա, բազմամյա տնկարկ՝ 9 հա, արոտ՝ 37 հա, այլ հողատեսք՝ 489 հա;

Բնակավայրերի հողեր՝ 17 հա;

Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 1 հա;  
Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 5 հա;

Հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 804 հա;

Ջրային հողեր՝ 2 հա:



**Գյուղ` Լեհվազ**

Հեռավորությունը մարզկենտրոնից` 73 կմ,  
Հեռավորությունը Մեղրի քաղաքից` 6 կմ,  
Բարձրությունը ծովի մակերևույթից` 900 մ,  
Կարգավիճակը` սահմանամերձ,  
Մակերես` 16,87 կմ<sup>2</sup>  
Խտություն` 16,87 մարդ/կմ<sup>2</sup>

Նախկին անվանումներն են Լեգբա, Լեգվազ, Լեկվազ, Լեհվանա, Լեյվազ, Լեվազ, Լեվագոճոր, Լիհբվազ, Լեհվազ ներքին: Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են` անասնապահությունը, դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ  
Հողեր (ընդամենը)` 3385 հա, այդ թվում`

Գյուղատնտեսական նշանակության հողեր` 1336 հա, որից` վարելահող` 77 հա, բազմամյա տնկարկ` 39 հա, խոտհարք` 12 հա, արոտ` 332 հա, այլ հողատեսք` 876 հա;

Բնակավայրերի հողեր` 57 հա;  
Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր` 4 հա;  
Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր` 17

հա;

Հատուկ պահպանվող տարածքների հողեր` 1934 հա;  
Անտառային հողեր` 22 հա, որից անտառածածկ` 22 հա;  
Ջրային հողեր` 14 հա:

**Գյուղ` Կուրիս**

Հեռավորությունը մարզկենտրոնից` 85 կմ,  
Հեռավորությունը Մեղրի քաղաքից` 15 կմ,  
Բարձրությունը ծովի մակերևույթից` 1365 մ,  
Կարգավիճակը` սահմանամերձ,  
Մակերես` 14,31 կմ<sup>2</sup>

Գտնվում է Մեղրի գետի աջ կողմում, Չանգեզուրի լեռնաշղթայի լանջին: Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են` անասնապահությունը, դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ  
Հողեր (ընդամենը)` 2013 հա, այդ թվում`

Գյուղատնտեսական նշանակության հողեր` 664 հա, որից` վարելահող` 39 հա, բազմամյա տնկարկ` 2 հա, արոտ` 28 հա, այլ հողատեսք` 596 հա;

Բնակավայրերի հողեր` 20 հա;  
Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր` 275 հա;  
Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր` 6

հա;





Հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 1023 հա;  
Անտառային հողեր՝ 24 հա, որից անտառածածկ՝ 24 հա;  
Ջրային հողեր՝ 1 հա:

#### Գյուղ՝ Կարճեվան

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 95 կմ,  
Հեռավորությունը Մեղրի քաղաքից՝ 17 կմ,  
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 920 մ,  
Կարգավիճակը՝ սահմանամերձ,  
Մակերես՝ 29,04 կմ<sup>2</sup>  
Խտություն՝ 10 մարդ/կմ<sup>2</sup>

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝ անասնապահությունը, դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ  
Հողեր (ընդամենը)՝ 4180 հա, այդ թվում՝

Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 2446 հա, որից՝ վարելահող՝ 60 հա, բազմամյա տնկարկ՝ 3 հա, արոտ՝ 90 հա, այլ հողատեսք՝ 2293 հա;

Բնակավայրերի հողեր՝ 39 հա;

Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլարտադրական նշանակության հողեր՝ 279 հա;  
Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 50

հա;

Հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 1249 հա;

Հատուկ նշանակության հողեր՝ 15 հա;

Անտառային հողեր՝ 54 հա, որից անտառածածկ՝ 54 հա;

Ջրային հողեր՝ 46 հա:

#### Քաղաք՝ Մեղրի

Հեռավորությունը Երևան քաղաքից՝ 376 կմ,

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 84 կմ,

Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 610 մ:

Մեղրին գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավ-արևելյան տարածքում: Այն Սյունիքի մարզի հարավային սահմանապահ քաղաքներից է, որը տարածված է Մեղրի գետի աջ և ձախ ափերին, որոնք կոչվում են Մեծ և Փոքր թաղեր: Քաղաքը պետական սահմանով և մայր Արաքս գետով բաժանվում է Իրանի Իսլամական Հանրապետությունից: Քաղաքի կլիման չոր և մերձարևադարձային է: Այստեղից է սկսվում Հայաստանի գարունը, իսկ աշունը ամենաուշն է հրաժեշտ տալիս: Ամառը այստեղ շոգ է, իսկ ձմեռը՝ ոչ ձյունառատ:

#### Տնտեսություն

Մեղրեցիները եղել է տոհմիկ պտղագործ ու այգեգործ: Այստեղ աճում են անուշաբույր և քաղցրահամ մրգեր: Վերջին տարիներին թուզ, նուռ, սերկևիլ, խաղող, դեղձ մրգատեսակներին ավելացել են





մերձարևադարձային կուլտուրաներ՝ արքայանարինջ, կիվի, զեյթուն և այլն: Ներկայումս քաղաքում գործում են պահածոների և գինու գործարաններ: Շինարարական կազմակերպություններից աշխատում է միայն «Մեդրու ճանշին ձեռնարկություն» ՍՊԸ-ն: Հնամենի ամֆիթատրոնի տեսք ունեցող քաղաքին առանձին հմայք են տալիս լեռնագագաթներին բազմաձև 11-րդ դարի կառույց՝ Մեդրու 6 բերդերը /բուրջեր/, դարավոր չինարիների պուրակը և 17-րդ դարի կառույցներ Ս. Մարիամ Աստվածածին, Ս. Հովհաննես, Սարգիս եկեղեցիները և Անապաստանաց վանքը: Եկեղեցու որմնանկարները պատկանում են Նաղաշ Հովնաթան դպրոցին: Մեդրին մայրաքաղաք Երևանի և Հայաստանի մարզերի հետ հաղորդակցվում է միայն ավտոտրանսպորտով: Քաղաքի տարածքով է անցնում Իրան-Հայաստան միջպետական ավտոմայրուղին: 2008 թվականի դեկտեմբերից Մեդրին բարեկամական, տնտեսական, մշակութային կապերով համագործակցում է Բելոռուսի հանրապետության Մյադելքաղաքի հետ:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 3201հա, այդ թվում՝

Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1856 հա, որից՝ վարելահող՝ 77 հա, բազմամյա տնկարկ՝ 78 հա, խոտհարք՝ 2 հա, այլ հողատեսք՝ 1699 հա;

Բնակավայրերի հողեր՝ 223 հա;

Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլարտադրական նշանակության հողեր՝ 105 հա;

Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 18

հա;

Հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 906 հա;

Հատուկ նշանակության հողեր՝ 76 հա;

Ձրային հողեր՝ 18 հա:

### Քաղաք՝ Ագարակ

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 94 կմ,

Հեռավորությունը Երևան քաղաքից՝ 410 կմ,

Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 660 մ:

Ագարակ քաղաքը հիմնադրվել է Արաքս գետի ձախ ափին 1949թ.-ին՝ որպես համանուն պղնձամոլիբդենային կոմբինատին կից բանավան: Կառուցապատումը շարունակվել է մինչև 1992թ.: Սկզբում կառուցվել են 1-2 հարկանի բնակելի առանձնատներ, հետագայում՝ 3-4, իսկ 1979թ.-ից 5 հարկանի բնակելի շենքեր: 1996թ.-ին բանավանը վերանվանվել է Ագարակ քաղաք: Ագարակ քաղաքն ունի կենսական, մշակութային և սպորտային, կրթական ու ընդհանուր զարգացվածությունը ապահովող բոլոր կառույցները՝ հիվանդանոց, կոմունալ բարեկարգման տնտեսություն, մսուր-մանկապարտեզ, միջնակարգ դպրոց, արվեստի և գրադարանային ծառայության կենտրոն, մշակույթի պալատ: «Ագարակի թիվ 1 մ/մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը երկու մասնաշենքից բաղկացած հիանալի մանկապարտեզ է, որի ժամանակակից պայմաններին համապատասխանող, վերանորոգված գեղեցիկ մթնոլորտում կրթվում և դաստիարակվում են 200 երեխա: «Ագարակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը երկու մասնաշենքից բաղկացած, վերանորոգված դպրոց է, որում ուսանում, միջնակարգ կրթություն են ստանում մոտ 200 աշակերտ: «Ագարակի արտադպրոցական դաստիարակության և գրադարանային



ծառայության կենտրոն» ԲՀ–ն, որում դաստիարակվում, պարի, նկարչության, երգի և երաժշտության, մշակութային դասեր են քաղում 147 երեխաներ, վերջին ժամանակներս նոր ուժով և եռանդով է իրականացնում իր աշխատանքային գործունեությունը: Ազարակ քաղաքը գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավ- արևելյան մասում, սահմանակից է Իրանի Իսլամական Հանրապետությանը, ունի ռազմավարական նշանակություն և գտնվում է Հայաստանը Իրանի հետ կապող ավտոմայրուղուց 1 կմ հեռավորության վրա: Ազարակն ապահովված է միջին մեծության մասնավոր հյուրանոցներով, որոնց դռները միշտ բաց են ցանկացած հյուրի առջև: Ազարակ քաղաքն ունի խիստ կանոնավոր փողոցային ցանց: Փողոցները 2 տիպի են՝ համայնքային և ներթափանցանկային, համապատասխանաբար 10 մ և 6 մ լայնությամբ: Քաղաքի ինժեներատրանսպորտային հաղորդակցության ապահովվածության միակ գործող ուղին ավտոմայրուղին է: Ազարակը բնական ռեսուրսների մեծ պաշարներ ունի, որից ամենատարածվածը պղնձամոլիբդենային հումքն է: Արտադրության գերիշխող ճյուղերն են լեռնահանքային արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը: Քաղաքի տնտեսական և աշխատանքային շուկան քաղաքի ստեղծման իսկ օրվանից պայմանավորված է եղել և այսօր էլ կա «Ազարակի ՊՄ կոմբինատ» ՓԲԸ-ի գործունեությամբ: Ազարակ համայնքի հողային ֆոնդին անդրադառնալով՝ պետք է նշել, որ հողերի մեծ մասն իրենցից ներկայացնում են բնակելի, հասարակական, կոմունալ-պահեստային նշանակության կառուցապատված տարածքներ: Ազարակը՝ որպես Հայաստանի Հանրապետության հարավային դարպաս և փոքրիկ սահմանամերձ քաղաք, մոտ ապագայում մեծ հեռանկարներ ունի տարածքային, ազգաբնակչության թվի, մշակութային, տնտեսական, տրանսպորտային և այլ ոլորտների զարգացման գործում:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 326 հա, այդ թվում՝

Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 34 հա, որից՝ վարելահող՝ 22 հա, այլ հողատեսք՝ 12 հա;

Բնակավայրերի հողեր՝ 236 հա;

Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 33 հա; Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 6

հա;

Հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 4 հա;

Հատուկ նշանակության հողեր՝ 7 հա;

Ջրային հողեր՝ 7 հա:

#### 5.4 ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հանքագործությունը, գյուղատնտեսությունն ու առևտուրը երեք հիմնական տնտեսական սեկտորներն են, որոնք մարդկանց ապահովում են աշխատանքով:

##### Գյուղատնտեսություն



Գյուղատնտեսությունը, գլխավորապես՝ մրգաբուծությունն ու խառը անասնաբուծությունը, գյուղական վայրերի հիմնական տնտեսական գործունեությունն են: Մեղրին հանդիսանում է առևտրային կենտրոն. այստեղ զարգացած են թեթև արդյունաբերությունը (սննդամթերքի մշակում) և առևտուրը, ներառյալ՝ միջսահմանային առևտուրը Իրանի հետ:

### Հանքագործություն

1949 թ.-ից Սյունիքի մարզը կարևորվում է մետաղական հանքագործությամբ: Գոյություն ունեն ավելի փոքր հանքարդյունաբերական ձեռնարկություններ:

Ագարակի պղնձամոլիբդենային հանքավայրը և Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը ծրագրի տարածքի խոշոր գործատուներն են:

Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը տեղակայված է Ողջի հովտում: Գոյություն ունեցող բացահանքը աշխատում է 1,920 - 2,360մ-ի սահմաններում, իսկ Քաջարանի վերամշակման գործարանը գտնվում է ծովի մակերևույթից մոտ 1,750 մ բարձրության վրա:

### Հիդրոէներգիա

Մեղրու շրջանն ունի պոտենցիալ հիդրոէներգիայի մեծ պաշար զառիթափ տեղագրության և ջրային պաշարների շնորհիվ:

Գետի հիդրոէներգետիկական չունի սպառողական ջրօգտագործում, սակայն շեղում է ջուրն իր բնական հոսքուղուց: Գետի վրա (հոսքուղուց այլ կողմ) արդեն գործում են երեք փոքր հիդրոէներգետիկական օբյեկտներ, որոնք օգտագործում են Մեղրիգետի ջուրը: Նախատեսվում է կառուցել մեկ մեծ միջազգային հիդրոէլեկտրակայան Արաքս գետի վրա (Իրանի սահմանին):

## 5.5 ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Պատմականորեն Սյունիքը Մեծ Հայքի 15 նահանգներից մեկն է կազմում, որը վարչականորեն բաժանված է եղել 12 գավառների: Այստեղ էր գտնվում 13-րդ դարում ստեղծված Հայաստանի ամենահին համալսարանը՝ Գլաձորը:

Ներկայումս Սյունիքի մարզում հայտնի են բազմաթիվ պատմամշակութային օբյեկտներ (ՏԵՄ Հավելված 6):

Աղյուսակ 14: Ծրագրի շրջակայքում գտնվող պատմական և մշակութային հուշարձանները

Համայնք	Պատմամշակութային հուշարձաններ
Ք. Քաջարան	Գյուղի շրջակայքում կա երեք հին, 15-17-րդ դարերի գերեզմանոց, տապանագիր ունեցող խաչքարեր, հին գյուղատեղիներ (Գեչուտ և



	Սիրդարա վայրերում), «Սարդարանց» և ներկայումս կանգուն՝ 1830թ. կառուցված Օհանա կոչվող եկեղեցիները:
Թաղթա	Կիլիկիանց գյուղավայր
Լիճք	Մնաշու գյուղավայր, Մնաշու գերեզմանոց
Մալգամի	Գերեզմանոց
Վարդանիձոր	17-րդ դարի կամուրջ, Պուշկաղ գյուղավայր, Պուշկաղ գերեզմանոց
Լեհվազ	Գերեզմանոց, հին Լեհվազ գյուղավայր, ջրաղաց, դամբարան, եկեղեցի
Վահրավար	Միջնադարյան գյուղատեղիները (Կարմիր վանք, Ծավի դիք), եկեղեցիները, խաչքարերով գերեզմանոցները: Կարմրավանք եկեղեցին (17-րդ դար)
Կուրիս	15-17-րդ դդ թիթեղնապատ ծածկով եկեղեցի: Գյուղի շրջակայքում կան գյուղատեղիների ավերակներ
Կարճևան	Գյուղի շրջակայքում պահպանված բերդի ավերակները (12-րդ դար)
Ք. Մեղրի	10-րդ դարի կառույց՝ Մեղրու 6 բերդերը, դարավոր չինարիների պուրակը և 17-րդ դարի կառույցներ Ս. Մարիամ Աստվածածին, Ս. Զովհաննես, Ս. Սարգիս եկեղեցիները և Անապաստանաց վանքը

## 6. ՇՐՋԱՎԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՍՊԱՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԵՆԱՎՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

### 6.1 ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի ազդեցության տարածքում բացահայտվել են Ծրագրի ազդեցությունները (բացասական և դրական) ֆիզիկական, էկոլոգիական, հնագիտական և սոցիալ-մշակութային և տնտեսական ռեսուրսների վրա, ներառյալ՝ աշխատողների և համայնքի առողջությունն ու անվտանգությունը: Ի հայտ բերված յուրաքանչյուր ազդեցության համար, ըստ նշանակության և առաջացման, առաջարկվում է համապատասխան մեղմացնող միջոցառում Ծրագրի ողջ շրջափուլում՝ սկսած նախագծումից,



շինարարությանը նախորդող և ընթացիկ փուլերից, մինչև շահագործման և պահպանման ժամանակահատվածը:

Ծրագրի ակնկալվող ազդեցությունները կենսաֆիզիկական միջավայրի վրա (ինչպիսիք են հողի էրոզիան, աղմուկի և թրթռման բարձրացած մակարդակները, օդի և ջրի որակը), ամենայն հավանականությամբ, ժամանակավոր բնույթ կկրեն և ի հայտ կգան միայն շինարարության ընթացքում: Այդ ազդեցությունները կառավարելի են և հնարավոր կլինի դրանք նվազեցնել կամ ընդհանրապես վերացնել Բնապահպանական կառավարման պլանում առաջարկված մեղմացող միջոցառումները ժամանակին և ճիշտ իրականացնելու միջոցով: Ծրջակա միջավայրի պահպանությունը, հանրության և շինարարության աշխատողների անվտանգությունը և աշխատողների հիգիենան Ծրագրի բոլոր փուլերում լիովին կհամապատասխանեցվեն ՀՀ օրենսդրական կանոնակարգերին:

## 6.2 ԴՐԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմնական անդրսահմանային ազդեցությունն այն է, որ նոր ճանապարհային հատվածը կծառայի ապրանքների և մարդկանց տեղափոխմանը: Նախատեսվում է, որ Ծրագիրը կխթանի Հայաստանի տնտեսական աճը և տնտեսական կապերը հարևան երկրների՝ հարավային սահմանում՝ Իրանի, հյուսիսայինում՝ Վրաստանի հետ:

Ծրագիրը կապահովի կապ Ագարակի և Քաջարանի տարածաշրջանների հեռավոր համայնքների միջև: Նոր ճանապարհային հատվածը դրական ազդեցություն կունենա նշված համայնքների, տարածաշրջանի և երկրի տնտեսական զարգացման վրա:

Ճանապարհը կնախագծվի և կկառուցվի արդիական չափանիշներով՝ նպաստելով վարորդի անվտանգությանը (համապատասխան ճանապարհային գծանշում, նշաններ, անվտանգություն, ջրահեռացում, ջրթող խողովակներ, ուղեանցներ, ստորգետնյա անցումներ և կողնակներ): Ծրագրի կառուցվածքային տարրերը նախագծվելու են՝ հաշվի առնվելով տվյալ տարածքի սեյսմիկ ակտիվությունը: Ձրամեկուսացումը ներառվելու է ճանապարհի նախագծի մեջ՝ ջրի հոսքը վերահսկելու և դրանով իսկ նվազագույնի հասցնելով հողի էրոզիան և տեղային հեղեղումները: Նախագիծը կնպաստի ծրագրի կայունությանը:

Գեղատեսիլ և առողջարար բնությունը, գետերը, աղբյուրները, անտառները, լեռները, պատմական, մշակութային և բնության հուշարձաններն ու տեսարժան վայրերը, որտեղով անցնում է ճանապարհը, կարող են դառնալ զբոսաշրջային գրավիչ վայրեր:

Դրական ազդեցություններ կարող են արձանագրվել առկա հնագիտական վայրերի, հետազապեղումների, ինչպես նաև ՇՄԱԳ-ի նախապատրաստման փուլում հնագիտական ազդեցության գնահատման ընթացքում հայտնաբերված նոր հնագիտական տեղավայրերի, շինարարական աշխատանքների ընթացքում հնագիտական գտածոների հայտնաբերման արդյունքում, որոնք կարող են նոր գիտելիքներ հաղորդել հնագետներին և պատմաբաններին:

Շինարարական աշխատանքների ընթացքում ժամանակավոր աշխատատեղերը կարող են լրացուցիչ եկամուտ ապահովել տեղական համայնքների բնակիչների համար կարճատև աշխատանքային հնարավորությունների միջոցով: Ոմանք կարող են ժամանակավորապես բարելավել



իրենց վիճակը՝ ներգրավվելով Ծրագրի աշխատանքներում: Տարածաշրջանի ազգային փոքրամասնությունները, եթե նույնիսկ ենթարկվեն ազդեցության, ապա դժվար թե կրեն այլ ազդեցություն, քան ամբողջ բնակչությունը:

### 6.3 ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԵՆԱՍԵՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ

#### 6.3.1 Ազդեցություններ բուսական աշխարհի վրա եվ մեղմացնող միջոցառումներ

Կենսաբազմազանության ուսումնասիրություն կիրականացվի Ծրագրի ճանապարհային հատվածների երկայնքով՝ ըստ լանդշաֆտային բազմազանության, վերջնական ՇՄԱԳ-ի մշակման ընթացքում:

Կլիմայի բուսականության հեռացում, ինչը կհանգեցնի տեղամասում բուսականության մշտական կորստի: Առաջարկվող ծրագրի երկայնքով բույսերի տեսակների ընդհանուր քանակը ուսումնասիրվելու է պատշաճ որակավորում ունեցող բուսաբանի կողմից՝ պարզելու համար ազդեցության ենթակա ֆլորայի տեսակները վերջնական ՇՄԱԳ մշակման ընթացքում՝ հիմնվելով Արտաշատ-Սիսիան ճանապարհահատվածի մանրամասն նախագծի վրա: Ծառերի ու թփերի տեսակները, ինչպես նաև դրանց քանակը, նույնպես պարզվելու են և ներառվեն վերջնական ՇՄԱԳ-ի մեջ:

Բուսական աշխարհի Կարմիր գրքի համաձայն (կառավարության որոշում 29.01.2010թ, N 72-Ն), 35 Կարմիր գրքում ներառված տեսակներ են առկա ազդեցության ենթակա տարածքում:

Ծրագրի տարածքում պաշտպանվող տեսակները հատուկ ուշադրության են արժանանալու, ինչպես սահմանված է ՀՀ Բուսական աշխարհի մասին օրենքով (1999թ), և Կարմիր գրքի պահանջների համաձայն: ԲԿՊ-ում ներառվել են հատուկ մեղմացնող միջոցառումներ նվազեցնելու համար բուսական աշխարհի վրա բացասական ազդեցությունը և խուսափելու համար որևէ վնասակար ազդեցությունից Կարմիր գրքում ներառված բույսերի վրա: Ազդեցության ենթակա տեսակները պետք է տեղափոխվեն, ինչի համար վարձելու են որակավորված բուսաբանի:

Առաջարկվող ծրագրի երկայնքով կան մի քանի հատվածներ, որտեղ աճող ծառերն ու թփերը հատվելու են: Ըստ ուսումնասիրության՝ ծառերի և թփերի գնահատված քանակը կկազմի 13860: Ազդեցության ենթակա ծառերի ու թփերի տեղակայությունը ծրագրի երկայնքով հետևյալն է՝

Լեռնաձոր գյուղի շրջանցման հատվածը՝ 1640 մ, Լեռնաձորից թունելի մուտք՝ 400 մ: Ծառերի լրիվությունը այս հատվածում ընդունվել է 0,6, որը 50 մ լայնության վրա 3 ծառ է կազմում /ընդամենը՝ 6120 ծառ, հիմնականում կաղնի և բոխի/:





Թունելի ելքի հանգույց Մեղրի գետի հովտում, հատվածի երկարությունը՝ 400 մ, ծառերի լրիվությունը 0,4/ 50մ լայնության 1մ-ի վրա 2 ծառ/ Ընդամենը՝ 800 ծառ:

Տաշտուն գյուղի դիմաց անտառներով անցնող հատված, երկարությունը 2400 մ, ծառերի լրիվությունը՝ 0,4, հատվող ծառերի թիվը՝ 4800 /հիմնականում բոխի և կաղնի, հնարավոր է՝ գիհի/:

Մինչև Վարդանիձոր հատված, անտառային զանգվածների խախտվող երկարությունը ընդամենը 1070 մ, ծառերի լրիվությունը՝ 0,4, հատվող ծառերի թիվը՝ 2140:

Առաջարկվող շինարարության տարածքը ուսումնասիրվելու է համապատասխան որակավորմամբ բուսաբանի կողմից վերջնական ՇՄԱԳ-ի մշակման ընթացքում հիմնվելով Արտաշատ-Սիսիան ճանապարհահատվածի մանրամասն նախագծի վրա: Ծառերի ու թփերի տեսակները, ինչպես նաև դրանց քանակները կպարզաբանվեն ու կներառվեն վերջնական ՇՄԱԳ-ի մեջ: Հարկ է նշել, որ Ծագրից տուժած մասնավոր գույքով ծառերի հատուցումը կկարգավորվի ՀՕՏԾ-ով:

Որտեղ հնարավոր է, հեռացված ծառերը նորից են տնկվելու: Բոլոր տեսակի ծառերի ու թփերի տնկման աշխատանքները պետք է կազմակերպվեն կամ ուշ աշնանը, տերևաթափից հետո, կամ վաղ գարնանը: Եթե ծառերը բավականին ծեր են կամ այլ պատճառներով դրանց նորից տնկումը հնարավոր չէ, դրանցից մի մասը պետք է հատվի ճանապարհի շինարարության ընթացքում: Դրանք կարող են փոխարինվել նոր ծառերով ու թփերով՝ 1:6-ի հարաբերությամբ: Նոր ծառերը պետք է խնամել 3 տարի մինչև դրանք կենսունակ դառնան (նշում՝ 80% կենսունակ ծառերը համարվում է գերազանց): Ծատ կարևոր է օգտագործել տեղական տեսակներ: Պոտենցիալ ծառատնկման հատվածները որոշելու է Նախագծողինժենները վերջնական նախագծման փուլում:

Անտառներում հատված բոլոր ծառերը պետք է փոխհատուցվեն 1:6 հարաբերությամբ և պետք է խնամվեն հետագա 3 տարիների ընթացքում՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի հետ սերտ համագործակցությամբ: Ծինարարության և ծառատունկի աշխատանքները պետք է կատարվեն համաձայն Անտառային օրենսգրքի պահանջների: Նախքան որևէ ծառի հատումը անհրաժեշտ է հաստատում ստանալ «Հայանտառ» ՊՈԱԿ-ից:

Ձանքեր կգործադրվեն՝ անհրաժեշտ ծառերի հատումը հետագայում կրճատելու համար, երկրաչափական վերադասավորմամբ՝ շինարարության հետագոտության ընթացքում, երբ Կապալառուն և Ինժեները կկատարեն հողերի չափում: Ծառերի քանակի լրացուցիչ 10% -ը ներառվել է բույսերի գոյատևման ցածր ունակության կամ մահացության խնդիրները լուծելու համար:

Աշխատողների համար կկազմակերպվեն բնության պահպանության և շինարարական աշխատանքների ընթացքում ծառերի հատումից խուսափելու վերաբերյալ դասընթացներ: Կապալառուները պատասխանատու են լինելու համապատասխան վառելիքի մատակարարման համար դեպի շինարարական ճամբարներ կանխելու համար ծառահատումները:



Մասնավոր սեփականությունների ծառերի կորուստը (և որևէ հարակից բիզնեսի կորուստ) ենթակա է փոխհատուցման ՀՕՏ ընթացակարգերի շրջանակում:

### 6.3.2 Ազդեցություններ կենդանական աշխարհի վրա եվ մեղմացնող միջոցառումներ

Առաջակրվող ճանապարհահատվածի երկայնքով հնարավոր է հանդիպել կենդանական աշխարհի ներկայացուցիչներ, ինչպիսին են՝ թռչուններ, կաթնասուններ, սողուններ և երկկենցաղներ:

Շինարարության ընթացքում իրականացվելիք գործողությունները կարող են բացասաբար ազդել կենդանական աշխարհի վրա: Այն է՝ (a) մարդկանց ակտիվ գործունեություն և աղմուկի առաջացում (b) որսորդության աճ՝ տարածքում մարդկանց քանակի ավելացման պատճառով (c) բեռնատարների ու ծանր տեխնիկայի քանակի ու հարակից աղմուկի ավելացում (d) շինարարական գործողությունների հետևանքով աղմուկի ավելացում (e) շինարարական գործողությունների հետևանքով փոշու քանակի ավելացում (f) բուսականության ու հողի հեռացում՝ ճանապարհի շինարարության համար տարածքի մաքրման ու հարթեցման համար (g) հողի էրոզիայի ու աղտոտման ավելի մեծ հնարավորություն, ինչը կազդի անմիջականորեն բուսականության ու հողում ապրող օրգանիզմների վրա, իսկ ոչ անմիջականորեն՝ կենդանիների վրա:

Շինարարության փուլում կաթնասունները կհեռանան ավերված և աղմկոտ վայրերից: Շինարարության փուլում որոշ կաթնասուններ և սողուններ խոցելի կլինեն ապօրինի որսագողության և հավաքագրման համար՝ շինարարական տարածքում անձնակազմի առկայության պատճառով: Առաջարկվող ճանապարհահատվածում կաթնասունների բազմազանության պոտենցիալը բարձր չէ, դրնացից վեցը դասվում են Կարմիր գրքի տեսակների շարքին:

Առաջարկվող ճանապարհահատվածը գտնվում է սողունների 21 տեսակների բաշխման տիրույթում կամ դրանց մոտակայքում, ինչը ցույց է տալիս, որ առաջարկվող ճանապարհահատվածում սողունների բազմազանությունը, ամենայն հավանականությամբ, մեծ է: Այս ճանապարհահատվածում կենսաբազմազանությունը մեծ է, և այդտեղ կան մեծ ժայռոտ ելքեր, որոնք սողունների համար կարևոր միջավայր են հանդիսանում: Առաջարկվող ճանապարհահատվածում առկա սողունների 7 տեսակները ներառված են Կարմիր գրքում:

Առաջարկվող ճանապարհահատվածը ընկած է 3 երկկենցաղների տեսակների բաշխման տիրույթում: Այս ճանապարհահատվածում երկկենցաղների առատությունը ջրահեռացման և հեղեղների տարածքների միջավայրում հավանաբար ցածր կլինի: Առաջարկվող ճանապարհահատվածում երկկենցաղների տեսակները հիմնականում ներառում են գորտեր: Եթե այս տեսակը հայտնվի շինարարության տարածքում, ապա դա կստացվի հեղեղային միջավայրի հետ:

Ավտոմայրուղու համար պահանջվող տարածքում շատ հավանական է, որ կնկատվեն առնվազն 43 տեսակի թռչուններ: Առաջարկվող ճանապարհահատվածի որոշ հատվածների երկայնքով մշակված լայն հողատարածքները, որտեղ շատ են անողնաշար կենդանիների և կրծողների տարբեր տեսակներ,



գրավում են որսագողերին որսորդություն անել առաջարկվող ճանապարհահատվածների հարևանությամբ:

Ինչպես նախատեսված է «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքում (2000 թ.) եւ Կենդանական աշխարհի նկատմամբ Կարմիր գրքի պահանջներին համաձայն (Կառավարության որոշում 29.01.2010 թ., N 71-Ն) տարածքում պահպանվող տեսակներին պետք է հատուկ ուշադրություն դարձնել: Հատուկ մեղմացնող միջոցառումներ են ներառվել ԲԿՊ-ում կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցությունը նվազագույնի հասցնելու և Կարմիր գրքի տեսակների համար վնասակար ազդեցությունից խուսափելու համար:

Առաջարկվող շինարարական հատվածը ուսումնասիրվելու է որոկավորված կենդանաբանների կողմից վերջնական ՇՄԱԳ մշակման ընթացքում հիմնվելով Քաջարան-Ագարակ հատվածի մանրամասն նախագծի վրա: Ազդեցության ենթակա թռչունների, կաթնասունների, սողունների ու երկկենցաղների տեսակները, ինչպես նաև նրանց տեղակայությունը, հնարավոր միգրացիոն ուղիները կպարզաբանվեն ու կներառվեն վերջնական ՇՄԱԳ-ի մեջ:

Վերջնական ՇՄԱԳ մշակման փուլում դաշտային այցելությունների ընթացքում ջրթող խողովակների տեղակայությունը կուսումնասիրվի միգրացիոն ուղիների հետ համընկման տեսանկյունից, և անհրաժեշտության դեպքում, դրանց տեղակայությունը կփոխվի կամ նոր տեղեր կներառվեն, այնպես, որ տեղադրվելիք ջրահեռացման համակարգը նույնպես կծառայի որպես անցում ապահովելու համար կենդանիների անվտանգ միգրացիա, որս, և այլն: Ճանապարհը հատող կենդանիների միգրացիայի համար պահանջվող այլ անցումները կնախատեսվեն ջրահեռացման համակարգի բացակայության դեպքում:

Շինարարության ընթացքում այն մասերում, որտեղ փոքր կաթնասունների, սողունների ու երկկենցաղների մեծ քանակներ են հավաքվում, մասնագետները պետք է հավաքեն վերջիններիս ու բաց թողնեն ավելի հարմար ու ապահով վայրերում: Կենդանատեսակների հավաքումը պետք է իրականացվի նախքան ծանր շինարարական տեխնիկայի օգտագործումը: Բնակեցված բների հայտնաբերման դեպքում, դրանք նույնպես պետք է տեղափոխվեն համապատասխան մասնագետի հսկողության ներքո՝ նախքան շինաշխատանքների մեկնարկը:

Ֆաունայի վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմացնելու համար հետևյալ միջոցառումները նույնպես պետք է ներառվեն ԲԿՊ-ի մեջ՝ եթե հայտնաբերվում են Կարմիր գրքում գրանցված բներ, խոռոչներ, այդ մասին տեղեկատվությունը պետք է տրամադրվի ՏԾԻԿ-ի բնապահպանին ու ՇՄՆ-ը՝ համապատասխան հետագա գործողությունների համար: Ինչպես նաև շինարարության ընթացքում ժամանակավոր պաշտպանիչ պատեր կամ ցանկապատեր պետք է կանգնեցվեն այն հատվածներում, որտեղ կենդանիները հաճախ են հանդիպում: Պետք է տեղադրվեն կանխարգելիչ սարքեր (արտացոլիչներ, զգուշացնող լույսեր, ազդանշաններ, և այլն) ժամանակավոր պատերի կամ ցանկապատերի վրա՝ կիրառելով ցածր աղմուկ, վիբրացիա առաջացնող ու քիչ արտանետումներով սարքավորումներ: Վիրավոր կենդանի հայտնաբերելու դեպքում, ՇՄՆ-ը պետք է տեղեկացվի՝ խուսափելով շինարարությունից ու պայթեցման աշխատանքներից երեկոյան ու



գիշերային ժամերին, կենդանիների բազմացման սեզոնների ընթացքում, և այլն: Այս նպատակով, անտառային հատվածներում մաքրման աշխատանքները պետք է ձմռանն արվեն:

Շինարարական աշխատանքային ճամբարների հնարավոր ազդեցությունները ներառում են տարածքում ուտելի կենդանիների և թռչունների որսագողությունը՝ չնայած բոլոր արգելքներին: Կապալառուի շրջակա միջավայրի անվտանգության և առողջության մասնագետը պատասխանատու կլինի կենդանական աշխարհի պահպանության վերաբերյալ աշխատակիցներին գիտելիքներ տրամադրելու համար:

### 6.3.3 Ազդեցություններ պահպանվող տարածքների վրա եվ մեղմացնող միջոցառումներ

Առաջարկվող ճանապարհահատվածի մոտ Ե գնտվում Չանգեզուրի պետական արգելավայրը և «Արևիկ» ազգային պարկը: Ծագրի որոշ հատվածներում կարելի է նշել ուղղակի ազդեցություն «Արևիկ» ազգային պարկի վրա:

Մանրամասն նախագծի փուլում պետք է պարզել արգելավայրերի ու առաջարկվող ճանապարհահատվածի համընկնման մասերը, ու նախատեսել համապատասխան մեղմացնող միջոցառումներ:

Պետք է նախատեսել մեղմացնող միջոցառումներ՝ կանխելու կամ նվազեցնելու համար ազդեցությունները վտանգված կամ Էնդեմիկ տեսակների վրա այն հատվածներում, որտեղ առաջարկվող ճանապարհը մտնում է արգելավայրերի տարածք: Բուսական (1999թ) ու կենդանական (2000թ) աշխարհների մասին օրենքները պահանջներ են ներկայացնում կենդանիների ու բույսերի տեսակների գնահատման ու մոնիտորինգի համար, մասնավորապես հազվագյուտ ու վտանգվածների համար: Պետք է կիրառել այդ պահանջներն ու հատուկ պահպանման ռեժիմը: ՇՄՆ-ի հետ համագործակցությունը պետք է հնարավորինս վաղ սկսել: ՇՄՆ-ի հետ նամակագրությունն ու եզրակացությունը պետք է ներկայացվեն վերջնական ՇՄԱԳ հաշվետվությունում: Ֆլորայի ու ֆաունայի պահպանվող տեսակների առկայության հետևանքով՝ պետք է իրականացնել Էկոլոգիական հետազոտություններ վերջնական ՇՄԱԳ-ի մշակման ընթացքում: Այդ ընթացքում վայրի կենդանիների ուղիների տեղակայությունը պետք է հստակ նշվի: Անցումներն ու համապատասխան ցանկապատերը պետք է տեղադրվեն այդ տեղեկատվության հիման վրա:

Շինարարական աշխատանքների ու ճանապարհի շահագործման ընթացքում ակնկալվում են ոչ զգալի բացասական ազդեցություններ պահպանվող տարածքների վրա: Տվյալ տեղամասում հանդիպող, սակայն Կամիր գրքի ցուցակներում չընդգրկված այնպիսի տեսակները ինչպիսիք են վարազը, այծյամը, գայլը և լուսանը, ևս ունեն պահպանության կարիք: Ծրագրային ճանապարհն առավել մեծ ազդեցություն կունենա հայկական մուֆլոնի վրա, քանի որ ճանապարհը հատելու է այս տեսակի երկրորդային միգրացիոն ուղիները: Նախագծի վերջնական նախապատրաստման ընթացքում մանրամասն դաշտային ուսումնասիրությունը կբացահայտի նոր ճանապարհի զգայուն կետերը (եթե այդպիսիները



կլինեն) և տեսակների, դրանց բնական միջավայրի և միգրացիայի ձևերի համար կառաջարկվեն համապատասխան մեղմացման միջոցառումներ:

Բնակատեղիների մասնատումը տեղի է ունենում, երբ ճանապարհը հատում է Էկոհամակարգը: Ստեղծված մասերի հանրագումարը կարող է լինել պակաս, քան սկզբնական ամբողջության արժեքը, նույնիսկ երբ բնական միջավայրի կորուստը չնչին է: Շատ կենդանատեսակներ հակված են հետևելու օրական և սեզոնային տեղաշարժի հաստատված ուղիներին: Գնահատում է արգելափակումը և արգելափակում վայրի կենդանիների անցուղիները, կարող է հանգեցնել վայրի կենդանիների տեղաշարժերի սահմանափակումների, քանի որ կենդանիները դժվարությամբ են անցնում ճանապարհը, վրաների հետևանքով կմեծանա մահացությունների թիվը կամ կհանգեցնի միգրացիաների ուշացումների: Վայրի բնության պոտենցիալ հատման գոտիները պետք է որոշվեն դաշտային հետազոտությունների ընթացքում՝ նախագծման վերջնական փուլում, ինչպես նաև «Չանգեզուրի» կենսոլորտային համալիրի մասնագետների հետ խորհրդակցությունների միջոցով: Գնահատում է երկայնքով ցանկապատման անհրաժեշտությունը կբացահայտվի և կառաջարկվի դաշտային ուսումնասիրությունից հետո համապատասխան այն զգայուն կետերում: Հատուկ կառավարման պլանը, ճանապարհային նշանները, տեղեկատվության ցուցադրման տախտակը և ճանապարհի եզրին ցանկապատը կարող են մեղմացնող միջոց լինել վայրի բնության պաշտպանության համար: Այս մեղմացնող միջոցառումների գինը պետք է ներառվի Ծրագրի բյուջեում:

Մայրուղու շինարարական աշխատանքների ընթացքում բոլոր ողնաշարավոր կենդանիները պետք է բռնվեն մասնագետների կողմից, տեղադրվեն հատուկ կոնտեյներների մեջ և փոխադրվեն տվյալ տեսակներին բնորոշ տարածքներ՝ հեռու մարդկանց բնակավայրերից:

Հաստատվելու է հատուկ մոնիտորինգ ի ու կառավարման պլան՝ ապահովելու համար պահպանվող տարածքների շրջակա միջավայրի պահպանությունը:

Պաշտպանված տարածքի ղեկավար մարմինների և ՀԿ-ների հետ խորհրդակցություններ են կազմակերպվելու շինարարական գործունեության վերաբերյալ այն գոտիներում, որտեղ ճանապարհը հատում է և / կամ մտնում զգայուն կամ պահպանվող տարածքներ: Գրավոր հաստատումներ պետք է ստանան համապատասխան իրավասու մարմիններից պահպանվող տարածքների ու ճանապարհի հատման մասերի համար:

**6.3.4 Ազդեցություններ ջրային ռեսուրսների վրա եվ մեղմացնող միջոցառումներ**

Ջրի աղտոտումը հնարավոր է 14 կամուրջների շինարարության ընթացքում դաշտավայրերում, վտակների ու գետերի վրա, ինչպես նաև 3 թունելների շինարարության ընթացքում: Պոտենցիալ ազդեցությունները կապված են հետևյալի հետ՝ վառելիքի ու յուղերի պատահական արտահոսքեր, հանված հողի հեռացում, շինաշխատանքներից հետո թողնված շինանյութերը կարող են լցվել ջրերի մեջ և հանգեցնել ջրային ռեսուրսներում նստվածքների և ջրի որակի անկման, մերկ տարածքների էրոզիա,





որը արդյունք է հանույթի աշխատանքների, ինչպես նաև ջրահեռացման ուղիների կառուցումը կարող է ավելացնել արտահոսքը, ինչը կբերի մակերևութային ջրերում նստվածքների ու աղտոտվածության ավելացման, ինչպես նաև գրունտային ջրերի պակաս ներծծման, կոյուղաջրերի կուտակման, շինհրապարակներից կոշտ թափոնների ու շինանյութի արտահոսքի, որոնք գտնվում են դաշտավայրերի, վտակների ու գետերի մոտ: Թունելների կառուցման ընթացքում ջուրը կարող է թափվել տանիքից և թունելի պատերից՝ միացված ու կտրված ժայռային զանգվածների պատճառով և միացված կրաքարի ու քվարցերի հետևանքով, որոնք կարելի է հայտնաբերել թունելի շինարարության տարածքում:

Հետևյալ միջոցառումները պետք է իրականացվեն՝ ջրի որակի վրա ազդեցությունը նվազեցնելու/սահմանափակելու համար՝

- Շինհրապարակում և դրա շուրջը ջրահեռացումների ու գետի հունի պահպանումը լավ պայմաններում, արդյունքում հանույթի նյութը կամ շինաշխատանքներից որևէ մասնիկներ չեն ներթափանցի ջրերի մեջ:
ինչ նախաշինարարական փուլում: Կոնտակտային բոլոր տվյալները կտրամադրվեն Կապալառուի կողմից ցուցապաստառների և Ծրագրի վերաբերյալ տեղեկատվական վահանակների միջոցով: Այս փուլում այդ տվյալները հասանելի կլինեն Կապալառուի միջոցով: Կապալառուն կծառայի որպես առանցաքային/կոնտակտային պատասխանատու մարմին և կապահովի անհրաժեշտ բացատրություններն ու աջակցությունը նշված մարմինների միջոցով, իսկ անհրաժեշտության դեպքում ԱԵԱ-ի հետ անհատական շփման միջոցով:

Ի վերջո, ԱԵԱ-ն միշտ կարող է դիմել դատարանի միջամտությանը: Այնուամենայնիվ, բոլոր ջանքերը կգործադրվեն ինդիվիդուալ Կապալառուի, Ինժեների և ՀՀԾՄ ԾԻԿ-ի մակարդակում լուծելու համար: Եթե դա հնարավոր չէ, փորձ կարվի ինդիվիդուալ լուծել ՏԿԵՆ մակարդակում՝ հնարավորինս խուսափելով/նվազագույնի հասցնելով դատավեճը:

Բոլոր բողոքները, անկախ արդյունքից և լուծումներից, պատշաճորեն կփաստաթղթավորվեն և հասանելի կլինեն դիտարկման, մոնիթորինգի և գնահատման նպատակներով:

## 9. ԲՆԱԿԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Բնապահպանական կառավարման պլանը մշակվել է՝ ԱԶԲ բնապահպանական պահանջներին և շրջակա միջավայրի պահպանության Հայաստանի Հանրապետության բոլոր համապատասխան օրենքներին, կանոնակարգերին և ստանդարտներին համապատասխանությունն ապահովելու համար: ԲԿՊ-ն ներառում է դրույթներ՝ մեղմացնելու և կանխարգելելու ծրագրի իրականացման ընթացքում հնարավոր բացասական ազդեցությունները: ԲԿՊ-ն ներառում է ոչ միայն մեղմացնող միջոցառումներ, այլ նաև մոնիթորինգի գործողություններ, որոնք պետք է ստուգեն ծրագրի իրականացման շրջափուլում շինարարական աշխատանքների իրականացման գործընթացի համապատասխանությունը նախատեսված մեղմացնող միջոցառումներին նախագծման, նախաշինարարական և շինարարական փուլերում, շահագործման և պահպանման/սպասարկման ժամանակահատվածներում:

Մյուս կողմից՝ Կապալառուն կորոշի իր գործելակերպը շինարարական աշխատանքների ոլորտում, աշխատանքային մեթոդները, ժամանակացույցը և մուտքերը դեպի շինարարական տեղամաս: Փոփոխված պայմանները լավագույնս արտացոլելու համար Կապալառուն պարտավոր է լրացնել և թարմացնել ԲԿՊ-ն առավել մանրամասն՝ տեղամասին և գործունեությանը բնորոշ մեղմացնող միջոցառումներով և մշակել ՏԲԿՊ՝ աշխատանքների մեկնարկից 28 օր առաջ: Թարմացված ԲԿՊ-ն կհամարվի որպես Կապալառուի պայմանագրային պարտավորությունների մի մաս:

Կապալառուն կխորհրդակցի Ինժեների հետ և կորոշի, թե քանի ՏԲԿՊ-ներ են անհրաժեշտ ճանապարհային հատվածի տարածքի համար և կմշակի ՏԲԿՊ՝ հիմնվելով հետևյալի վրա՝

- (i) ԲԿՊ –ին համապատասխան տեղամասի սահմանները,
- (ii) բացահայտվում են առավել զգայուն ազդակիրները/ընկալիչները և բնապահպանական արժեքները,
- (iii) սահմանվում են աշխատանքային տեղամասին հատուկ շինարարական





գործողությունները,

- (iv) գնահատվում է ազդեցությունների ռիսկը,
- (v) սահմանվում են շրջակա միջավայրի կառավարման միջոցառումները՝ ուղղված այն ազդեցություններին, որոնք պետք է մեղմել ռիսկերի գնահատման արդյունքում,
- (vi) մշակված ՏԲԿՊ, ներառյալ՝ ԲԿՊ-ում նշված ենթապլանները,
- (vii) մշակված Բնապահպանական աշխատանքների պլաններ (քարտեզներ, գծագրեր և այլն):

### 9.1 ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԲԿՊ նպատակն է ուղղորդել Կապալառուին և Ինժեներին բնապահպանական ազդեցությունները կանխարգելելիս և մեղմացնելիս՝ կապված շինարարական աշխատանքների իրականացման հետ, ինչպես նաև շահագործման և դրան հաջորդող սպասարկման ժամանակահատվածում ուղեցույց հանդիսանալ ՏԿԵՆ-ի և այլ համապատասխան իրավասու մարմինների համար, շահագործման և սպասարկման ժամանակահատվածում: ԲԿՊ-ն կծառայի որպես հիմք հետևյալի համար.

- (i) Ծրագրի հնարավոր ազդեցությունների կառավարում, դրանց կանխարգելում կամ մեղմացում,
- (ii) Կապալառուի կողմից ՏԲԿՊ-ների մշակում նախքան նախաշինարարական և շինարարության հետ կապված գործողությունների մեկնարկը և
- (iii) Բնապահպանական օրենքներին, կանոնակարգերին և ստանդարտներին համապատասխանությունը ստուգելու համար մոնիթորինգի ծրագրի իրականացում:

ԲԿՊ-ն ամփոփում է շրջակա միջավայրի վրա կանխատեսվող ազդեցությունները: Յուրաքանչյուր բացահայտված ազդեցության համար առաջարկվել է համապատասխան մեղմացնող միջոցառում: Մեղմացնող միջոցառումներն առավել հստակեցված կլինեն՝ հիմնվելով ռիսկի գնահատման վրա, որը պետք է իրականացվի ՏԲԿՊ-ների մշակման ընթացքում: Բնապահպանական մոնիթորինգի գործողությունները, դրանց իրականացման համար պատասխանատու մարմինները և իրականացման գնահատված ծախսերը նույնպես ընդգրկված են:

ՏԲԿՊ-ն կմշակվի Կապալառուի կողմից շինարարության պայմանագրի առանձնահատկությունների հիման վրա, այնուհետև, անհրաժեշտության դեպքում կթարմացվի՝ հարմարեցվելով փոփոխվող պայմաններին: Այն կներկայացվի Ինժեների դիտարկմանն ու հաստատմանը: ՏԲԿՊ-ից ցանկացած շեղում կամ փոփոխություն առաջին հերթին պետք է հաստատվի Ինժեների կողմից:

Համաձայն շինարարական աշխատանքների պայմանագրերի համար առաջարկվող բնապահպանական անվտանգության կետերի՝ Կապալառուն պետք է մոբիլիզացման ժամանակահատվածում նախաձեռնի հետևյալ հետազոտություններն ու գործողությունները.

- (i) վարձի լրիվ դրույթով բնապահպանության, ինչպես նաև առողջապահության և անվտանգության մասնագետ



- (ii) կազմակերպի բնապահպանական և անվտանգության ուսուցում և կողմնորոշում աշխատողների համար
  1. իրականացնել մուտքային ճանապարհների նախնական վիճակի հետազոտություն
  2. նախաձեռնել միջոցառումներ՝ բացահայտելու և պահպանելու համար գոյություն ունեցող համայնքային ծառերը, որոնք կարող են վնասվել շինարարական գործողությունների հետևանքով՝ համաձայն ՏԲԿԴ-ի,
  3. ջրագծերի, կոյուղագծերի, էլեկտրականության լարերի և այլ հաղորդողիների պահպանություն և/կամ տեղափոխում,
  4. ջրի որակի, օդի որակի (փոշի), աղմուկի և թրթռման ելակետային տվյալների հավաքագրման համար հետազոտություններ շինարարական աշխատանքների մեկնարկից 21 օր առաջ :
- (iii) Կապալառուն Ինժեների հաստատմանը կներկայացնի աշխատանքային տեղամասին հատուկ բնապահպանական կառավարման պլանն աշխատանքների մեկնարկից 28 օր առաջ :

Բացի վերոնշյալից, Կապալառուն կիրականացնի նաև հետևյալը՝

- (i) ԲՄ-ի համար ապահովել մուտք դեպի աշխատանքային տեղամաս և հարմարությունների/սարքավորումների հասանելիությունը.
- (ii) Պահանջվող ցանկացած պահի թույլ տալ բնապահպանական մոնիթորինգն ու հսկողությունն աշխատանքային տեղամասում,
- (iii) Ապահովել ՏԲԿԴ-ի ամենօրյա իրականացումը, ներառյալ՝ կանոնավոր մոնիթորինգի, պահպանման, հաշվետվությունների և այլնի իրականացումը,
- (iv) Աշխատանքներն ավարտելիս իրականացնել շինհրապարակի ողջ օգտագործված տարածքներն իրենց նախկին վիճակին վերականգնելու (ընդունելի ձևով) համար պահանջվող բոլոր անհրաժեշտ գործողությունները: Այն կհաստատվի Ինժեների կողմից վերականգնման վերաբերյալ հավաստագրի միջոցով:

ԲԿԴ-ով սահմանված դրույթները կիրականացվեն Կապալառուի ԲԱԱՄ-ի կողմից և մոնիթորինգի կենթարկվեն Ինժեների ԲԱԱՄ-ի կողմից՝ ՀՀՃՄ ԾԻԿ-ի ԲՄ-ի աջակցությամբ:

ԲԿԴ-ն ներկայացնում է հիմնական սկզբունքները և ընդհանուր մեղմացնող միջոցառումները և ներառում է հետևյալ ենթապլանները՝

- Մասնագիտական առողջության և անվտանգության պլան
- Հանրային լուսմների և հաղորդակցության պլան
- Բուսական և կենդանական աշխարհի պահպանության և բուսականության մաքրման պլան
- Հաղորդողիների պահպանման և տեղափոխման պլան
- Ֆիզիկական և մշակութային ռեսուրսների պահպանության պլան
- Շրջակա միջավայրի պահպանման պլան
- Շինարարական աշխատանքային ճամբարների պլան
- Աշխատանքային տեղամասի կառավարման պլան (բացահանքեր, կուտակավայրեր,



պայթեցման աշխատանքների տեղամասեր, բետոնի դոզավորման և ասֆալտի գործարաններ)

- Թունելների կառուցման տեղամասեր
- Երթևեկության և մուտքի կառավարման պլան
- Արտակարգ իրավիճակներին արձագանքման պլան
- Թափոնների և նյութերի կառավարման պլան
- Աշխատանքային տեղամասի վերականգնման, կանաչապատման և բուսականության վերականգնման պլան

### 9.1.1 Աշխատանքների հիգիենայի եվ անվտանգության պլան

Այս պլանի հիմնական նպատակն է փաստաթղթավորել Կապալառուին ուղղված բոլոր պահանջները՝ ապահովելու համար բնապահպանական և մասնագիտական անվտանգությունն ու առողջապահությունը Ծրագրի իրականացման ընթացքում ԱՁԲ-ի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Կապալառուն կվարձի առողջության և անվտանգության մասնագետ, կամ բնապահպանության մասնագետ, որի պարտականությունները կներառեն ԲԿՊ-ում մանրամասն ներկայացված թեմաների վերաբերյալ կողմնորոշման պլանի մշակումը և իրականացումը:

Կապալառուն պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները՝ աշխատանքային տեղամասում գտնվող բոլոր անձանց առողջությունը, անվտանգությունն ու բարօրությունն ապահովելու համար: Կապալառուն պետք է հետևի/ստուգի, որ աշխատանքներն իրականանան անվտանգ և արդյունավետ կերպով:

Աշխատանքների հիգիենայի և անվտանգության ենթապլանի իրականացման համար կպահանջվի բնապահպանական, հնագիտական, մասնագիտական առողջապահության և անվտանգության կողմնորոշում՝ շինարարական աշխատանքներում ներգրավված ողջ անձնակազմի համար: Աշխատակազմի անդամները բոլոր մակարդակներում ունեն պատասխանատվության որոշակի աստիճան՝ բնապահպանական, հնագիտական և մասնագիտական առողջապահության և անվտանգության հարցերի վերաբերյալ: Որպես այդպիսին՝ շինարարության աշխատուժի իրազեկվածությունն ընդլայնելու և հմտությունները զարգացնելու նպատակով ողջ անձնակազմին բնապահպանական հարցերի և ԲԿՊ-ի իրականացման առնչությամբ կողմնորոշում ապահովելը խիստ կարևոր է ԲԿՊ-ի արդյունավետությունն ապահովելու համար:

Պահանջներ աշխատողի անձնական պաշտպանիչ սարքավորումների համար՝ ներառյալ կոշտ գլխարկներ, անվտանգության կոշիկներ, բարձր-տեսանելիության բաճկոններ, ձեռնոցներ, ակնոցներ, պաշտպանիչ ականջակալները և ՊԱԱ դիմակներ կամ դրան համարժեք որևէ բան՝ ըստ պահանջի:

### 9.1.2 Հանրային լուրմների եվ հաղորդակցության պլան

Այս պլանի նպատակն է փաստաթղթավորել բոլոր միջոցառումները, որոնք Կապալառուի կողմից պետք է ձեռնարկվեն՝ ծրագրի մասին տեղեկատվությունը շահառուներին, ծրագրի ազդեցությանը ենթակա անձանց կամ խմբերին և այլ հետաքրքրված խմբերին փոխանցելու և նրանց հետ





հաղորդակցությունը պահպանելու համար, որը պետք է իրականանա ԱԶԲ-ի ԱԲՀ 2009-ի և ՀՀ օրենսդրության համաձայն:

Պլանի նպատակն է բարձրացնել հանրության իրազեկվածությունը, հետաքրքրվածությունը և շահառուների ներգրավվածությունը՝ ծրագրի մասին տեղեկություններ տարածելու միջոցով, ներառյալ՝ շինարարական աշխատանքների և դրանց առնչվող գործողությունների ժամանակացույցը, աշխատանքային հնարավորությունները և ծրագրի օգուտները:

Սույն պլանը մշակվել է շահառուների, ծրագրի տեղակայվածության վայրի համայնքի անդամների և ընդհանուր հասարակության հետ հաստատուն հաղորդակցություն ապահովելու նպատակով:

### 9.1.3 Բուսական եվ կենդանական աշխարհի պաշտպանության եվ բուսականության մաքրման պլան

Սույն պլանի նպատակն է փաստաթղթավորել Կապալառուի և Նրա աշխատողների մոտեցումը՝ գոյություն ունեցող բուսական և կենդանական աշխարհների վրա ազդեցությունները նվազագույնի հասցնելու վերաբերյալ, ինչպես նաև պաշտպանելու այն տարածքները, որտեղ առկա են Կարմիր գրքում գրանցված տեսակներ, կամ Ծրագրի տարածքում առկա վտանգված տեսակները:

Ենթապլանը պետք է համապատասխանի ՇՄՆ քաղաքականությանը և «Բուսական աշխարհի մասին» (23.11.2009 թ.) և «Կենդանական աշխարհի մասին» (03.05.2000 թ.), ինչպես նաև բուսականության մաքրման նպատակով քիմիական նյութերի գործածության մասին ՀՀ օրենքներին:

Մեղմացնող միջոցառումները ներկայացված են ԲԿՊ-ի մեջ:

### 9.1.4 Հաղորդողիների պահպանման եվ տեղափոխման պլան

Այս պլանի նպատակն է փաստաթղթավորել Կապալառուի մոտեցումը՝ պաշտպանելու կամ տեղափոխվելու ի հայտ բերված հաղորդողիները և հաղորդողիների պահպանությունը կամ տեղափոխումը շինարարական աշխատանքների ընթացքում կառավարելու համար:

Հաղորդողիների նախագծերը կհաստատվեն հաղորդողիների սեփականատերերի կողմից: Հաղորդողիների պահպանման և տեղափոխման պլանը կիրականացվի՝ համաձայն Տեխնիկական մասնագրերի:

### 9.1.5 Ֆիզիկական եվ մշակութային ռեսուրսների (ՖՄՌ) պահպանման պլան

Այս պլանի նպատակն է փաստաթղթավորել Կապալառուի և Նրա աշխատակիցների մոտեցումը՝ բացահայտված հնագիտական, պատմական և մշակութային վայրերը, հուշարձանները պաշտպանելու և շինարարության ընթացքում հանդիպող ֆիզիկական մշակութային ռեսուրսները հնագիտական և մշակութային գտածոների վերաբերյալ ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն կառավարելու համար, ինչպես նաև ճանապարհի ծրագծից դուրս, սակայն վերջինիս մոտ գտնվող արժեքները պահպանելու համար:

Ծրագրային ճանապարհը չի կառուցվելու UNESCO (ՄԱԳՄԿ)-ի կողմից ճանաչված որևէ



մշակութային կամ հնագիտական վայրում:

Կապալառուի կողմից պետք է կազմվի պատահական գտածոների վերաբերյալ արձանագրություն, և այն պետք է հաստատվի հնագիտական ծառայության կողմից: Եթե հայտնաբերվում են մշակութային ժառանգության կամ հնագիտական վայրեր, ապա.

- (i) աշխատանքը, որը կարող է բացասաբար ազդել այդ տեղամասի վրա, պետք է անմիջապես դադարեցվի,
- (ii) տվյալ վայրի մասին պետք է հաղորդվի Ինժեներին և ՀՀԾՄ ԾԻԿ, որը պետք է վերջինիս մասին տեղեկացնի ՄՆ-ին,
- (iii) տարածքը կսահմանագծվի, ՇՄՆ-ն կվերահսկի հետազոտական աշխատանքները և կիրականացնի փրկարարական աշխատանքներ,
- (iv) այսպիսի վայրերը պետք է ստուգվեն, որպեսզի բացառվեն անզգույշ կամ չգրանցված վնասները: Այդ ստուգումների հաճախականությունը պետք է ռիսկի հետ համաչափ լինի և, որտեղ հնարավոր է, պետք է իրականացվի առանց հնագիտական վայր մուտք գործելու:

### 9.1.6 Ծրջակա միջավայրի պահպանության պլան

Այս պլանի նպատակն է փաստաթղթավորել Կապալառուի և նրան աշխատողների մոտեցումն այն միջոցառումների կիրառման հարցում, որոնք անհրաժեշտ են հողը, օդը և ոռոգման ջրանցքները շինարարական գործողությունների հետևանքով առաջացած էրոզիայից, նստվածքներից, փոշուց և արտանետումներից, ինչպես նաև աղմուկից և թրթռումից պաշտպանելու համար: Պլանը ներառում է այնպիսի մեղմացնող միջոցառումներ, որոնք կնվազեցնեն ցանկացած ազդեցության ռիսկը՝ այն բերելով ընդունելի մակարդակի վրա բոլոր օգտագործված վայրերում՝ շինհրապարակներում, ճամբարներում, շինարարական կյուրերի և տեխնիկայի տեղափոխման համար նախատեսված ճանապարհների վրա, քարհանքերում, բացահանքերում, աղբի կուտակման վայրերում և այլն: Մասնավորապես, այն ուղղված է հետևյալ ասպեկտներին՝

- (i) հողի էրոզիայի և նստվածքների վերահսկում,
- (ii) օդի աղտոտվածության և փոշու վերահսկում,
- (iii) ջրի աղտոտման վերահսկում,
- (iv) աղմուկի և թրթռման վերահսկում:

Հողի էրոզիայի և նստվածքի հսկողության պլանը սահմանում է շինհրապարակում աշխատանքների պատշաճ կազմակերպումը՝ ազդեցության ենթակա տարածքները նվազեցնելու և հողի էրոզիայից և նստվածքներով լի արտահոսքերի առաջացումից խուսափելու համար:

Պլանը ներառում է բուսահողի կառավարմանն առնչվող խնդիրներ: Բուսահողը կհեռացվի բնական չխախտված լանդշաֆտներից և լիցքի տարածքներից, բացահանքերից: Բուսահողը կպահպանվի և ժամանակավորապես կպահեստավորվի՝ հարթեցման գործողությունների ավարտից հետո հանույթների և լիցքերի շեպերում հետագա վերաօգտագործման համար: Բուսահողը կպահեստավորվի՝ շինհրապարակի վերականգնման նպատակով օգտագործման համար:

Կառավարման միջոցառումներ են մշակվել առողջությանը հասցվող վնասները,



անհանգստությունն պատճառող հնարավոր ազդեցությունները և օդի աղտոտման մակարդակը նվազեցնելու, ինչպես նաև շինարարական գործողությունների հետևանքով առաջացող փոշին և գազային արտանետումները վերահսկելու նպատակով:

Աղմուկի և թրթռման վերահսկողության նպատակն է նվազեցնել և կառավարել աղմուկի և թրթռման բարձրացած մակարդակների պոտենցիալ ազդեցությունները, որոնք ենթադրում են առողջությանն ու սեփականություններին սպառնացող ռիսկեր, ինչպիսիք են անհանգստությունները, լսողության թուլացումը, որոնք կարող են ազդեցության ենթարկել և՛ շինարարության աշխատողներին, և՛ մոտակայքում ապրող բնակիչներին:

### 9.1.7 Ծինարարական աշխատանքի ճամբարների պլան

Այս պլանի նպատակն է փաստաթղթավորել Կապալառուի և Նրանց աշխատողների գործելակերպը Ծրագրի օտարման գոտում կամ մոտակայքում գտնվող շինարարական աշխատանքի ճամբարները կառավարելիս:

Նախագծին, շինարարությանը, և ճամբարների օգտագործման հետ կապված հարցերը վերաբերում են թե՛ ճամբարների՝ շրջակա միջավայրի վրա ունեցած հնարավոր ազդեցությունների, թե՛ ճամբարները համապատասխանաբար պլանավորելու անհրաժեշտության հետ՝ շրջակա միջավայրը պահպանելու և աշխատողների առողջությունը, անվտանգությունը և հարմարությունն առավելագույնի հասցնելու համար: Կապալառուի գրասենյակների, Կապալառուի անձնակազմի համար կացարանների, աշխատանքային ճամբարների, սարքավորումների և մեքենաների պահեստավորման համար վայրեր ընտրելու հիմնական չափանիշը/սկզբունքն այն է, որ նվազագույնի հասցվեն հողի և ստորգետնյա ջրերի աղտոտումը, և մոտակա բնակիչներին պատճառած անհանգստությունը՝ խուսափելով բնակչության և տեղական/կենտրոնական իշխանությունների միջև կոնֆլիկտային իրավիճակներից:

### 9.1.8 Տեղամասի կառավարման պլան (քարհանք փացահանք, թափոնների կուտակման վայրեր, պայթեցման աշխատանքների տեղամասեր, բետոնի դոզավորման ֆաֆալտի գործարաններ)

Այս պլանի նպատակն է փաստաթղթավորել Կապալառուի և Նրա աշխատողների գործելակերպն այն միջոցառումների իրականացման աշխատանքներում, որոնց նպատակն է կառավարել շինարարական գործողությունների ազդեցությունները քարհանքերի, փացահանքերի, քարջարդիչ գործարանների և շինարարական նյութերի ու տեխնիկայի տեղափոխման համար նախատեսված ճանապարհների վրա: Այս պլանի կառավարման միջոցառումները մշակվել են՝ առողջության վրա հնարավոր բացասական ազդեցությունները, ինչպես նաև պատճառված անհանգստությունները նվազեցնելու համար:

### 9.1.9 Թունելի շինարարական տեղամաս

Այս պլանի նպատակն է փաստաթղթավորել Կապալառուի և Նրա աշխատողների գործելակերպը



այն միջոցառումների իրականացման աշխատանքներում, որոնց նպատակն է կառավարել թունելում իրականացվող շինարարական գործողությունների ազդեցությունները: Այս պլանի կառավարման միջոցառումները մշակվել են՝ առողջության վրա հնարավոր բացասական ազդեցությունները, ինչպես նաև պատճառված անհանգստությունները նվազեցնելու համար:

### 9.1.10 Երթևեկության եվ մուտքերի կառավարման պլան

Այս պլանի նպատակն է փաստաթղթավորել Կապալառուի և Նրա աշխատողների գործելակերպը շինարարական աշխատանքների ընթացքում երթևեկությունը և մուտքն աշխատանքային տեղամաս կառավարելիս: Երթևեկության կառավարման և մուտքի պլանը պետք է մշակվի Կապալառուի կողմից որպես ՏԲԿՊ-ի մաս, հաստատվի ոստիկանության և Ինժեների կողմից և համաձայնեցվի ԾԻԿ-ի, ՏԿԵՆ-ի հետ:

### 9.1.11 Արտակարգ իրավիճակներին արձագանքման պլան

Այս պլանի նպատակն է փաստաթղթավորել Կապալառուի և Նրա աշխատողների գործելակերպը շինարարական աշխատանքների ընթացքում քիմիական նյութերի տեղափոխման, դրանց պահեստավորման, օգտագործման, տեղավորման աշխատանքներում, վտանգավոր նյութերի պատահական արտահոսքի դեպքում համապատասխան միջոցներ կիրառելիս, ինչպես նաև ցանկացած այլ հնարավոր պատահարների դեպքում, որոնք կարող են տեղի ունենալ շինարարական աշխատանքների ընթացքում: Բնապահպանական կառավարման պլանում նախատեսված միջոցների կիրառումը թույլ կտա նվազեցնել ցանկացած ազդեցության ռիսկը՝ այն հասցնելով ընդունելի մակարդակի:

### 9.1.12 Թափոնների եվ նյութերի կառավարման պլան

Այս պլանի նպատակն է փաստաթղթավորել Կապալառուի և Նրա աշխատողների գործելակերպը շինարարական աշխատանքների ընթացքում առաջացած թափոնների կառավարման և տեղավորման աշխատանքներում, ինչպես նաև աղտոտված հողի կառավարման աշխատանքներում, եթե տվյալ շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր չէ խուսափել աղտոտված հողից: Այս պլանում կիրառվող թափոնների կառավարման հիմնական մոտեցումը հիմնված է թափոնների կառավարման հետևյալ հիերարխիայի վրա (ամենաբարձր առաջնահերթությունից մինչև ամենացածրը).

- (i) խուսափել թափոնների առաջացումից և աղտոտված հողից,
- (ii) նվազագույնի հասցնել թափոնների առաջացումը և աղտոտված հողի հետ կապված աշխատանքները,
- (iii) հնարավորինս իրականացնել թափոնների վերաօգտագործում,
- (iv) վերամշակել այնքան թափոն, որքան հնարավոր է,
- (v) թափոնները և հանված աղտոտված հողը կուտակել բնապահպանական տեսանկյունից հարմար ձևով՝ այն տարածքներում, որոնք սահմանված են համապատասխան իրավասու



մարմինների կողմից:

Նշված սկզբունքների համաձայն՝ թափոնների, փչացած նյութերի և աղտոտված հողի կառավարումը՝ համապատասխան տեղավորման, ըստ տեսակների տարանջատման, պահեստավորման, կուտակման և կրթական/ուսուցողական մեթոդների կիրառման հետ միասին, կապահովի թափոնների առաջացման և աղտոտված հողի հետ շփման ռիսկի ցածր մակարդակ: Առաջարկվող մեղմացող միջոցառումները թվարկված են ԲԿՊ-ում և պետք է Կապալառուի կողմից լրացվեն ՏԲԿՊ-ում:

### 9.1.13 Աշխատանքային տեղամասի վերականգնման, կանաչապատման եվ բուսականության վերականգնման պլան

Այս պլանի նպատակն է փաստաթղթավորել Կապալառուի և Նրա աշխատողների գործելակերպը շինհրապարակի մաքրման և վերականգնման, ներառյալ՝ կանաչապատման և նախկին բուսականության վերականգնման աշխատանքներում:

### 9.1.14 Հետշինարարական փուլ (շահագործում եվ սպասարկում)

Թերությունների շտկման ժամանակահատվածի այն ընթացքում, երբ Կապալառուի կողմից շինհրապարակում իրականացվում են թերությունների վերցման աշխատանքներ, Կապալառուն պետք է գործի ՀՀ օրենսդրության և ԱԶԲ ԱԶՀ-ի բնապահպանական անվտանգության երեշխիքների պահանջներին համապատասխան: Թերությունների շտկման ժամանակահատվածի և դրան հաջորդող շահագործման մնացած ողջ ժամանակահատվածում բնապահպանական կատարման համապատասխանությունը ՀՀ օրենսդրության պահանջներին կապահովվի ՏԿԵՆ-ի կողմից:

## 9.2 ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Մոնիթորինգը ԲԿՊ շրջանակներում ներառում է մոնիթորինգի ելակետային տվյալների հավաքագրումը և բնապահպանական կանոնավոր մոնիթորինգի պլանը:

Ջրի և օդի որակների վերաբերյալ տվյալների բազային հավաքագրումը կիրականացվի վերջնական ՇՄԱԳ-ի նախապատրաստման ընթացքում: Կապալառուն պետք է նաև հավաքի ելակետային տվյալներ աղմուկի վերաբերյալ:

Փոշու, ջրի, աղմուկի թրթռման պլանը որպես Բնապահպանական կառավարման պլանի բաղադրիչ. մոնիթորինգի պլանը կմշակվի Կապալառուի կողմից և կհամաձայնեցվի Ինժեների հետ՝ հետագա կանոնավոր մոնիթորինգի համար հստակ նշելով չափման կետերի տեղավայրը, չափումների ժամանակացույցը և յուրաքանչյուր չափվող կետի սահմանային արժեքները՝ համեմատական վերլուծության համար: Հետագա կանոնավոր մոնիթորինգի սահմանային արժեքները կսահմանվեն ելակետային տվյալների և հայաստանյան ստանդարտների հիման վրա և կհամաձայնեցվեն Ինժեների հետ: Ելակետային տվյալների հետազոտական ծախսերը կներառվեն Կապալառուի բյուջեում:



Բնապահպանական կանոնավոր մոնիթորինգի պանը նախատեսում է գործողություններ, որոնք կուղղորդեն Կապալառուին՝ ստուգելու և/կամ համեմատելու մեղմացնող միջոցառումները Ծրագրի հետևանքով առաջացած բացասական ազդեցությունները կանխարգելելու և վերահսկելու համար: Այն օգտագործվում է նաև տարբեր պարամետրերի չափումների և համեմատական վերլուծության նպատակներով՝ պարզելու համար, թե արդյոք բնապահպանական չափանիշները և ցուցանիշները պահպանված կամ գերազանցված են, որպեսզի անհապաղ գործողություններ ձեռնարկվեն: Բնապահպանական մոնիթորինգը կարող է նաև ցույց տալ և որոշել Ծրագրի անցանկալի ազդեցությունների վերահսկման նպատակով իրականացվող մեղմացնող միջոցառումների արդյունավետությունը: Ինժեների կողմից մոնիթորինգի կենթարկվի առաջարկված մեղմացնող միջոցառումների իրականացման արդյունավետությունը: Բնապահպանական մոնիթորինգի արդյունքները կփաստաթղթավորվեն՝ բացասական ազդեցությունների հետևանքներն արձանագրելու և իրատեսական ամենավաղ ժամկետում շտկող միջոցառումներ իրականացնելու նպատակով: Բնապահպանական կատարման ցուցանիշների հետ մոնիթորինգի արդյունքների անհամապատասխանությունը նույնպես կարձանագրվի:

Մոնիթորինգը պետք է իրականացվի Ծրագրի տարբեր մակարդակներում ներգրավված բնապահպանության մասնագետների կողմից մոնիթորինգի իրականացման նպատակով տեղամասային այցելությունների միջոցով: Տեղամասային այցելությունները պետք է իրականացվեն համաձայն մոնիթորինգի պաշտոնական ժամանակացույցի՝ Կապալառու շաբաթական, Ինժեներ՝ ամսական: Բնապահպանական մոնիթորինգի առաջադրանքների մանրամասները նկարագրված են ԲԿՊ-ում:

### 9.3 ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Իրականացման ժամանակացույցը և իրականացման համար պատասխանատու մարմինները ներկայացված են ԲԿՊ-ում:

#### 9.3.1 Բնապահպանական անձնակազմի համալրում

Բնապահպանության մասնագետները կներգրավվեն Ինժեների և Կապալառուի մակարդակներում: ԱԶԲ անվտանգության քաղաքականության և Հայաստանի Հանրապետության օրենսդրության հետ Ծրագրի գործողությունների համապատասխանությունն ապահովելու նպատակով կարողությունների զարգացումը, ինչպես նաև բնապահպանության ստորաբաժանումների և մասնագետների առաջադրանքներն ու պարտականությունները նույնպես նկարագրված են ԲԿՊ-ում:

#### 9.3.2 Մոնիթորինգի վերաբերյալ պարտավորությունները, դերերը, առաջադրանքները եվ գործողությունների հաճախականությունը

ԲԿՊ-ի իրականացմանը, վերահսկողությանը և մոնիթորինգին առնչվող պարտավորությունները, դերակատարությունները, առաջադրանքները և գործողությունների հաճախականությունները բաշխված են հետևյալ կերպով



- (i) Կապալառուի բնապահպանության մասնագետը ունի հետևյալ պարտականությունները, դերերը և առաջադրանքները՝
- Կապալառուի վերահսկողության թիմը և բնապահպանության մասնագետը իրականացնում են բնապահպանական մեղմացնող միջոցառումները և դրանց առնչվող մոնիթորինգի գործողությունները օրական կտրվածքով:
  - Բնապահպանության մասնագետը վերահսկում է ելակետային տվյալների հետազոտությունները՝ համաձայն Տեխնիկական մասնագրերի և Բնապահպանական պլանի:
  - Բնապահպանության մասնագետը շաբաթական կտրվածքով իրականացնում է տեղամասային այցելություններ և ստուգումներ:
  - Բնապահպանության մասնագետը փաստաթղթավորում է մոնիթորինգի գործողությունները և արդյունքները ներառում շաբաթական բնապահպանական հաշվետվության մեջ:
  - Եթե մոնիթորինգի արդյունքները չեն բավարարում սահմանված պահանջներին, բնապահպանության մասնագետը հնարավորինս շուտ սահմանում է անհրաժեշտ շտկող գործողություններ՝ Շտկող միջոցառումների պլանի միջոցով:
  - Պատահարների դեպքերում (հրդեհ, պայթյուն, նավթի արտահոսք, բիտումի արտահոսք և այլն) Կապալառուն պարտավոր է անհապաղ տեղեկացնել Ինժեներին: Նախնական ծանուցումը կարող է լինել բանավոր, սակայն տեղի ունեցած պատահարից կամ միջադեպից հետո՝ 24 ժամվա ընթացքում պետք է հաջորդի գրավոր զեկույցը:
  - Բնապահպանության մասնագետը պետք է պատրաստի Առաջընթացի վերաբերյալ ամսական հաշվետվություն՝ որպես Կապալառուի աշխատանքների առաջընթացի ամսական հաշվետվության մի մաս:
  - Բնապահպանության մասնագետը թերությունների շտկման ժամանակահատվածում պետք է կատարի 2 այցելություն տեղամաս և ներկայացնի տեղամասի կարգավիճակի մասին հաշվետվություն:
- (ii) Ինժեների բնապահպանության մասնագետը ունի հետևյալ պարտականությունները, դերերը և առաջադրանքները՝
- Օրական, շաբաթական և ամսական կտրվածքներով վերահսկել, ստուգել և համակարգել Կապալառուի բնապահպանական մասնագետի և վերահսկող խմբի առաջադրանքները/գործողությունները, ինչպես նաև Կապալառուի շինարարական գործունեությունը
  - Ստուգել տեղամասերը, որոնք Կապալառուն մտադիր է օգտագործել որպես շինարարական ճամբար(ներ), սարքավորումների/տեխնիկայի պահեստավորման, կայանման, թափոնների կուտակման և նմանատիպ այլ գործողությունների համար մինչ աշխատանքների մեկնարկը, նախապատրաստել ստուգման արդյունքների հաշվետվություններ և ներկայացնել Ինժեների հաստատմանը՝ տեղեկատվությունը հասանելի լինելուն պես
  - Դիտարկել Կապալառուի կողմից ներկայացված Շտկող միջոցառումների պլանը
  - Ստուգել և վերահսկել Կապալառուի կողմից շտկող միջոցառումների իրականացումը՝ ապահովելու համար դրանց արդյունավետությունը





իրականացումից անմիջապես հետո

- Մոնիթորինգի ենթարկել շտկող միջոցառումների արդյունավետությունը դիտարկել մոնիթորինգի վերաբերյալ Կապալառուի շաբաթական հաշվետվությունները՝ բնապահպանական մոնիթորինգի գործողությունների վերաբերյալ տվյալներն ու տեղեկատվությունը պատշաճորեն ստուգելու նպատակով
- Դիտարկել և հաստատել Կապալառուի կողմից ներկայացված փաստաթղթերը՝ հիմնվելով ԾԻԿ-ի հետ խորհրդակցությունների, թարմացված ԲԿՊ-ի, հաշվետվության սխեմատիկ կառուցվածքների, ձևանմուշների և այլնի վրա
- Լուծել բոլոր բնագավառները ԲԼՄ-ի շրջանակներում
- Ստուգել Կապալառուի կողմից ներկայացված տեղամասի կարգավիճակի մասին հաշվետվությունը թերությունների շտկման ժամանակաշրջանում
- Կապալառուի ամսական առաջընթացի հաշվետվության հիման վրա պատրաստել ամսական առաջընթացի վերաբերյալ հաշվետվություն, այդ թվում՝ բնապահպանական երաշխիքների և մոնիթորինգի իրականացում
- Պատրաստել եռամսյակային հաշվետվություններ, ինչպես նաև ավարտական հաշվետվություն՝ ՀՀԾՄ ԾԻԿ ներկայացնելու համար

(iii) Կապալառուի առողջության և անվտանգության մասնագետը ունի հետևյալ պարտականությունները, դերերը և առաջադրանքները՝

- Ստուգել, փորձարկել և գնահատել աշխատավայրի միջավայրը, սարքավորումները և գործելակերպը՝ համոզվելու համար, որ դրանք համապատասխան լինեն անվտանգության ստանդարտներին և պետական կանոնակարգերին,
- Պատրաստել ստացված արդյունքների վերաբերյալ համապատասխան գրավոր զեկույցներ,
- Գնահատել աշխատավայրի առողջությունը և անվտանգությունը ապահովող ծրագրերը,
- Գործատուներին և աշխատողներին տեղեկացնել աշխատավայրի անվտանգության պահպանման նորմերի մասին՝ պատրաստելով և տրամադրելով համապատասխան ծրագրեր,
- Ուսումնասիրել միջադեպերն ու դժբախտ պատահարները՝ պարզելու համար, թե ինչն է հանդիսացել դրանց առաջացման պատճառը և ինչպես հնարավոր է դրանք կանխել,
- Համագործակցել բնապահպանության մասնագետի հետ՝ առողջության և անվտանգության լավ արդյունք ապահովելու համար:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության (ՇՄՆ) Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը (ԲԸՏՄ) իրավասու է ստուգել Ծրագրի համապատասխանությունը շրջակա միջավայրի պահպանության սկզբունքներին և համապատասխան կանոնակարգերին՝ համաձայն ՀՀ բնապահպանական օրենսդրության:



### 9.3.3 Իրազեկման մակարդակի բարձրացում եվ բնապահպանական ուսուցում

Կապալառուն պատասխանատու կլինի Ծրագրի գործողությունների և բնապահպանական իրազեկման վերաբերյալ ընդհանուր կողմնորոշիչ դասընթացներ կազմակերպելու համար: Այս դասընթացները կկենտրոնանան աշխատանքային տեղամասում աշխատող բոլոր մարդկանց/աշխատողների պարտականությունների վրա՝ առնչվելով շրջակա միջավայրի պահպանությանը և շինարարության փուլում սոցիալական խնդիրների վերաբերյալ անվտանգ մոտեցում ցուցաբերելուն՝ համաձայն ԱԶԲ ԱԶՅ (2009 թ.), ՀՀ բնապահպանական օրենսդրությանը, ՆԳՅ-ի և ԲԿՊ-ի:

Ուսումնական գործընթացի անհրաժեշտության գնահատումը կիրականացվի ԲԿՊ-ն դաշտային մակարդակում պատշաճորեն ներկայացնելու համար: Դասընթացները կներառեն, սակայն սահմանափակված չեն լինի հետևյալով՝ թափոնները հասցնել նվազագույնի, հարգել և պաշտպանել վայրի բնությունն աշխատանքային տեղամասում, թափոնների պատշաճ կառավարում, աշխատանքի ընթացքում աշխատողների անվտանգության ապահովման միջոցառումներ, արտակարգ իրավիճակների կամ միջադեպերի ժամանակ պատրաստվածություն և այլն: Առանձին ուսուցում պետք է կազմակերպվի ազդեցության ենթարկվող հարակից համայնքների համար՝ ԲԼՄ-ի մասին իրազեկելու և շինարարության ընթացքում մարդկանց պատահարներից զերծ պահելու նպատակով: Հատուկ ուսուցում կանցկացվի նաև բեռնատարների և այլ մեքենաների վարորդների համար:

### 9.4 ԾԱԽՍԵՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՐՔՅՈՒՐՆԵՐԸ

Իրականացման ժամանակացույցը և իրականացման պատասխանատու մարմինները ներկայացված են ԲԿՊ-ում (Հավելված 2).

Կապալառու, որը նշանակվելու է շինարարական աշխատանքներն իրականացնելու համար, պատասխանատու կլինի սույն ՇՄԱԳ-ում և ԲԿՊ-ում սահմանված մեղմացնող միջոցառումների իրականացման համար: Շինարարական աշխատանքների պայմանագրում (Մեծությունների օրինագիծ) պետք է ներառվի որոշակի արժեք՝ մեղմացնող միջոցառումների իրականացումը բավարարելու համար:

Ճարտարագետը, որը նշանակվելու է շինարարական աշխատանքները վերահսկելու համար, պատասխանատու կլինի Կապալառուի գործունեության վերահսկման, մոնիթորինգի և հաշվետվության համար՝ ԲԿՊ պահանջները կյանքի կոչելու հարցում: Այս վերահսկողության ծախսերը ներառվելու են ինժեների բյուջեում և մաս են կազմելու ծառայությունների մատուցման մրցույթի

Շրջակա միջավայրի պահպանության գործունեության մոնիթորինգի գինը ներառված է ընդհանուր ՏՏ գործառնական ծախսերի մեջ:

### 9.5 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի բնապահպանական երաշխիքների համապատասխանության վերաբերյալ պետք է պարբերաբար զեկուցվի ծրագրի իրականացման բոլոր մակարդակներում Կապալառու, Ինժեներ, ԾԻԿ/ՏԿԵՆ և ԱԶԲ:



Կապալառուի կողմից Ինժեներին պետք է ներկայացվեն հետևյալ բնապահպանական հաշվետվությունները.

- (i) Ծրջակա միջավայրի վերաբերյալ շաբաթական հաշվետվություններ. շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքներն ու եզրակացությունները կփաստաթղթավորվեն Կապալառուի կողմից հատուկ մշակված և Ինժեների կողմից հաստատված մոնիթորինգի ստուգաթերթիկում: Մոնիթորինգի շաբաթական հաշվետվությունը պետք է ներառի բնապահպանական կատարման ցուցանիշը և մեղմացնող միջոցառումների արդյունավետության գնահատումը:
- (ii) Առաջընթացի վերաբերյալ ամսական հաշվետվություն. շրջակա միջավայրի վերաբերյալ ամփոփ հաշվետվությունը պետք է ներկայացվի որպես Կապալառուի ամսական առաջընթացի վերաբերյալ հաշվետվության մաս: Ամսական հաշվետվությունները պետք է լինեն վերլուծական բնույթի և բացատրություններ ապահովեն շեղումների, անհամապատասխանությունների և այլ խնդիրների վերաբերյալ:

Հաշվետվությունները պետք է համակողմանիորեն ներառեն ԲԿՊ և ՏԲԿՊ մեղմացնող միջոցառումների (մատնանշել մեղմացնող միջոցառումների տեսակը, նպատակը և խնդիր(ները), վայրը/ տեղադիրքը, ներգրավված նյութերը և գործունեությունները և այլն) իրականացման բոլոր համապատասխան ասպեկտները՝ բնապահպանական կանոնակարգերի և պահանջների (ուսուցում/կողմնորոշում, թույլտվություններ, արտոնագիր և այլն) համաձայն՝ իրականացված հաշվետու ժամանակահատվածում: Հաշվետվությունների կառուցվածքը կհամաձայնեցվի Ինժեների և ԾԻԿ-ի հետ և կներառի մոնիթորինգի ենթարկվող հետևյալ պարամետրերը՝.

- (i) աշխատանքային տեղամասեր
- (ii) աշխատանքային տեղամասերի անվտանգություն. շինհրապարակի աշխատողներ և հարակից համայնքներ
- (iii) նյութերի և թափոնների կառավարում և տեղավորում, այդ թվում՝ վտանգավոր թափոնները
- (iv) Կապալառուի հարմարություններ և սարքավորումներ
- (v) քարհանքերի, բացահանքեր և հանույթի նյութի դատարկման վայր
- (vi) հանրային հաղորդակցություն և բողոքարկումներ

Պատահարների դեպքում (կրակ, պայթյուն, նավթի կամ բիտումի արտահոսք և այլն), Կապալառուն պարտավոր է անմիջապես տեղեկացնել Ինժեներին: Նախնական ծանուցումը կարող է լինել բանավոր, որին պետք է հետևի գրավոր զեկույցը՝ պատահարից հետո 24 ժամվա ընթացքում:

Ինժեները ԾԻԿ-ին պետք է ներկայացնի բնապահպանական երաշխիքների վերաբերյալ ամսական հաշվետվություն՝ որպես ամսական և եռամսյակային առաջընթացի հաշվետվությունների մի մաս: ԾԻԿ-ը ԱԶԲ-ին կներկայացնի բնապահպանական երաշխիքների վերաբերյալ կիսամյակային հաշվետվություն: Կիսամյակային հաշվետվությունները պետք է հրապարակվեն ԾԻԿ-ի և ԱԶԲ-ի կայքէջերում:



## 10. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 10.1 ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ միջանցքի հարավային հատվածը՝ Քաջարան-Ագարակ ճանապարհահատվածը, ստուգվել է ԱԶԲ Արագ բնապահպանական գնահատման (ԱԲԳ) ստուգաթերթիկով՝ վերջինիս բնապահպանական կատեգորիան որոշելու համար: ԱԲԳ ստուգաթերթիկի հիման վրա Ծրագիրը որոշ հատվածներում փոխհատում է հատուկ պահպանվող տարածքի հետ («Չանգեզուր Կենսոլորտային Համալիր» հատուկ պահպանվող տարածք): Ծրագիրը դասակարգվում է «A» խմբում:

ԱԶԲ-ի պահանջով կպատրաստվի ՇՄԱԳ հաշվետվություն այս ծրագրի համար: Այս կատեգորիան պետք է ղեկավարության դիտարկման հանդիպման ժամանակ նորից հաստատվի համապատասխանությունը ստուգող գլխավոր մասնագետի կողմից:

Բացի այդ, ՀՀ բնապահպանական օրենքների համաձայն՝ 10 կմ-ից ավել ճանապարհի կառուցման (կամ վերակառուցման) դեպքում անհրաժեշտ է իրականացնել բնապահպանական փորձաքննություն:

ՇՄԱԳ-ի ընթացքում կուսումնասիրվեն օդի որակը, աղմուկի և թրթռումների մակարդակները՝ բնապահպանական ելակետային տվյալները թարմացնելու համար: Անհրաժեշտ է գնահատել հողի և ստորերկրյա ռեսուրսների հավանական աղտոտումը:

Պաշտպանված բուսական և կենդանական տեսակների առկայության պատճառով Էկոլոգիական հետազոտություն պետք է իրականացվի ՇՄԱԳ-ի ընթացքում: «Արևիկ» ազգային պարկի նշանակությունը որպես միջսահմանային «բնակատեղի» պահանջում է, որ Էկոլոգիական հետազոտության ընթացքում վայրի կենդանիների «արահետները» պետք է հստակորեն նշվեն: Այդ տեղեկությունները ստանալուց հետո պետք է նախագծվեն գծանցքներն ու համապատասխան ցանկապատները:

Տարբերակ 1-ը գտնվում է Քաջարան քաղաքի գերեզմանոցի մոտ, անցնում է Պուշկալ գյուղով, Պուշկալ գերեզմանոցի մոտով և հին Լեկվազ գյուղավայրի միջով:

Ծրագրի իրականացումը կունենա նաև մի շարք դրական ազդեցություններ: Գոյություն ունեցող ճանապարհի բարելավումը կնպաստի երթևեկության շարժին և կշատացնի տնտեսական հնարավորությունները՝ ապահովելով.

- աշխատանքային հնարավորություններ շինարարության և շահագործման ընթացքում,
- այնպիսի մշակութային ենթակառուցվածք, որը կբարելավի մարդկանց և ապրանքների տեղաշարժը և կնպաստի Հայաստանի այս շրջանի զարգացմանը,
- ազատ մուտք դեպի տուրիստական և մշակութային վայրերը, հատկապես՝ «Արևիկ» ազգային պարկ,
- «Արևիկ» ազգային պարկի սպասարկման համար պահանջվող հաղորդուղիների հեշտ անցկացում,
- Այնպիսի հաստատություն, որը ուսումնասիրության միջանցքում կընձեռի բիզնեսի ավելի շատ հնարավորություններ և կբարելավի տնտեսական ցիկլը:



ՇՄԱԳ-ի ընթացքում Էկոլոգիական ուսումնասիրության, հնագիտական հետազոտության, հետախնայության կատարված տարածքների գնահատման և ծախսերի/առավելությունների մանրամասն ուսումնասիրության արդյունքները կնպաստեն այլընտրանքային տարբերակների գնահատման բարելավմանը:

Հետագա ՇՄԱԳ հաշվետվությունը կհանդիսանա շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման սույն հաշվետվության բարելավված տարբերակը:

Ծրագրի հիմնական առավելությունները ներառում են տնտեսական օգուտները:

## 10.2 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կապալառուն պետք է պատրաստի տեղամասին հատուկ շրջակա միջավայրի կառավարման պլան (ՏԲԿՊ), որոնք կներկայացնեն մանրամասն գործառնական բնապահպանական կառավարման և մոնիթորինգի միջոցառումները մոբիլիզացիայի ժամանակահատվածում՝ նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը, շինարարական գործողությունների ողջ ժամանակահատվածում և թերությունների վերացման ժամանակահատվածում:

Ինժեները մոնիթորինգի կենթարկի և կվերահսկի մեղմացող միջոցառումների իրականացումը Կապալառուի կողմից և կներկայացնի անհամապատասխանության ծանուցում դրանց ոչ պատշաճ, ոչ ժամանակին իրականացման առնչությամբ: Ինժեները իրավասու է դադարեցնել բոլոր համապատասխան աշխատանքները (Կապալառուի ծախսերով), քանի դեռ ՇՄԱԳ-ի և ԲԿՊ-ի պահանջները չեն իրականացվել և շտկվել՝ ի գոհունակություն Ինժեների:

Շինարարական աշխատանքների համապատասխանությունը ԱԶԲ երաշխիքներին և ՀՀ օրենսդրությանը պետք է ստուգվի Կապալառուի, Ինժեների և ԾԻԿ-ի կողմից իրականացվող կանոնավոր մոնիթորինգների միջոցով:

Կապալառուի բնապահպանության մասնագետը Ինժեների բնապահպանության մասնագետի հետ միասին կուսումնասիրի չօտարվող հողերի տարածքում ծառերի և թփերի տեղը, որոնք ամենայն հավանականությամբ կվնասվեն շինարարական աշխատանքների ընթացքում, և կառաջարկի մեթոդներ՝ դրանց կորուստը կանխելու համար: Բոլոր ծառերն ու թփերը, որոնք չեն ենթարկվում շինարարական գործողությունների ազդեցությանը, սակայն մոտ են գտնվում աշխատանքային տեղամասին, պետք է պահպանվեն: Մնացած բոլոր ծառերն ու թփերը, որոնք չեն կարող պահպանվել, կվերատնկվեն 6:1 հարաբերակցությամբ: Փոխարինող ծառերի և թփերի տնկումը կիրականացվի հողի համապատասխան պայմաններ ունեցող վայրերում: Կօգտագործվեն տեղական տեսակներ: Նորատունկ ծառերը պետք է 3 տարի խնամվեն Կապալառուի կողմից, մինչև դրանց կենսունակ դառնալը:



## 11. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

### ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՇՐՋԱԿԱ ՄԻՋՎԱԿԱՅՐԻ ԱՐԱԳ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ

Երկիր/Ծրագրի անվանում՝

Հայաստանի Հանրապետություն / Հյուսիս-հարավ ճանապարհային  
միջանցքի ներդրումային ծրագիր . Տրանշ 4

Բաժին՝

Աղյուսակ 16: Արագ բնապահպանական գնահատում (ստուգաթերթիկ)

Հարցեր	Տարբերակ 1 ՏՈՒ		Տարբերակ 2 BLUE 80		Տարբերակ 3 100		Նշումներ
	Այո	Ոչ	Այո	Ոչ	Այո	Ոչ	
<b>A. Ծրագրի տեղանքը</b> Արդյո՞ք ծրագրի տարածքը գտնվում է ստորև նշված բնապահպանական տեսանկյունից զգայուն տարածքներից մեկում կամ դրա մերձակայքում:							
1. Մշակութային ժառանգություն հանդիսացող տարածքներ	X		X		X		Նախնական հետազոտության արդյունքում բացահայտվել են ծրագրին մոտ գտնվող մի քանի հնագիտական վայրեր: Հնագիտական վայրերը կհետազոտվեն. և դրենց առավելագույն պաշտպանության համար կառաջարկվեն միջոցառումներ:
2. Պահպանվող տարածքներ	X		X		X		Ճանապարհի ծրագրի մոտ 100 մ հատվածն անցնում է Չանգեզուրի պետական արգելավայրի տարածքով: Մանրամասն հետազոտություն պետք է իրականացվի՝ վերոհիշյալ հատվածի վերանախագծման հավանականությունը գնահատելու համար: Հակառակ դեպքում, պետք է մշակվեն համապատասխան մեղմացնող միջոցառումներ՝ ծրագրի ազդեցությունը նվազեցնելու համար:



3. Խոնավ հողեր/տարածքներ		X		X		X	Հայտնաբերված չէ գտնվում է ծրագծից հեռու
4. Մանգլենիներ		X		X		X	Կիրառելի չէ
5. Գետաբերաններ		X		X		X	Կիրառելի չէ
6. Պահպանվող տարածքների բուժերային գոտիներ							Կիրառելի չէ
7. Կենսաբազմազանության պահպանման համար հատուկ տարածքներ	X		X		X		Հայտնաբերված չէ

Ծրցակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները Արդյո՞ք Ծրագիրը...	Տարբերակ 1 SՈՒ		Տարբերակ 2 BLUE 80		Տարբերակ 3 100		Նշումներ
1. կանցիկ պատմական / մշակութային տարածքներով, ճանապարհային շեպերի, լիցքերի, հանույթների և քարհանքերի շահագործման հետևանքով կծափվող կանաչապատ տարածքները	X		X		X		Չնայած հնագիտական տարածքների նկատմամբ ոտնձգությունն անխուսափելի է, ոչ մի կրիտիկական մշակութային ժառանգություն այդ տարածքում չի հայտնվել պաշտոնական գրանցամատյանների և համարժեք սեղանային ուսումնասիրությունների միջոցով:
2. կապառնա զգայուն կամ պահպանվող տարածքներին	X		X		X		Քննարկվում է բնության կողմից պահպանվող տարածքի նկատմամբ ծրագծի նոր տարբերակ:
3. կփոփոխի մակերևութային ջրերի հիդրոլոգիան, որի արդյունքում կավելանան նստվածքները գետերում շինարարական հողային էրոզիայի ազդեցության արդյունքում		X		X		X	Ճանապարհների բոլոր 3 ծրագծերը չեն խանգարում մակերեսային ջրային մարմինների հիդրոլոգիային գետերի ջրի հոսքը և / կամ ջրի որակը փոխելու առումով: Գնահատականային աշխատանքներին բնորոշ սովորական ժամանակավոր ազդեցություն: Պարբերաբար մեղմացնող միջոցառումները կկառավարեն ազդեցությունը
4. մակերևութային ջրերի որակի վատթարացում տիղմի հոսքի և աշխատանքային ճամբարներից՝ կենցաղային	X		X		X		Գնահատականային աշխատանքներին բնորոշ սովորական ժամանակավոր ազդեցություն: Պարբերաբար





թափոնների, և շինարարության ժամանակ օգտագործվող քիմիական նյութերի պատճառով						մեղմացնող միջոցառումները կկառավարեն ազդեցությունը	
5. Տարածքի օդի աղտոտվածության մակարդակի բարձրացում՝ ժայռերի պայթեցման, հանույթի և լիցքի աշխատանքների և ասֆալտի մշակման համար քիմիկատների օգտագործման հետևանքով	X		X		X	ճանապարհաշինական աշխատանքներին բնորոշ սովորական ժամանակավոր ազդեցություն: Պարբերաբար մեղմացնող միջոցառումները կկառավարեն ազդեցությունը	
6. Կհանգեցնի աշխատանքային առողջության և անվտանգության ռիսկերի ու խոցելիության՝ կապված ծրագրի շինարարական աշխատանքների և շահագործման ընթացքում ֆիզիկական, քիմիական և կենսաբանական վտանգների հետ	X		X		X	ճանապարհաշինական աշխատանքներին բնորոշ սովորական ժամանակավոր ազդեցություն: Պարբերաբար մեղմացնող միջոցառումները կկառավարեն ազդեցությունը	
7. Մարդկանց տեղափոխում կամ հարկադիր տարաբնակեցում	X		X		X	Տուժելու են ինչպես հողամասերը, այնպես էլ շենքերը	
8. Այլ սոցիալական մտահոգություններ, որոնք վերաբերում են ծրագրի տարածքներում կենսապայմանների անհարմարությանը, որոնք կարող են առաջացնել վերին շջուղիների խնդիրներ և սթրես	X		X		X	ճանապարհաշինական աշխատանքներին բնորոշ սովորական ժամանակավոր ազդեցություն: Պարբերաբար մեղմացնող միջոցառումները կկառավարեն ազդեցությունը	
9. Մեքենա վարելու համար վտանգավոր պայմաններ շինարարության տարածքների և գոյություն ունեցող նախկին ճանապարհների հատման հատվածներում	X			X		X	Դիտարկվում է տեղական ճանապարհային ցանցի վրա անդառնալի ազդեցություն
10. Ոչ բավարար սակիտարափոփոխական պայմաններ, և շինարարական ճամբարներում և	X		X		X	ճանապարհային շինարարության աշխատանքներին բնորոշ սովորական ժամանակավոր ազդեցություն, որը	



շինարարականներում կոշտ թափոնների տեղավորում, հնարավոր է վարակիչ հիվանդությունների փոխանցում (ինչպիսիք են՝ ստրապարակները և ՄԻՎԿ/ՁԻԱԲ) աշխատողներից՝ տեղի բնակչությանը						կառավարելի է ԲԿՊ-ով նախատեսված կանոնավոր մեղմացնող միջոցներով, ներառյալ Թափոնների կառավարման պլանը:	
11. Վարակիչ հիվանդությունների գարգացման ժամանակավոր օջախների ստեղծում, որոնք փոխանցվում են մոծակների և կրծողների միջոցով		X		X		X	Ոչ մի գործողություն, որը կարող է հանգեցնել ազդեցության
12. Սոցիալական կոնֆլիկտները՝ այլ տարածաշրջաններից կամ երկրներից աշխատողներ վարձելու դեպքում	X		X		X		Տուժելու են ինչպես հողամասերը, այնպես էլ շենքերը
13. Պատահարների ռիսկերը՝ կապված երթևեկության աճի հետ, ինչը հանգեցնում է թունավոր կյութերի պատահական արտահոսքերի		X		X		X	Ճանապարհի մակերևույթի բարելավում, բարելավված ազդանշանային համակարգ և կառավարում (լուսաֆորներ) է ակնկալվում վթարների ռիսկերը նվազեցնելու համար
14. Increased noise and air pollution resulting from traffic volume?		X		X		X	Օդի աղտոտվածության մակարդակի ավելացման ռիսկն աննշան է
15. Աղմուկի և օդի աղտոտվածության մակարդակների բարձրացում երթևեկության ծավալների աճի հետևանքով		X		X		X	Ջրի աղտոտման մակարդակի ավելացման ռիսկն աննշան է



## ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՏՐԱՆՇ 4՝ ՔԱՋԱՐԱՆ - ԱԳԱՐԱԿ ՄՈՏ 45 ԿՄ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԱՏՎԱԾԻ ԲՆԱՊԱՀԱՅԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԴԼԱՆ

Բնապահպանական կառավարման պլանը (ԲԿՊ) ներկայացնում է մի շարք մեղմացնող և մոնիթորինգի միջոցառումներ, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել ծրագրի իրականացման ընթացքում՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություններից խուսափելու, դրանք նվազեցնելու կամ մեղմացնելու համար: Այն ներկայացնում է հնարավոր ազդեցությունները, դրանց գտնվելու վայրերը, ինչպես նաև առաջարկվող մեղմացնող միջոցառումները, միջոցառումների իրականացման պատասխանատու մարմիններին և մոնիթորինգի գործողությունները, ներառյալ գնահատված ծախսերը:

ԲԿՊ-ն նկարագրում է, թե ինչպես են իրականացվելու և մոնիթորինգի ենթարկվելու շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ մեղմացման և այլ միջոցառումները: Այն բացատրում է, թե ինչպես են միջոցառումները մշակվելու և կառավարվելու, ովքեր են պատասխանատու լինելու դրանց իրականացման համար, երբ և որտեղ են դրանք իրականացվելու, և ում կողմից են մոնիթորինգի ենթարկվելու: ԲԿՊ-ում նկարագրվում են հետևյալ տարրերը՝

- (i) ԲԿՊ-ի առարկա հանդիսացող ծրագրի գործողությունները
- (ii) Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները (ներառյալ ազդեցությունները հնագիտական ռեսուրսների վրա)
- (iii) Մեղմացնող միջոցառումներ սույն ծրագրի նախաշինարարական, շինարարության և շահագործման փուլերում
- (iv) Մոնիթորինգի գործողություններ սույն ծրագրի նախաշինարարական, շինարարության և շահագործման փուլերում
- (v) Տարբեր կողմերի պատասխանատվությունները մեղմացման և մոնիթորինգի միջոցառումներն իրականացնելիս և

Բնապահպանական կառավարման և մեղմացման միջոցառումների ինդիկատիվ ծախսերը:



Աղյուսակ 17: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ

Նախագծի միջոցառումները	Պոտենցիալ Բնապահպանական Ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Հետեվանքն երի Մեղմացման Ծախսերի Մոտավոր Արժեքը (ԱՄՆ\$)
<b>ՆԱԽԱԳԾՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆ ՓՈՒԼ</b>				
Կարգավորման և մանրամասն նախագծման ավարտը շրջակա միջավայրի վրա ազդեցություններ չի նվազեցնում	Շինարարությունը կարող է հանգեցնել շրջակա միջավայրի անդառնալի դեգրադացմանը:  Մանրամասն նախագծում հաշվի չեն առնվում ՇՄԱԳ-ի պահանջները, ինչը շինարարության և Նախագծի շահագործման ընթացքում հանգեցնում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների	(i) Վերանայել և ավարտին հասցնել ճանապարհային ուղին ու դիզայնը շրջակա միջավայրի վրա ազդեցության հնարավոր նվազեցման առումով: Վերանայումները կարող են հանգեցնել ուղիների տեղափոխմանը և/կամ փոխել ճանապարհի ընդլայնումը դեպի առկա ճանապարհի աջ կամ ձախ կողմը՝ ուղղակի ազդեցությունները վերացնելու համար, եթե ազդեցությունը չնվազեցվի իր նվազագույնին:  (ii) Մշակել Տեխնիկական Բնութագրեր ԲԿՊ-ում սահմանված մեղմացնող միջոցառումների հիման վրա և մրցույթի ու պայմանագրային փաստաթղթերի հատուկ պայմաններում ներառել բնապահպանական դրույթներ:	<b>Նախագծող</b>  <b>ՃՊ</b>  Ուսումնասիրում է վերաբնակեցման արդյունավետությունը և ապահովում է առարկույթների բացակայությունը	Ներառված է Նախագծային բյուջեում  <b>ՃՊ</b>  Ներառված է ՃՊ ծախսերի մեջ
Մրցութային և պայմանագրային փաստաթղթերի	Բնապահպանական հարցերը կարևոր չեն համարվի	Մրցութային և պայմանագրային փաստաթղթերում ներառել ՇՄԱԳ և ԲԿՊ:	<b>ՃՊ</b>	Ներառված է ՃՊ ծախսերի



Նախագծի միջոցառումները	Պոտենցիալ բնապահպանական Ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Հետեվանքների մեղմացման ժախսերի մոտավոր Արժեքը (ԱՄՆ\$)
Նախապատրաստում				մեջ
Տուժած ծառերի ու թփերի գտնվելու վայրի, տեսակի և քանակի որոշում	Առաջարկվող ուղու երկայնքով աճող ծառերի ու թփերի հեռացումը չի լինի արտոնված և կիրականացվի առանց ազդեցության գնահատման և մեղմացնող միջոցառումների	Հստակեցնել ծառերի ու թփերի գտնվելու վայրը, տեսակն ու քանակը, դաշտային այցի ընթացքում անհրաժեշտ մեղմացնող միջոցառումները և արդյունքները ներառել վերջնական ՇՄԱԳ -ում:	<b>Նախագծող</b>	Ներառված է Նախագծային բյուջեում
Հնագիտական վայրերի և պատմամշակութային հուշարձանների ազդեցության գնահատում	Ծինհրապարակների մուտքը հնագիտական, պատմամշակութային հուշարձաններում չի լինի արտոնված առանց մեղմացնող միջոցառումների հաստատված պլանի:  Ունեցություն, ոչնչացում/դեգրացիա և	Իրականացնել տուժած հնագիտական վայրերի ու պատմամշակութային հուշարձանների դաշտային հետազոտություններ ազդեցության գնահատման և մեղմացնող միջոցառումներ առաջարկելու համար, որոնք կներառվեն վերջնական ՇՄԱԳ -ում:	<b>Նախագծող</b>	Ներառված է Նախագծային բյուջեում





Նախագծի Միջոցառումները	Պոտենցիալ Բնապահպանական Ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Հետեվանքն երի Մեղմացման Ծախսերի Մոտավոր Արժեքը (ԱՄՆ\$)
մասնագետների վարձում	վերահսկման և դեգրադացիայի			ծախսերի մեջ և ինժեներայի և բյուջեում
33	Ճոճահավ (Remiz pandulinus)	գետահովտային անտառներ, ուռուտներ, նստակյաց, տարածված
34	Սև երաշտահավ (Parus ater)	Անտառ, լայն գետածորեր, թփուտային կիսանապատ, նստակյաց, տարածված
35	Ժայռային փոքր սիտեղ (Sitta neumayer)	Ժայռաելուտներով չոր սարալանջեր, ժայռեր, ձորեր, ձմանը ծառերին, նստակյաց տարածված
36	Տնային ճնճողուկ (passer domesticus)	Մարդուն մոտ, նստակյաց, տարածված
37	Սովորական սայրակ (Sturnus vulgaris)	մարդուն մոտ, բնադրող չվող, տարածված
38	Մոխրագույն ագռավ (Corvus corone)	Մարդուն մոտ, խուսափում է խիտ անտառներից, նստակյաց, տարածված
39	Եվրոպական ճնճաճուռակ (Accipiter brevipes)	Անտառներ, պտղատու այգիներ, գետածորեր, բնադրող չվող, քիչ տարածված, բույնը բարձր ծառերին
40	Սևախայտ քարաթռչնակ (Oenanthe hispanica)	Թուտածածկ կիսանապատ, քարքարոտ լանջեր, բնադրող չվող տարածված
41	Եղեգնահավ (Gallinula chloropus)	Լճեր, ճահճուտներ, դանդաղահոս գետեր նստակյաց տարածված
42	Սովորական քարաթռչնակ /Oenanthe oenanthe/	Բաց քարքարոտ կիսանապատ, գետահովիտներ, բնադրող չվող տարածված
43	Մոխրագույն շահրիկ /Sylvia communis/	Անտառեզրեր, թփուտներ, մինչև ենթալայան գոտի, բնադրող չվող, տարածված



Բնական կենսաապամանների կրճատման և վերափոխման հետևանքով շատ տեսակներ (ագռավ, կաչաղակ, կեռնեխ, տատրակ, շամփրուկ և այլն) հարմարվել են մարդու հարևանությամբ ապրելուն: Արաբլի հովիտը, հաշվի առնելով տեղի մեղմ կլիման, կարող է լինել միգրացիոն ուղի և ժամանակավոր ապաստան հանդիսանալ որոշ քրոդ թռչունների համար վաղ գարնանային ամիսներին:

*Կաթնասուններ*

Կաթնասուններին դիտարկելը դժվար է, որքանով նրանց մեծ մասը ապրում են թաքնված կյանքով: Նրանց ներկայության մասին հաճախ կարելի է դատողություն անել հայտնաբերելով նրանց կենսագործունեության արդյունքները (բներ, արտաթորանք, բնական միջավայրի վրա կենսագործունեության հետքեր և այլն):

Ավտոմայրողու ծրագծին հարակից բարձրադիր անտառներում կաթնասուններից ապրում են լուսանը (*Felis lynx*), անտառային կատուն (*Felis silvestris caucasica*), այծյամը (*Capreolus capreolus*), վայրի խոզը (*Sus scrofa*), գայլը (*Canis lupus*), գորշուկը (*Meles meles*) և այլն: Եվրոպական նապաստակը (*Lepus europaeus*) և աղվեսը (*Vulpes vulpes*) գերադասում են ավելի ցածրադիր տեղանք, չոր լանջեր, թփուտներ, ընդ որում աղվեսը աստիճանաբար սովորել է մարդու ներկայությանը:

Հետազոտվող տարածաշրջանում կրծողներից հավանական է հանդիպել դաշտամուկը (*Arvicolinae*), ճագարամուկը (*Dipodidae*), կույր մուկը (*Mus caecus*), համստերը (*Cricetinae*):

Դաշտային աշխատանքների ընթացքում հայտնաբերվել են Անտառային կզաքսի (*Martes martes*) մնացորդներ: Քարակույտերում հավանական է հանդիպել քարակզաքսի (*Martes foina*) և աքսի (*Mustela nivalis*), այգիներում՝ սովորական ոզնի (*Erinaceus europaeus*), եղեգնուտներում՝ շնագայլեր (*Canis aureus*) և այլն բավականին բազմազան է չղջիկների տեսակային կազմը: Թռչող միջատների առատությունը և ժայռերի ճեղքեր առկայությունը որպես բնադրավայր նպաստում են նրանց տեսակային բազմազանությանը և թվաքանակին:

Հյուսիս հարավ ավտոմայրողու Քաջարան –ագարակ հատվածի տարածաշրջանում կատարված լուսանկարներ

Դաշտային ճնճղուկներ, արունները ( <i>Passer montanus</i> )	Սևախայտ քարաթռչնակ ( <i>Oenanthe hispanica</i> )



Կզաքիսի մնացորդներ (Martes)



Ագամա կովկասյան (Laudahia caucasia)



Չղջիկ sp.



Կարծրաթևավոր

**ՀՀ Կարմիր գրքի հետազոտության արդյունքները**





Հետագոտվել է ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գիրքը, նպատակ ունենալով պարզելու Ծրագրի տարածաշրջանում ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակները և հանդիպելու հավանականությունը: Հետագոտության արդյունքները ներկայացվում են աղյուսակների տեսքով: Այս տվյալները հնարավորություն են տալիս շինարարներին և աշխատակիցներին ճանաչել կարմիրգրքային բուսատեսակները և կենդանատեսակները և միջոցներ ձեռնարկել նրանց պահպանության համար:

ՀՀ բույսերի և կենդանիների տեսակների առկա վիճակը գնահատվել է համաձայն Բնության Պահպանության Միջազգային Միության կողմից մշակված սանդղակի („Կարմիր ցուցակի կատեգորիաներ և չափանիշներ,, IUNC 2001 թ.):

Աղյուսակ 24: Հյուսիս-հարավ ավտոմայրուղու Քաջարան- Ագարակ ծրագծի տարածաշրջանում հանդիպող ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված բուսատեսակները

h/h	Բույսերի անվանումը հայերեն և լատիներեն	Կատեգորիա	Տարածումը, բնակության բիոտոպը, բարձրունքային գոտին, ծաղկունքի և սերմատվության ամիսները
1	5. Սոխ ակակա, Allium akaka S.G. Gmel	CR B1	Ագարակի շրջակայք, աճում է 600-900 մ ծ. մ., ժայռոտ տեղանք, քարաթափվածքներ, ֆրիգանա 04-05, 05
2	14. Նեկտարասկորդում եռատունաչափ, Nectaroscordum tripedale Grossh.	EN* B 1	Այգեձոր գյուղ, Աճում է 1700- 2500 մ ծ. մ. անտառային բացատներ, մացառներ, թփուտներ
3	36. Մարգացնծու սակավաճառագայթ, Peucedanum pauciradiatum Tamamsch	CR B 1	Ագարակ և Աղարա գյուղերի շրջակայք, 800-900 մ ծ. մ., չոր, ժայռոտ լանջեր, 05, 06-07
4	50. Վարդատերեփուկ հյլինի, Amberboa iljiniana Grossh.	EN B 1	Ագարակի շրջակայք, 700-1000 մ ծ. մ., Կարմիր կավեր, գետաբարեր, քարքարոտ լանջեր, Էֆեմերային աղածաղկային կիսանապատ, 04-05, 05-06
5	53. Վարդատերեփուկ թուրանական, Amberboa turanica Iljin	EN B 1	Ագարակի շրջակայք, 700-800 մ ծ. մ., չոր, քարքարոտ լանջեր, կիսանապատ, 04-05, 05-06
6	Վաղենակ պարսկական, Calendula persica C.A.Mey	EN B 1	Արաքսի հովիտ, Շվանիձոր, Նոնաձոր: 500-700 մ ծ. մ., քարքարոտ կիսանապատներ, 04, 05
7	55. Տերեփուկ Ալեքսանդրի, Centaurea alexandrii Bordz.	EN B 1	Մեղրի, Արաքսի հովիտ, 400-1000 մ ծ. մ., չոր քարքարոտ լանջեր, չոր հուններ, գետափի ավազներ, Նոսրանտառներ, ֆրիգանա, 06, 07
8	62. Տերեփուկ Շելկովնիկովի, Centaurea schelkovnikovii Sosn	CR B 1	Վարդանիձոր, Կիճք, Տաշտունի լեռնանցք, 2200-2700 մ ծ. մ., քարքարոտ, խճաքարոտ, 06, 08
9	69. Խոզանափուշ երևանյան, Cousinia erivanensis Bornm.	EN B 1	Ագարակ, Մեղրի, Կարճևան: 800-1400 մ ծ. մ., ժայռոտ, քարքարոտ լանջեր, թփուտներ, ֆրիգանա, 06-07, 07-08





10	72. Խոզանափուռ մեղրիի, Cousinia megrica Takht.	EN B 1	Վարդանիձոր, Լեհվազ, 700-8000 մ ծ. մ., շիրյակ, Նոսրանտառ, չոր լանջեր, 06-07, 07-08
11	73. Խոզանափուռ ղարադաղի, Cousinia qaradaghensis Rech	CR B 1	Լիճք, Կուրիս, 1100-1400, ժայռոտ, քարքարոտ լանջեր, 06-07, 07-08
12	75. Կերեփան միջանկյալ, Crupnia intermedia Walp	VU* B 1	Լեհվազ, Այգեձոր, 1000-1700, չոր քարքարոտ լանջեր, գիհու և կաղնու Նոսրանտառներ, խճաքարի թափվածքներ, 06, 07
13	77. Ոզնագլխիկ բազմատուն, Echinops polygamous Bunge	EN B 1	Շվանիձոր, Կուրիս, Կարճևան, Լեհվազ, 800-1100 մ ծ. մ., չոր, քարքարոտ, խճաքարոտ լանջեր, ժայռեր, ֆրիգանա, աղբատեղեր, 06-07, 08
14	85. Յուրինեա նրբագեղ, Jurinea elegans (Stev.) DC.	EN B 1	Ագարակ, Շվանիձոր, 500-1000 մ ծ. մ., չոր, քարքարոտ լանջեր, ժայռոտ տեղեր, ֆրիգանա, 05-06, 06-07
15	104. Ամմոռուկ ցեղակից, Myosotis propinqua Fisch. et Mey. ex DC.	EN B 1	Մեղրու /Գողթնի/ լեռնաճյուղեր, 1100-1800 մ ծ. մ., անտառներ, 05-06, 06-07:
16	119. Չագխոտ կարմրակապույտ, Erysimum lilacinum E. Steinb.	EN B 1	Ագարակ, Այգեձոր, Լիճք, 1300-1600 մ ծ. մ., անտառի եզրեր, Նոսրանտառներ, թփուտներ, 05-06, 06-07
17	120. Չագխոտ խոշորասպի, Erysimum macrostygma Boiss. (= Erysimum wagifii Kassumov)	EN B 1	Մեղրու լեռներ, կարճևան, 1250-2000 մ ծ. մ., չոր լանջեր, ժայռոտ տեղեր, ժայռի ճեղքեր, 05-06, 07
18	129. Վահանակերպ Գրոսսեյմի, Peltariopsis grossheimii N. Busch	CR B 1	Ագարակի շրջակայք, 500-900 մ ծ. մ., ուղղաձիգ լանջեր, ժայռեր, 04-05, 05
19	136. Սոնալրջուն լրջունատերև, Sameraria glastifolia Boiss	CR B 1	Ագարակ, Մեղրի, 400-900 մ ծ. մ., չոր, աղային, կավային հողեր, ֆրիգանա, 04, 05
20	139. Չուվանդա Մեյերի, Zuvanda meyeri, Askerova	EN B 1	Մեղրի, Ագարակ, Արաքսի հովիտ, 800-1500 մ ծ. մ., խճաքարոտ ժայռեր, քարքարոտ լանջեր, 04-05, 05
21	146. Չանգակ Չանգեզուրի, Campanula zangezura Kolak	EN B 1	Մեղրու լեռներ, 1600-1900 մ ծ. մ., ժայռոտ տեղեր, անտառի եզրեր, 07-08, 08-09:
22	158. Մինուարցիա կոշտածաղիկ, Minuartia sclerantha Thell.	EN B 1	Կարճևան, Նոնաձոր, 550-900 մ ծ. մ., ավազներ, չոր լանջեր, անապատ, կիսանապատ, ֆրիգանա, 04-05, 05-06:
23	167. Անտոխլամիս կաթնախոտային, Anthochlamys polygaloides (Fisch. et C. A. Mey.) Fenzl		Մեղրի, Արաքսի հովիտ, 600-700 մ ծ. մ., ավազաքարային գրունտներ, 06-08, 08-10:
24	190. Թանթանիկ քառաչափ, Sedum tetramerum Trautv.	VU* B I	Մեղրի գետի ափեր և գետաբերան, 700-1100 մ ծ. մ., կիսանապատային քարքարոտ հողեր, 06, 07-08



25	191. Չմերուկ վայրի, Citrullus colocynthis Schrad.	CR B 1	Մեղրի քաղաքի և Արաքս գետի միջև, 600-700 մ ծ. մ., ժամանակավոր խոնավացող ավազաբարային գրունտներ, 08-09, 09-10:
26	205. Անմեռուկ կլորատերև, Andrachne rotundifolia C. A. Mey.	EN B 1	Մեղրի, Արաքսի հովիտ, 800-1000 մ ծ. մ., չոր, քարքարոտ հողեր, ֆրիգանա, 05, 06:
27	208. Արգիրոլոբիում հացհամեմավոր, Argylobium trigonelloides Jaub.et Spach.	EN B 1	Մեղրի, Ագարակ, Արաքսի հովիտ, 500-900 մ ծ. մ., չոր, քարքարոտ լանջեր, գետազլաբարեր, ֆրիգանա, 04-06, 05-06
28	232. Գազ օրդուբադի, Astragalus ordubadensis Grossh	CR B 1	Ագարակ, Կարճևան, 600-1000 մ ծ. մ., չոր, քարքարոտ, խճաքար, կավային հողեր, 04-05, 05-06
29	245. Պայթակենի Կոմարովի, Colutea komarovii Takht.	CR B 1	Մեղրի-Կարճևան, 700-1000 մ ծ. մ., ֆրիգանա, չոր, քարքարոտ լանջեր, 04, 05-06
30	247. Մատուտակ խոզանավոր, Glycyrrhiza echinata L.	VU* B I	Լեհվազ, 800-900 մ ծ. մ., առուների և գետերի ափին, 05-06, 06-08:
31	264. Երեքնուկ խոշորածաղիկ, Trifolium grandiflorum Schreb.	VU* B I	Ագարակ, Կարճևան, Լեհվազ, Կուրիս, 800-1100 մ ծ. մ., չոր, քարքարոտ, ժայռոտ, թփերի արանքում, մացառներում, ֆրիգանա, 05-06, 06:
32	284. Սկևասոխ Միսչենկոյի, Scilla mischtschenkoana Grossh.	EN B 1	Կարճևան, Լեհվազ, 100-1700 մ ծ. մ., ժայռերի ճեղքեր, քարի ծածկեր, ֆրիգանա, 03-04, 04:
33	291. Թրաշուշան Շովիցի, Gladiolus szovitsii Grossh.	EN B 1	Մեղրի, 400-1100 մ ծ. մ., քարքարոտ, կավային լանջեր, օշինդրային կիսանապատ, շիբլյակ, կաղնու և գիհու նոսրանտառ, 05-06, 06-07
34	294. Հիրիկ Գրոսհեյմի, Iris grossheimii Woromow ex Grossh.	EN B 1	Մեղրու լեռնաշղթա, 1200-2400 մ ծ. մ., կաղնու և գիհու նոսրանտառներ, չոր, քարքարոտ լանջեր, տափաստաններ, 04-06, 06-07
35	299. Հիրիկ կեղծ կովկասյան, Iris pseudocaucaucasica Grossh.	EN B 1	Այգեձոր, Վարդանիձոր, Շվանիձոր, 600-1600 մ ծ. մ., չոր, քարքարոտ, կավային լանջեր, շիբլյակ, գիհու նոսրանտառ, 03-05, 05-06
36	316. Վարդակակաչ Ֆլորենսկու, Tulipa florenskyi Woronow	EN B 1	Ագարակ, Կարճևան Շվանիձոր, 550-1000 մ ծ. մ., չոր, քարքարոտ լանջեր, կավային հողեր, շիբլյակ, արիդ նոսրանտառ, 04-05, 05-06
37	317. Վարդակակաչ Սոսնովսկու, Tulipa sosnoskyi Achverdov	EN B 1	Վարդանիձոր, Լիճք, 700-2300 մ ծ. մ., ժայռոտ տեղանք, քարերի թափվածք, փլվածքներ, խճաքարեր, կաղնու և գիհու նոսրանտառ, անտառի եզրեր, բացատներ, 04-05, 05-06
38	330. Չորապտեր արծվապտերային, Cheilanthes pteridioides, C.Chr.	VU* B I	Ագարակից մինչև Վարդանիձոր, Լիճք, Արաքսի հովիտ, 500-1800 մ ծ. մ., ժայռերի ճեղքեր, քարեր



39	343. Եղբորոսին քրդական, <i>Cephalanthera kurdica</i> Bornm.	VU* B I	Լեհվազ, Վահրավոր, 1100-1700 մ ծ. մ., անտառներ, կրաքարերի լանջեր, 05-06, 06-07
40	348. Խոլորձ կետավոր, <i>Orchis punctulata</i> Steven	VU* B I	Վահրավոր, 1000-2000 մ ծ. մ., նոսրանտառներ, թփեր, մացառներ, անտառի խոնավ բացատներ, 04-06, 06-07
41	357. Ոգնաթուփ Ֆեդորովի, <i>Acantholimon fedorovi</i> Tamamsch.	CR B 1	Ագարակի շրջակայք, 700-800 մ ծ. մ., քարքարոտ, խճաքարոտ լանջեր, ժայռերի միջև, 06, 07
42	361. Գնկոր նրբագեղ, <i>Aira elegantissima</i> Schur	EN * B I	Ագարակի շրջակայք, 400-1000 մ ծ. մ., ավազոտ, քարքարոտ լանջեր, շիբյակ և նոսրանտառ, 04-05, 05-06
43	366. Իննաթիստ պարսկական, <i>Enneapogon persicus</i> Boiss.	VU* B I	Ագարակ, Արաքսի հովիտ, 490-900 մ ծ. մ., չոր, քարքարոտ լանջեր, ժայռերի միջև, շիբյակ, ֆրիգանա, 06, 07
44	367. Գեղմնախոտ ռավենյան, <i>Erianthus ravennae</i> P.Beauv	VU* B I	Մեղրի գետի գետաբերան, Արաքսի գետահովիտ, 600-800 մ ծ. մ., գետերի ավազոտ ափերի երկարությամբ, 05, 06
45	370. Մերկապոչուկ թեթահասկ, <i>Psilurus incurvus</i> (Gouan) Schinz et Thell.	VU* B 1	Ագարակ, Մեղրի, Նոնաձոր, 400-700 մ ծ. մ., քարքարոտ կամ մանրահողային լանջեր, գետերի գլաքարեր, չորացած հուններ, քարաթափվածքներ, 03-04, 04-05
46	373. Կարծրախոտ Վորոնովի, <i>Sclerochloa woronowii</i> Tzvelev	EN B 1	Ագարակ, 800-1700 մ ծ. մ., չոր, քարքարոտ, կավային աղակալած հողեր, հղկված գլաքարեր, գետամերձ ավազներ, 04, 05
47	396. Հափուկ գնդապտուղ, <i>Reseda globulosa</i> Fisch.	CR B 1	Ագարակ, 800-1000 մ ծ. մ., չոր, քարքարոտ լանջեր, ֆրիգանա, 05-06, 06-07
48	397. Լշենի նաիրյան, <i>Amygdalus nairica</i> Fed.	EN B 1	Արաքսի կիրճի ժայռեր, 600-1800 մ ծ. մ., չոր, քարքարոտ լանջեր, քարաթափվածքներ, ժայռոտ տեղեր, ֆրիգանա, չոր նոսրանտառներ, 04-05, 06-09
49	414. Տանձենի Ռադդեյի, <i>Pyrus raddeana</i> Woronow	EN B 1	Լեհվազ, Լիճք, 1500-1800 մ ծ. մ., լայնատերև անտառի եզրեր, գյուղերի մոտ, 04-05, 06-09:
50	425. Ժրերցիա Շովիցի, <i>Jaubertia szovisii</i> Takht.	VU* B I	Մեղրի քաղաքի շրջակայք, 600-1300 մ ծ. մ., չոր, քարքարոտ կրաքարային լանջեր ֆրիգանա, 06-07, 07-08:
51	437. Խոնդատ երևանյան, <i>Verbascum erivanicum</i> Wulf.	CR B 1	Ագարակի շրջակայք, 600-1000 մ ծ. մ., չոր, քարքարոտ լանջեր, ֆրիգանա, 05-06, 06-07
52	433. Խոնդատ բամբակային, <i>Verbascum gossypium</i> M.Bieb	EN * B I	Վարդանիձոր, 1300-1500 մ ծ. մ., քարքարոտ լանջեր, ժայռոտ տեղեր, անտառի եզրեր, 04-05, 06-07
53	440. Խոնդատ Մեղրու, <i>Verbascum megricum</i> Hub.-Mor.	EN B 1	Մեղրի, Շվանիձոր, Նոնաձոր, 600-1700 մ ծ. մ., պիստակենու և կաղնու և գիհու նոսրանտառներ, շիբյակ, ավազային կիսանապատ, չոր, քարքարոտ լանջեր, 05-06, 06-07



54	444. Հազազ անատոլիական, <i>Lycium anatolicum</i> A. Baytop	EN B 1	Ագարակ, Վահրավոր, 800-1400 մ ծ. մ., չոր, քարքարոտ լանջեր, ճանապարհների երկարությամբ, ֆրիգանա, 06-07, 07-08
----	---	--------	--

Աղյուսակ 25: Հյուսիս-Հարավ ավտոմայրուղու Քաջարան- Ագարակ ծրագծի տարածաշրջանում ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված կենդանատեսակները\*

h/h	Կենդանիների անվանումը հայերեն և լատիներեն և ԲՊՄՄ կատեգորիան և չափանիշը	Տարածումը, բնակության բիոտոպը, բարձրունքային գոտին
1	8. Կանոնավոր խխունջ- <i>Gyraulus regularis</i> (Hartmann, 1841) – CR B2a.	Մեղրի քաղաքի մոտակայք, լեռնային գետի աղբյուրամերձ ճահիճ
2	16. Անտոնովի խխունջ- <i>Odhneripisidium annandalei</i> (Prashad, 1925) – CR B2a.	Մեղրու շրջակայք, աղբյուրներից սևվող գետամերձ ճահիճ
3	31. Սաբինա ճպուռ - <i>Orthetrum sabina</i> (Drury, 1773) – EN B2a	Մեղրի և Ալվանք, կիսանապատային գոտուղանդաղախոս կամ անհոսք ճահիճներ
4	33. Ճպուռ ծառա - <i>Crocothemis servilia</i> (Drury, 1773) – EN B 1a+B 2a	Մեղրի քաղաքի շրջակայք, ջրաճահճային հարուստ բուսականությամբ տաք, անհոսք ջրեր
5	39. Ֆիտոդրիմադուզա հայկական – <i>Phytodrymadusa armeniaca</i> Ramme, 1939 – EN B 1a+B2a.	Մեղրի, ագարակ, մինչև 1100 մ կիսանապատներ, բարձր բուսականությամբ թփուտներ
6	44. Ֆալետի կողնջակեր- <i>Procerus scabrosus fallettianus</i> Cavazzutti, 1997 -VU B 1ab(iii)+B 2ab(iii)	Քաջարան, Լիճք, 1100-2200 մ 47-60 մմ, փարթամ բուսականություն, սևվում է խխունջներով ու կողնջակերով
7	59. Արաբյան բնդեռ - <i>Tanyproctus araxidis</i> Reitter, 1901 – EN B 1a+B2a	Մեղրու շրջակայք, ավազոտ անապատներ և կիսանապատներ, 9-13 մմ, 05-06
8	62. Չարդավոր չրիսկան - <i>Aeoloides figuratus</i> (Germar, 1844) – CR B2a	Մեղրի գետի ափեր Մեղրի քաղաքի շրջակայքում, 4,5-5,5 մմ, հոսուն ջրերի մոտ
9	63. Սևագլուխ չրիսկան- <i>Drasterius atricapillus</i> (Germar, 1824) – CR B2a	Մեղրի գետի ափեր Մեղրի քաղաքի շրջակայքում, 5-6 մմ, հոսուն ջրերի մոտ
10	68. Փոքր չրիսկան - <i>Drasterius atricapillus</i> (Germar, 1824) – CR B2a	Մեղրի քաղաքի շրջակայք, անապատներ և կիսանապատներ, 4,5-6,4 մմ
11	69. Մորթիավոր ոսկերգեզ- <i>Acmaeoderella pellitula</i> (Reitter, 1890) – EN B 1a+B 2a	Մեղրի քաղաքի շրջակայք, ավազոտ անապատներ և կիսանապատներ, 4,5-6,5 մմ, 0,5-06
12	71. Հպարտ ոսկերգեզ- <i>Anthaxia superba</i> Abeille de Perrin, 1900 – CR B1a	Մեղրի քաղաքի շրջակայք, վարդագգիների մասնակցությամբ չոր նոսրանտառներ, 6,5-7,5 մմ, բուլյսը-նշենի



13	72. Աղաբաբյանի ոսկերգեզ - Sphaerobothris aghababiani Volkovitch & Kalashian, 1998 – CR Ba +B2a	Մեղրի քաղաքի շրջակայք, չոր նոսրանտառներ նշենու գերակայությամբ, 10,5-13,5 մմ, 0,6-07, բույսը՝ Ephedra major
14	82. Սևամարմին աքսորված - Entomogonus amandanus Reitter, 1901	Մեղրու շրջակայք, գիհու և կաղնու նոսրանտառներ, 18-22 մ, 05-06, հանդիպում է թփերի և բարձր խոտերի վրա
15	88. Աղաբաբյանի երկարաբեղիկ - Asias aghababiani Danilevsky, 1999 – CR B1a +B2a	Մեղրու շրջակայք, գիհու և նշենու նոսրանտառներ, 06-07, բույսը՝ Ephedra major
16	101. Մեմոզիա կամ Սև ապոլոն- Parnassius mnemosyne rjabovi Sheljuzhko, 1935 – VU B 1a. AnnexII	Լիճք, Շվանիձոր, լեռնտափաստանային գոտու մարգագետիններ և անտառի բացատներ 30-35 մմ: Բույսը Corydalis persica, C. angustifolia
17	102. Ապոլոն- Parnassius apollo kashtshenkoi Sheljuzhko, 1908 – VU B 1a; IUCN (ver 2.3, VU A1cde); Annex II	Քաջարան, Լիճք, նոսրանտառներ, անտառի վերին գոտի, սուբալպյան գոտում՝ բարբարոտ լեռնալանջեր, 40-50 մմ, 45-55մմ
18	105. Ավորրիկա դեղնաթիթեռ- Colias aurorina Herrich-Schaffer, [1850] – VU B 1b(iii)+B 2b(iii)	Լիճք, քսերոֆիտներ և անտառների վերին սահմանի տափաստաններ, 25-35 մմ և 35-40 մմ
19	112. Ալկոն կապտաթիթեռ - Maculineaalcon monticola (Staudinger, 1901) – VU B 1a+B2a	Քաջարան, Շվանիձոր, չոր մարգագետիններ, բացատներ, քարոտ տափաստաններ, 1400- 2300 մ 15-19 և 13-18 մմ
20	113. Արիոն կապտաթիթեռ - Maculineaalcon monticola (Staudinger, 1901) – VU B 1a+B2a	Քաջարան, Կուրիս, Շվանիձոր, չոր մարգագետիններ, անտառի վերին եզրեր, բացատներ, 16-18 և 15-20 մմ
21	115. Անդրկովկասյան կապտաթիթեռ - Maculineaalcon monticola (Staudinger, 1901) – VU B 1a+B2a	Ագարակ, Շվանիձոր, կավային և ավազոտ անապատներ, 12-15 մմ, բույսը՝ Alhagai persarum
22	117. Դոմոնիտես կապտաթիթեռ - Agrodiaetus damonides (Staudinger, 1899) – CR B1ab(i,ii,iii)+B 2b (i,ii,iii)	Մեղրի գետի աջ ափ, ֆրիգանա, լեռնային գոտու ցածր և միջին գոտիներ, 15-20 mm, բույսը՝ Astragalus ordubadensis
23	119. Հուբերտի կապտաթիթեռ - Agrodiaetus huberti Carbonell, 1993 – EN B1a+B2a	Քաջարան, տրագանտներ, անտառի վերին եզրեր, չոր մարգագետիններ, տափաստաններ, 15-20 մմ, բույսը՝ Astragalus brachycarpus, A. prilipkoanus



24	121. Անտեսված կապտաթիթեռ- Agrodiaetus neglectus Dantchenko, 2000 – EN B1a+B2a	Լիճք, Շվանիձոր, անտառի վերին եզրեր, չոր մարգագետիններ, 1400-1900 մ, բույսը Astragalus robustus
25	125. Կաչուկի իլիկաթիթեռ- Agrodiaetus neglectus Dantchenko, 2000 – EN B1a+B2a	Մեղրի, անտառներ, կիսանապատներ, գիհու- նոսրանտառներ, ճանապարհամերձ անտառաշերտեր, չվող տեսակ, 05-09, 60-75 մմ, բույսը` Eleagnus angustifolia
26	126. Պրոզերպինա իլիկաթիթեռ- Proserpinus proserpina (Pallas, 1772) – VU B 1a+B2a; IUCN (ver 2.3, DD); AnnexII.	Քաջարան, Մեղրի, Լեհվազ, Կուրիս, առվակների ափեր, գետերի, ջրանցքների ու ճահիճների մոտակայք, խոնավ տարածքներ, 20-25 մմ, բույսը Epilobium hirsutum
27	132. Կարելիի մռայլ արջաթիթեռ- Axiopoena karelini Ménétriés, 1842 – VU B 1a+B 2a	Մեղրի, չորասեր բուսականություն լեռնալանջեր, 600-1000 մ, մթնաշաղային, 45- 48 մմ, 06-07
28	138. Ամրակազմ մեղու - Anthophora robusta Klug, 1845 – VU B 1a+B 2a	Մեղրի, լեռնատափաստան և ենթալպյան մարգագետիններ, 15-17 մմ, միայնակ մեղու
29	144. Իշամեղու ձյունափայլ- Bombus niveatus Kriechbaumer, 1870 – VU B 1a+B 2a	Մեղրու շրջակայք, տափաստանային գոտի, 1000-2000 մ, 05-08 ապրում են հողում
30	150. Կիսատամ մրջյուն - Crematogaster subdentata (Mayr, 1877) – EN B 2a	Մեղրու շրջակայքի գետափեր, 700մ, բնադրում է ծառերի չորացած կեղևի տակ, հասարակական միջատ է
31	152. Հարթ մրջյուն- Tetramorium levigatus Karawajew, 1926 – CR B2a	Մեղրի, Լեհվազ, 800-1000 մ, հասարակական միջատ է
32	155. Երևանյան գիշանճանճ- Machimus erevanensis V. Richter, 1963 – EN B 1ab(iii) +B2ab(iii)	Մեղրի-Արաքս գետահովիտի օշինդրային կիսանապատ, 18,5-22 մմ, սևուկը ճանճեր
33	13Առաջավորասիական մաքուլա - Trachylepis septemtaeniata, Reuss, 1834 - VU B1ab(iii)+2ab(iii)	Մեղրի, Ագարակ, Լեհվազ, նոսր բուսականությամբ ծածկված չոր քարքարուտներ և քարակույտեր, կենդանածին
34	14. Երկարոտն սցինկ- Trachylepis septemtaeniata, Reuss, 1834 - VU B1ab(iii)+2ab(iii):	Արաքս գետի հովիտ, 400-1500 մ, խիստ քարքարոտ, չորասեր բուսականությամբ կիսանապատներ, քարե ցանկապատեր, քարակույտեր
35	15.Անդրկովկասյան բազմագույն մողեսիկ - Eremias arguta transcaucasica Darevsky, 1953- CR A2c; B2ab (ii, iii)	Մեղրի, ավազուտներ, իշակաթնուկի, գագի, օշինդրի թփեր, կիսանապատներ, 06-08, 07- 09
36	22. Անդրկովկասյան սահնօձ - Zamenis hohenackeri Strauch, 1873 - VU B1ab (iii)	Մեղրի, Արաքսի հովիտ, քսերոֆիտ թփերով ծածկված քարքարոտ լանջեր, քարակույտեր,





		թափվածքներ, չոր անտառի եզրեր, երբեմն՝ այգիներ, 600-2000 մ, 06, 09
37	23. Պարսկական պսևդոցիկլոֆիս - Pseudocyclophis persicus Anderson, 1872 - CR B2ab (i, ii, iii)	Ագարակ, քիչ ուսումնասիրված, խիստ հազվադեպ տաքսոն
38	24. Սատունիի սևագլուխ ռինխոկալամուս - Rhynchocalamus melanocephalus satunini Nikolsky, 1899 - VU B2ab (i, iii)	Մեղրու շրջակայք, Արաքս գետի հեվիտ, 600-1200 մ, օշինդրային կիսանապատներ, ֆրիգանա, քարքարոտ վայրեր
39	25. Կովկասյան կատված - Telescopus fallax Fleischmann, 1831 - VU B1ab (iii)	Մեղրու շրջակայք, Արաքսի հովիտ, թփուտներով ծածկված քարքարոտ լանջեր, գիհու լոսրանտառ, երբեմն պատահում է այգիներում, տների տանիքներում, մինչև 2000 մ
40	125. Լայնականջ ոզնի - Erinaceus (Hemiechinus) auritus Gmelin, 1770 - EN B1ab(iii)+2ab(iii)	Մեղրու շրջակայք, Արաքսի հովիտ, մինչև 1355 մ, չոր տափաստաններ, անապատներ, կիսանապատներ, անտառներ, այգիներ, բանջարանոցներ
41	126. Շելկովնիկովի կուտորա - Neomys schelkovnikovi Sat., 1913 - EN B1a+2a	Մեղրու շրջակայք, Մեղրի գետի հոսանքով վեր մինչև 2500 մ, գետի քարքարոտ ափեր, մացառներ
42	128. Հարավային պայտաքիթ - Rhinolophus euryale Blasius, 1853 - VU B1ab+2a	Մեղրի և շրջակայք, լեռնատափաստաններ
43	132. Արաքսյան գիշերաչղջիկ - Myotis schaubi araxenus Dahl 1947 - EN B1a+2a	մեղրու շրջակայք, քարանձավներ, ծառերի փչակներ, հին անասնագուներ, շինություններ
44	138. Հնդկական վայրենակերպ կամ մացառախոզ - Myotis schaubi araxenus Dahl 1947 - EN B1a+2a	Ագարակի շրջակայք, բարձր թփերով շաշկված ժայռոտ բիոտոպեր, գետերի հովիտներ, շիբլյակ, մացառներ, գիհու լոսրանտառներ
45	146. Զրասամույր - Lutra lutra (Linnaeus, 1758) – EN D	Մեղրի գետի գետաբերան, մաքուր ջրով ձկնառատ գետեր

Հետազոտված տարածքը ընդգրկված է որոշ գիշատիչ թռչունների, ինչպիսիք են Գառնանգը (Մորուբավոր անգը) 54. Gypaetus barbatus Linnaeus, Linnaeus, 1758 - VU D1), Գիշանգը (55. Neophron percnopterus, Linnaeus, 1758 - EN A2bcde+3bcde+4bcde), Սպիտակագլուխ անգը (56. Gyps fulvus, Hablizl, 1783 - VU D1), Սև անգը ( 57. Aegipus monachus, Linnaeus, 1766 - EN D), Օձակեր արծիվը ( 58. Circaetus gallicus, J.F. Gmelin, 1788 - VU D1 ), Եվրոպական ճնճաճուռակը (61. Accipiter brevipes, Severtzov, 1850 – VU B1ab(iii)+2ab(iii)), Տախաբլրարոսը (62. Accipiter gentilis, Linnaeus, 1758 - VU B1ab(iii)+2ab(iii); D1), Փոքր ենթարծիվը ( 63. Aquila pomarina, C.L. Brehm, 1831 - VU D1), Քարարծիվը ( 63. Aquila pomarina, C.L. Brehm, 1831 - VU D1), Գաճաճ արծիվը ( 68. Hieraaetus pennatus, J.F. Gmelin, 1788 - VU D1), Սապասը (75. Falco peregrinus, Tunstall, 1771 - VU D1), որոնք ունեն կենսագործունեության ընդարձակ արեալ, կարող են ժամանակավորապես հայտնվել տարածաշրջանում: Սակայն Ծրագրի տարածքում նրանց համար չկա



բնադրման հարմար միջավայր: Որպես կանոն խոշոր գիշատիչ թռչունների համար հարմար բնադրավայրեր են բարձրաբերձ ժայռերը, որոնք տարածքի շրջակայքում բացակայում են: Բնակավայրերի մոտիկությունը նույնպես վանում են այս թռչուններին: Տեղամասի շրջակա տարածքը նրանց համար կարող է լինել միայն որպես կեր հայթայթելու տարածք և ավտոմայրուղու շինարարությունը և շահագործումը չի կարող զգալիորեն ազդել այս թռչունների կենսամիջավայրի և թվաքանակի վրա:

Թռչունների մի այլ խումբ. Կովկասյան մարեհավ (76. Tetrao mlokosiewiczzi, Taczanowski, 1875 - VU D1), Կայրի հնդկահավ (Ուլար) (78. Tetraogallus caspius, S.G. Gmelin, 1784 - VU B1a+2a; C2a(i); D) և Բվեճը (104. Bubo bubo, Linnaeus, 1758 - VU B1a; C2a(i); D1) Արաբսի տաք հովտում կարող են հայտնվել ցուրտ ամիսներին՝ ուղղահայաց միգրացիայի արդյունքում:

Թռչուններ երրորդ խմբի՝ Սուլթանական հավ (84. Porphyrion porphyrio, Linnaeus, 1758 – DD), Թուրաջ (79.- Francolinus francolinus, Linnaeus, 1766 – DD) և Կարմրակատար շամփրուկ (110. Lanius senator, Linnaeus, 1758 -VU B1ab(iii)+2ab(iii)), կենսամիջավայրը Արաբս գետի առափնյա եղեգնուտներն են: Իսկ Անապատային կաթավի (77. Ammoperdix griseogularis, Brandt, 1843 - VU D1), Սպիտակափող սոխակի (111. Irania gutturalis, Guérin, 1843 – DD), Ծիկապոչ քարաթռչնակի (112. Oenanthe xanthopyrma, De Filippi, 1863- EN B1a+2a; D) և Մեծ ժայռային սիտեղի (112. Oenanthe xanthopyrma, De Filippi, 1863- EN B1a+2a; D) զբաղեցրած կենսամիջավայրը Արաբսի կիրճի և Մեղրի գետի գետաբերանի առափնյա քարքարոտ ժայռերն են, քարքարոտ, թփածածկ լեռնալանջերը, բայց նաև առափնյա շամփրուտները:

Բոլոր դեպքերում լինելով շարժուն, կենդանական աշխարհի ներկայացուցիչները, հատկապես թռչունները, ավտոմայրուղու շինարարության փուլում առանց էական կորուստների կիեռանան տարածաշրջանից:

Ծրագրի շինարարության համար հատկացված տարածքը և շրջակայքը չափազանց հարուստ է ԶԶ բույսերի և կենդանիների կարմիր գրքում գրանցված բուսատեսակներով և կենդանատեսակներով:

Չմռանը այս տարածքը իր նպաստավոր կլիմայով դառնում է կենսամիջավայր բազմատեսակ կենդանիների ու թռչունների համար և կարելի է ասել *կենդանիների միգրացիայի ճանապարհ* է:

Նախագծային և շինարարական աշխատանքները սկսելուց առաջ նախաձեռնողը պարտավոր է մանրամասն հետազոտել տարածքը առնվազն մեկ տարվա ընթացքում՝ ճշտելու համար կարմիր գրքային բուսատեսակների և կենդանատեսակների առկայությունը, կենդանիների միգրացիոն ուղիները շինարարության համար հատկացված վայրերում:

Քաղաքաշինության նպատակներով հատկացված տարածքներում Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների առկայության (հայտնաբերման դեպում ,, Բուսական աշխարհի մասին,, ԶԶ օրենքի 17 հոդվածի) արգելվում է ցանկացած գործունեություն, որը հանգեցնում է Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակների թվաքանակի կրճատմանը և դրանց աճելավայրերի վատթարացմանը: Ընթացակարգը իրագործվում է ԶԶ կառավարության որոշման ,, Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին,, (31 հուլիսի 2014 թվականի N 781-Ն) 4, 5, 6 կետերի գործողությամբ:



Հաշվետվությունը պատրաստվել է հետևյալ մասնագետների կողմից՝		
Անուն ազգանուն	Մասնագիտություն	Ստորագրություն
Միքայել Թևոսյան	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասնագետ	
Մերինե Սարգսյան	Կենսաբազմազանության մասնագետ	
Հրաչիկ Միրզոյան	Կենսաբազմազանության մասնագետ	



## ՀԱՎԵԼՎԱԾ 6: ՀՆԱԳԻՏԱԿԱՆ, ՊԱՏՄԱ-ՃԱՐՏԱՐԱԿԵՏԱԿԱՆ ԵՎ ՀՆԷԱՔԱՆԱԿԱՆ ԱՐԺԵՔ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՐԶԱԼՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Հնագիտական, պատմա-ճարտարապետական եվ հնէաբանական արժեք ներկայացնող հուշարձանների նախնական ուսումնասիրությունը Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Քաջարան-Ագարակ հատվածի (Տրանշ 4) համար

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Քաջարան-Ագարակ հատվածի (Տրանշ 4) ծրագծի երկայնքով տեղակայված հնագիտական, պատմա-ճարտարապետական և հնէաբանական արժեք ներկայացնող հուշարձանների նախնական ուսումնասիրությունն իրականացնելիս հենվել ենք երկու տեղակատվական սկզբնաղբյուրի վրա. Պետական ցուցակ Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների, Սյունիքի մարզ, ինչպես նաև մի շարք հնագիտական արշավախմբերի կողմից խնդրո առարկա տարածքում 1970-90-ական թվականների ընթացքում կատարված ուսումնասիրությունների հրատարակված արդյունքները:

Քաջարան-Ագարակ ճանապարհի առաջարկվող ծրագիծը և նրա ալտերնատիվ տարբերակները, գործող ճանապարհի և նախկինում առաջարկված նախագծի ծրագծի հետ համատեղ նստեցվել են GIS հենքով 90 մ ռաստերային ճշգրտությամբ քարտեզների վրա (ArcGIS 10.4), որից հետո սույն խնդրի համար ընտրված հնէաբանական, հնագիտական և պատմա-ճարտարապետական հնավայրերը, որոնք վերցվել են վերը նշված տեղեկատվական սկզբնաղբյուրներից, տեղադրվել են ծրագծի երկայնքով թիրախավորված հատվածներում: Դրանց ներկայացումը կազմակերպված է հետևյալ կերպ. ամեն մի հուշարձան կամ միավոր ցուցակում տեղադրված է համապատասխան համայնքում (օրինակ՝ Սյունիքի մարզ, Տաշտուն համայնք), իր տեսակով (դամբարանադաշտ, գերեզմանոց, բնակատեղի, ամրոց, եկեղեցի և այլն), ինչպես նաև նրա տեղադրության նկարագրությամբ (գյուղից կամ համայնքային կենտրոնից 4 կմ հարավ-արևելք), հնարավորության դեպքում հավելյալ տվյալների ընդգրկմամբ (բրի գագաթին, լանջին, գետի ափին, դարավանդի վրա, դեպի համայնքներ տանող ճանապարհի խաչմերուկին): Ցուցակագրված հուշարձանների համար բերված են GPS կոորդինատները: Ամեն մի միավորի համար (հուշարձան կամ հուշարձանների խումբ՝ հնագիտական համալիր) պետ ցուցակում առկա են նաև հատուկ կոդեր կամ դասիչներ, օրինակ՝ 8.38.1., որտեղ 8-ը մարզի համարն է, 38-ը՝ համայնքի համարը, իսկ 1-ը՝ հուշարձանի համարը (8.Սյունիքի մարզ, 38.գյուղ Լեռնաձոր, 1.բնակատեղի): Ցուցակները ներառում են նաև հուշարձանի թվագրությունը կամ ժամանակաշրջանը (օրինակ՝ Ք.ա. IV – III հազարամյակներ, Ք.ա. 7-6-րդ դդ., 5-13-րդ դդ. և այլն): Այն միավորները, որոնք տեղակայված են



ծրագծի անմիջական հարևանությամբ կամ մոտ են գտնվում ծրագծին, պետ ցուցակում առանձնացված են դեղին գույնով (պետ ցուցակը կցված է):

Մինչդեռ, ընտրված միավորների ներկայացումը GIS հենքով քարտեզների վրա (18 առանձին տախտակներ՝ 1: 20.000 մասշտաբով) կատարված է համայնքային տիրույթների գունաբաժանմամբ, համայնքի նկատմամբ ունեցած դիրքով, ցուցակում տրված հերթական համարով, և վերջապես՝ հատուկ պայմանական նշանով, որը ցույց է տալիս հուշարձանի տեսակը՝ բնակատեղի, ամրոց, դամբարանադաշտ և այլն (պայմանական նշաններում հնագիտական համալիրները արտահայտված են համադրված նշաններով՝ ամրոց-բնակատեղի-դամբարանադաշտ կամ եկեղեցի-գերեզմանոց-խաչքար): Հուշարձանների ցուցակը և պայմանական նշանները տրված են առանձին (կցված են):

Գլխավոր քարտեզներից կարելի է տեսնել, որ Քաջարան-Ագարակ 43+027 կմ երկարություն ունեցող մայրուղու առաջարկվելիք ծրագիծն անցնում է թվով 11 գյուղերով, որոնք են՝ Լեռնաձոր, Քաջարան, Տաշտուն, Լիճք, Լեհվազ, Վարդանիձոր, Վահրավար, Գուղեմիս, Կուրիս, Մեղրի և Կարճևան, որից միայն 7,1 կմ պետք է անցնի թունելով՝ կմ 3+700-ից մինչև կմ 10+800-ը՝ Լեռնաձոր, Քաջարան և Տաշտուն համայնքների սահմաններով (Պատկերներ 36 և 37):

Ինչպես երևում է քարտեզների և ցուցակի համադրությունից՝ ուղղակի ազդեցության ենթարկվող առաջին հուշարձանը Լեռնաձոր գյուղի սահմաններում տարածվող Լեռնաձորի՝ Ք.ա. 7-6-րդ դդ. դամբարանադաշտն է, որը բաժին է ընկնում ծրագծի կմ 0+400 – կմ 0+500 տեղամասին (Ցուցակում Համար 1, Պատկերներ 38 և 39): Ցուցակում բերված և նույն համայնքին պատկանող մյուս հնավայրերը (Ցուցակում Համարներ 2, 3, 4, 5, Պատկերներ 38 և 39) մոտ են գտնվում ծրագծին (կմ 0+900 – կմ 1+200), սակայն անմիջական ազդեցություն չեն կրում:

Բերված հաջորդ երկու միավորները (Ցուցակում Համարներ 6 և 7), որոնք բաժին են ընկնում Քաջարան համայնքին, ոչ միայն հեռու են ծրագծից, այլև գտնվում են թունելով անցնող հատվածի հարևանությամբ, ավելի շուտ կապված են հին նախագծի հետ և նոր նախագծի համար հետաքրքրություն չեն ներկայացնում (Պատկերներ 40 և 41):

Հաջորդ ցուցակագրված միավորը (Ցուցակում Համար 8) բաժին է ընկնում Տաշտուն գյուղին՝ ծրագծի թունելային մասի կմ 9+600 նշակետի մոտակայքում և կրկին կապվում է մայրուղու հին նախագծի հետ (Պատկերներ 42 և 43):

Հաջորդ՝ 9-րդ համարի տակ բերված միավորը, որն ընկնում է ճանապարհի առաջարկվելիք նախագծի անմիջական ազդեցության գոտում, դա Տաշտուն գյուղի ծայր հարավային սահմանին գտնվող՝ 14-17-րդ դդ. Քյրիգանց կոչվող միջնադարյան գերեզմանոցն է, որը կարող է անմիջական ազդեցության ենթարկվել ծրագրի իրականացման ընթացքում կմ 14+400 – կմ 14+500 նշակետերի սահմաններում, սակայն հուշարձանի և առաջարկվող ծրագծի իրական փոխհարաբերությունը պետք է ստուգել դաշտային աշխատանքների ժամանակ (Ցուցակում Համար 9, Պատկերներ 44 և 45):

Հուշարձանային միավորների հաջորդ խումբն արդեն բաժին է ընկնում Լիճք գյուղի սահմաններին՝ կմ 18+000 – կմ 18+800 տեղամասում՝ միավորներ 10 – 14, որոնք ներկայացնում են Մնաշու կոչվող





միջնադարյան բնակատեղին իր գերեզմանոցով և այնտեղ գտնվող խաչքարերով ու եկեղեցով, սակայն դրանց վրա ուղղակի ազդեցություն կլիներ հին նախագծի իրականացման դեպքում միայն (Ցուցակում Համարներ 10-14, Պատկերներ 46 և 47):

Լիճքից հետո ճանապարհի ծրագիծն անցնելու է Լեհվազ գյուղով, մտնելով Վարդանիձոր գյուղի տարածք և հետո կրկին մտնելով Լեհվազ և ապա նույն Վարդանիձոր: Այստեղ Համար 15 միավորը կմ 22+350 նշակետում գտնվող միջնադարյան բնակատեղին չի ենթարկվում ուղղակի ազդեցության (Ցուցակում Համար 15, Պատկերներ 46 և 47): Վարդանիձոր գյուղում կմ 23+800 նշակետում գտնվող Փուշնաղ կոչվող ուշ միջնադարյան բնակատեղին և գերեզմանոցն ուղղակի ազդեցության կենթարկվեն հին նախագծի իրականացման դեպքում (Ցուցակում Համարներ 16-17, Պատկերներ 46 և 47): Ցուցակի 18-րդ միավորը՝ միջնադարյան Լսհավանք բնակատեղին, լինելով մոտ տեղակայված (կմ 26+000), զերծ է մնում անմիջական ազդեցությունից (Ցուցակում Համար 18, Պատկերներ 48 և 49): Համանման իրավիճակ է դիտվում նաև Լեհվազ գյուղի տարածքում առկա միավոր 19-ի (կմ 27+500), ինչպես նաև Վահրավար գյուղի սահմաններում գտվող միավորներ 20-22-ի (կմ 28+000 – կմ 28+700) համար (Ցուցակում Համարներ 19 և 20-22, Պատկերներ 48 և 49): Կրկին Լեհվազ գյուղի տարածքում ի հայտ եկող միավորներ 23-ը, 24-ը, ապա և 25-ը (կմ 28+500 – կմ 28+700) զերծ են մնում անմիջական ազդեցությունից (Ցուցակում Համարներ 23, 24 և 25, Պատկերներ 48 և 49), իսկ նույն համայնքի միավոր 26-ի (ջրաղաց, 19-րդ դ., կմ 30+050) փոխհարաբերությունը նախագծի ծրագծի հետ կարիք ունի ստուգման դաշտային աշխատանքների ընթացքում (Ցուցակում Համար 26, Պատկերներ 48 և 49):

Քաջարան-Ագարակ ճանապարհի՝ Գուղեմնիս գյուղի տարածքով անցնող հատվածում հուշարձաններ գտնվելու մասին տեղեկություններ չկան (Պատկերներ 50 և 51): Հաջորդ՝ Մեղրի համայնքի սահմաններում ծրագծերի բոլոր տարբերակներն անցնում են Մեղրու Փոքր թաղի հարևանությամբ՝ հարավային մասով (կմ 35+200 – կմ 35+600): Վերջինս հայտնի է իր հնագիտական և ազգագրական հարուստ միջավայրով և այս տարածքը կարիք ունի մանրակրկիտ հետազոտության ապագա դաշտային ուսումնասիրությունների ընթացքում (Ցուցակում Համար 27, Պատկերներ 52 և 53):

Ճանապարհի եզրափակիչ հատվածը բաժին է ընկնում Կարճևան գյուղի տարածքին, որտեղ նախագծի եզրափակող նշակետից (կմ 43+027) հարավարևելք է տեղակայված 17-րդ դ. քարավանատունը: Վերջինս որևէ ազդեցություն չի կարող կրել ճանապարհաշինական աշխատանքների ընթացքում (Ցուցակում Համար 28, Պատկերներ 54 և 55):

**Եզրակացություններ.** Այսպիսով՝ Քաջարան-Ագարակ հատվածը ներկայացնող ճանապարհի ծրագծերի երկայնքով հնարավոր է եղել փաստագրել և առանձնացնել թվով 28 հնագիտական, պատմա-ճարտարապետական և հնէաբանական արժեք ներկայացնող հուշարձաններ (տես կցված ցուցակը): Դրանք իրենցից ներկայացնում են հենց այն պատմա-մշակութային ժառանգության ռեուրսները, որոնք կարող են ենթարկվել ինչպես ուղղակի այնպես էլ անուղղակի ազդեցության: Ուսումնասիրությունների ներկայիս մակարդակում, նախագծի նորացված ծրագծի տարբերակով ուղղակի ազդեցության են ենթարկվում միմիայան երկու միավորներ, համարներ 1-ը և 9-ը, որոնք են Լեռնաձորի դամբարանադաշտը (կմ 0+400 – կմ 0+500) և Զլոդիգանց կոչվող միջնադարյան գերեզմանոցը Տաշտուն գյուղում (կմ 14+400 – կմ 14+500): Այս հնավայրերը իրենցից չեն կարող անհաղթահարելի խոչնդոտներ





Ներկայացնել ճանապարհի նորացված տարբերակի շինարարության համար և դեռ պետք է ուսումնասիրվեն տեղում թե որքան են ազդվում դրանց ենթամիավորները կամ որքան են պահպանվել (Պատկերներ 36 և 37, 38 և 39, 44 և 45): Մինչդեռ, ծրագծի հին տարբերակի իրականացման դեպքում, ինչպես երևում է բերված քարտեզներից, ուղղակի ազդեցության ենթարկվող միավորների քանակն անհամեմատ ավելի մեծ կլինի՝ 11-ը (Պատկերներ 36 և 37, 38 և 39 – 54 և 55):

Կարևոր է նաև նշել, որ հուշարձանների պետական ցուցակներում ներառված տեղակատվությունը խիստ սահմանափակ է, քանի որ Սյունիքի մարզում՝ հատկապես Մեղրու շրջանում, ժամանակին կատարվել է հուշարձանների փաստագրման ոչ մեծ ծավալների դաշտային-հետազոտական աշխատանքներ: Դա նշանակում է, որ ծրագրի իրականացման հետագա փուլում դաշտային-հետազոտական աշխատանքների իրականացման արդյունքում, կրկնապատկի կամ ավելի կշատացնի ճանապարհի ծրագծի հետ անռնչվող հուշարձանների քանակը, ուստի՝ այս հետազոտությունը պետք է համարել միայն նախնական:

**Բորիս Գասպարյան**

**Հնագիտության Ազգային Մասնագետ**

**10.11.2020**



Աղյուսակ 26: Պատմամշակութային և հնագիտական ռեսուրսներ

Թիվ	Տիպ	Անուն	Գյուղ	Կողմնակից	X	Y	Բարձրություն	Ժամանակաշրջան	Համապատասխան քարտեզներ եվ կմ
1	Դամբարանադաշտ	Լեռնաձոր	Լեռնաձոր	8.38.6.1.	604397.66	4335594.95	1529	7-ից-6-րդ դարեր Մ.թ.ա.	Պատկերներ՝ 38-39, կմ 0+400 – կմ 0+500
2	Դամբարանադաշտ		Լեռնաձոր	8.38.1.1.1.	604171.22	4335110.31	1514	IV հազարամյակի վերջ Մ.թ.ա. - III հազարամյակի կեսեր Մ.թ.ա	Պատկերներ՝ 38-39, կմ 0+900 – կմ 1+200
3	Գյուղատեղի		Լեռնաձոր	8.38.1.	604130.18	4335109.70	1509	IV հազարամյակի կեսեր Մ.թ.ա.	Պատկերներ՝ 38-39, կմ 0+900 – կմ 1+200
4	Հնեաբանաբանական կայք		Լեռնաձոր	Նոր բացահայտված	604112.06	4334945.02	1535	Անթրոպոգեն	Պատկերներ՝ 38-39, կմ 0+900 – կմ 1+200
5	Եղեղեցի	Սուրբ Գևորգ	Լեռնաձոր	8.38.6.	604113.11	4334917.95	1551	12-րդ դար	Պատկերներ՝ 38-39, կմ 0+900 – կմ 1+200
6	Գերեզմանոց	Շիրկուտ	Քաջարան	8.7.4. և 8.7.4.1.	601520.01	4333973.43	1666	5-ից-13-րդ դարեր	Պատկերներ՝ 40-41, կմ 3+800
7	Ամրոց	Նապատ	Քաջարան	8.7.1.	600921.14	4334361.42	1849	IV հազարամյակի կեսեր Մ.թ.ա.	Պատկերներ՝ 40-41, կմ 3+800
8	Կամուրջ	Գուլգուլգ	Տաշտուն	8.100.5.	601598.35	4328134.11	2159	17-ից-18-րդ դարեր	Պատկերներ՝ 42-43, կմ 9+600




9	Գերեզմանոց	Կիլիկիանց	Տաշտուն	8.100.2.	603145.36	4324188.13	1694	14-ից-17-րդ դարեր	Պատկերներ՝ 42-43, կմ 14+400 – կմ 14+500
10	Գյուղատեղի	Մնաշու	Լիճք	8.39.3.	604640.89	4321258.30	1552	16-ից-20-րդ դարեր	Պատկերներ՝ 44-45, կմ 18+000 – կմ 18+800
11	Գերեզմանոց	Մնաշու	Լիճք	8.39.3.	604918.70	4320649.75	1561	16-ից-20-րդ դարեր	Պատկերներ՝ 44-45, կմ 18+000 – կմ 18+800
12	Խաչքար	Մնաշու	Լիճք	8.39.3.3.1.3.1.1.	604852.56	4320795.27	1468	17-ից-18-րդ դարեր	Պատկերներ՝ 44-45, կմ 18+000 – կմ 18+800
13	Խաչքար	Մնաշու	Լիճք	8.39.3.3.1.3.1.2.	604654.12	4320570.38	1405	17-ից-18-րդ դարեր	Պատկերներ՝ 44-45, կմ 18+000 – կմ 18+800
14	Խաչքար	Մնաշու	Լիճք	8.39.3.3.1.3.1.3.	604905.47	4320477.77	1598	17-ից-18-րդ դարեր	Պատկերներ՝ 44-45, կմ 18+000 – կմ 18+800
15	Գյուղատեղի		Լեհվազ	8.37.2.	604078.02	4317253.03	1413	17-ից-19-րդ դարեր	Պատկերներ՝ 46-47, կմ 22+350
16	Գերեզմանոց		Վարդանի ձոր	8.37.5.	604300.88	4315596.06	1210	18-ից-20-րդ դարեր	Պատկերներ՝ 46-47, կմ 23+800
17	Գյուղատեղի	Պուշկաղ	Վարդանի ձոր	8.92.4.	604388.09	4315692.96	1170	18-ից-20-րդ դարեր	Պատկերներ՝ 46-47, կմ 23+800
18	Գյուղատեղի	Լճավաթ	Վարդանի ձոր	8.92.2	605231.11	4314035.99	1068	13-ից-17-րդ դարեր	Պատկերներ՝ 48-49, կմ 26+000
19	Ոռոգման ջրանցք		Լեհվազ	8.37.5.	604310.16	4312421.20	1060	17-ից-18-րդ դարեր	Պատկերներ՝ 48-49, կմ 27+500



20	Գյուղատեղի		Վահրավար	8.88.6.	604548.28	4311786.19	1182	17-ից-18-րդ դարեր	Պատկերներ՝ 48-49, կմ 28+000 – կմ 28+700
21	Գերեզմանոց		Վահրավար	8.88.6.6.1.	604427.93	4311303.47	978	17-ից-18-րդ դարեր	Պատկերներ՝ 48-49, կմ 28+000 – կմ 28+700
22	Գյուղատեղի		Վահրավար	8.88.7.	604255.95	4311303.47	995	17-ից-18-րդ դարեր	Պատկերներ՝ 48-49, կմ 28+000 – կմ 28+700
23	Գյուղատեղի	Լեհվազ	Լեհվազ	8.37.2.	605050.99	4311481.92	914	17-ից-19-րդ դարեր	Պատկերներ՝ 48-49, կմ 28+500 – կմ 28+700
24	Խաչքար	Լեհվազ	Լեհվազ	8.37.2.1.	604998.08	4311270.26	949	17-ից-18-րդ դարեր	Պատկերներ՝ 48-49, կմ 28+500 – կմ 28+700
25	Ջրաղաց		Լեհվազ	8.37.5.	604537.57	4311224.33	970	17-ից-18-րդ դարեր	Պատկերներ՝ 48-49, կմ 28+500 – կմ 28+700
26	Ջրաղաց		Լեհվազ	8.37.4.	605805.06	4310211.92	839	19-րդ դար	Պատկերներ՝ 48-49, կմ 30+050
27	Գյուղատեղի	Փոքր Թաղ	Մեղրի	8.5.2.	607880.79	4305989.86	640	19-ից-20-րդ դարեր	Պատկերներ՝ 50-51, 52-53 կմ 35+200 – կմ 35+600
28	Քարավանատուն		Ագարակ	8.2.7.	605032.51	4301765.32	554	17-րդ դար	Պատկերներ՝ 54-55, կմ 43+027




Պատկեր 36: Ընդհանուր քարտեզ







Պատկեր 37: Ընդհանուր քարտեզ




- Գոյություն ունեցող մայրուղի
- Նախկինում առաջարկված ծրագրի
- Նոր (վերանայված) ծրագրի

- Նախկինում առաջարկված ծրագրի այլընտրանքային լուծույթ
- Թունել






Պատկեր 38: Միավորները (համարներ՝ 1,2,3,4,6) գտնվում են ծրագրին մոտ (0 + 400 կմ - 0 + 500 կմ)






Պատկեր 39: Միավորները (համարներ՝ 1,2,3,4,6) գտնվում են ծրագրին մոտ (0 + 400 կմ - 0 + 500 կմ)








Պատկեր 40: Քաջարան համայնքի երկու միավորները (թիվ 6 և 7), գտնվում են թունելի հատվածի հարևանությամբ






Պատկեր 41: Բաջարան համայնքի երկու միավորները (թիվ 6 և 7), գտնվում են թունելի հատվածի հարևանությամբ








Պատկեր 42: Տաշտուն գյուղի մեկ միավոր (թիվ 8), գտնվում է թունելի հատվածի մոտակայքում՝ 9 + 600 կմ






Պատկեր 43: Տաշտուն գյուղի մեկ միավոր (թիվ 8), գտնվում է թունելի հատվածի մոտակայքում՝ 9 + 600 կմ








Պատկեր 44: Տաշտուն գյուղի մեկ միավոր (թիվ 9), որը հայտնվում է առաջարկվող ճանապարհի անմիջական ազդեցության տակ (14 + 400 կմ - 14 + 500 կմ)






Պատկեր 45: Տաշտուն գյուղի մեկ միավոր (թիվ 9), որը հայտնվում է առաջարկվող ճանապարհի անմիջական ազդեցության տակ (14 + 400 կմ - 14 + 500 կմ)








Պատկեր 46: Լինք գյուղի ցուցակված վայրերի կլաստեր (համարներ 10-14), գտնվում են 18 + 000 կմ - 18 + 800 կմ միջակայքում






Պատկեր 47: Լիճք գյուղի ցուցակված վայրերի կլաստեր (համարներ 10-14), գտնվում են 18 + 000 կմ - 18 + 800 կմ միջակայքում








Պատկեր 48: 18 համարը գտնվում է ծրագծերին մոտ (26+000 կմ). Լեհվազ գյուղի մեկ միավոր (թիվ 19) - 27+500 կմ, Վահրավար գյուղի 20-22 համարները - 28+000 կմ-28+700 կմ: Լեհվազ գյուղի 23-րդ և 24-րդ, ինչպես նաև ավելի ուշ 25-րդ համարները (28 + 500 կմ - 28 + 700 կմ)






Պատկեր 49: 18 համարը գտնվում է ծրագծերին մոտ (26+000 կմ). Լեհվազ գյուղի մեկ միավոր (թիվ 19) - 27+500 կմ, Վահրավար գյուղի 20-22 համարները - 28+000 կմ-28+700 կմ: Լեհվազ գյուղի 23-րդ և 24-րդ, ինչպես նաև ավելի ուշ 25-րդ համարները (28 + 500 կմ - 28 + 700 կմ)








Պատկեր 50: Գուղեմուկ գյուղի սահմանները






Պատկեր 51: Գուղեմուկ գյուղի սահմանները








Պատկեր 52: Մեղրի համայնքի շրջանակներում ծրագծերի բոլոր վարկածներն անցնում են Մեղրի քաղաքի Փոքր թաղ (Փոքր շրջան) (թիվ 27) հարավային մասի հարևանությամբ՝ 35 + 200 կմ - 35 + 600 կմ






Պատկեր 53: Մեղրի համայնքի շրջանակներում ծրագծերի բոլոր վարկածներն անցնում են Մեղրի բաղաբի Փոքր թաղ (Փոքր շրջան) (թիվ 27) հարավային մասի հարևանությամբ՝ 35 + 200 կմ - 35 + 600 կմ






Պատկեր 54: Կարճեւան գյուղի մեկ միավոր (թիվ 28) գտնվում է արևելքում՝ ըստ վերջին առաջարկվող ծրագծի (43 + 027 կմ)







Պատկեր 55: Կարճեւան գյուղի մեկ միավոր (թիվ 28) գտնվում է արևելքում ըստ վերջին առաջարկվող ծրագծի (43 + 027 կմ)







## 12. ՀՂՈՒՄՆԵՐ

- ▶ Հայէկոնոմիթորինգ (շրջակա միջավայրի մոնիթորինգի կենտրոն). <http://www.armmonitoring.am/>
- ▶ ՀՀ Շրջակա Միջավայրի Նախարարություն. <http://www.mnp.am>
- ▶ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե. <http://www.minurban.am>
- ▶ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն. <http://www.mtad.am>
- ▶ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով. <http://www.psrc.am/am/sectors/electric/license-companies>
- ▶ ՀՀ ազգային ատլաս, հ. 1: 2007 թ
- ▶ ՀՀ մարզեր և Երևան քաղաք. 2015 թ
- ▶ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն. <http://www.armstat.am>
- ▶ Սյունիքի մարզի պաշտոնական կայք. <http://syunik.mtaes.am/>
- ▶ «Չանգեզուր» կենսոլորտային համալիր. <http://www.zangezurkh.am>
- ▶ Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կայք. <http://www.zcmc.am/eng/>
- ▶ Հարավային ավազանի կառավարման կազմակերպության ամփոփում, 2016 թ
- ▶ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի հարավային հատվածի տեխնիկատնտեսական ուսումնասիրություն, Քաջարան-Ագարակ հատված, 2014 թ.
- ▶ Անվտանգության քաղաքականության հայտարարություն, ԱԶԲ. 2009 թ
- ▶ Հայաստանում անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագիր, 2002 թ